1. Ուժը կորցրած ճանաչել Սևան համայնքի ղեկավարի՝ «Շինարարության թույլտվություն տրամադրելու մասին մասին» 11.07.2022թ. N 692-Ա որոշումը և N 40 շինարարության թույտվությունը:
2. Սույն որոշումն ուժի մեջ է՝ պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻՆ ՓՈԽԱՐԻՆՈՂ՝ ԱՐԹՈՒՐ ՄԱՐԳԱՐՅԱՆ

2023 թվականի հունվարի 24
ք.Սևան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶ
ՍԵՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետություն Գեղարքունիքի մարզ Սևան համայնք
ք. Սևան, Նաիրյան փ. 164, (0261) 2-43-23, 4-00-00, sevan.gegharquniq@mta.gov.am

ՈՐՈՇՈՒՄ

24 հունվարի 2023 թվականի թիվ 69-Ա

ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի 1-ին կետի 24)-րդ ենթակետով, ՀՀ կառավարության՝ 29.12.2005թ. թիվ 2387-Ն որոշմամբ և հիմք ընդունելով ք. Երևան, Ավան, 5-րդ փողոց թիվ 15 տան բնակիչ Ռիմմա Պլուզյանի դիմումը՝ սեփականության իրավունքով իրեն պատկանող, Գեղարքունիքի մարզ, Սևան-Ճամբարակ խճուղի 4,4կմ թիվ 1 շենք, հանգստի սենյակ 1 / 311 հասցեում գտնվող անշարժ գույքի /վկայական՝ 2655991, տրված՝ 21.06.2011թ./ համար նոր հասցե տրամադրելու մասին, **որոշում եմ.**

1. Գեղարքունիքի մարզ, Սևան-Ճամբարակ խճուղի 4,4կմ թիվ 1 շենք, հանգստի սենյակ 1 / 311 հասցեում գտնվող անշարժ գույքի համար տրամադրել Սևան համայնք, գ. Ծովագյուղ, Ծովագյուղ-Ճամբարակ խճուղի, 1 շենք, 1 / 311 տարածք հասցե:
2. Սույն որոշումը հիմք է պետական գրանցում ստանալու համար:
3. Սույն որոշումն ուժի մեջ է՝ Ռիմմա Պլուզյանին սույն որոշման ընդունման մասին իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻՆ ՓՈԽԱՐԻՆՈՂ՝ ԱՐԹՈՒՐ ՄԱՐԳԱՐՅԱՆ

2023 թվականի հունվարի 24
ք.Սևան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶ
ՍԵՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետություն Գեղարքունիքի մարզ Սևան համայնք
ք. Սևան, Նաիրյան փ. 164, (0261) 2-43-23, 4-00-00, sevan.gegharquniq@mta.gov.am

ՈՐՈՇՈՒՄ

24 հունվարի 2023 թվականի թիվ 70-Ա

ԻՆՔՆԱԿԱՄ ԿԱՏԱՐՎԱԾ ՇԻՆԱՐԱՐԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐՆ ՕՐԻՆԱԿԱՆ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի 1-ին կետի 24)-րդ ենթակետով, ՀՀ Քաղաքացիական օրենսգրքի 188-րդ հոդվածի 4-րդ կետով, 18.05.2006թ. թիվ 912-Ն որոշման 8-րդ, 8.1-րդ 9-րդ, 11-րդ, 18-րդ կետերով, հիմք ընդունելով Գեղարքունիքի մարզ, գ. Լճաշեն, 2-րդ փողոց, 1-ին նրբանցք, 1-ին փակուղի թիվ 2 տան բնակիչ Արսեն Սանամյանի դիմումը՝ սեփականության իրավունքով Համլետ Սանամյանին, Փառանձիմ Ավետիսյանին և Արսեն Սանամյանին պատկանող, Սևան համայնք, գ. Լճաշեն, 2-րդ փողոց, 25 հասցեում գտնվող 1160քմ մակերեսով հողատարածքում 48.33քմ մակերեսով ավտոտնակի, 110.25քմ մակերեսով տնտեսական շինության, 10.45քմ մակերեսով ծածկի, 5.12քմ մակերեսով պարսպի կառուցման աշխատանքներն օրինական ճանաչելու մասին, ինչպես նաև հաշվի առնելով, որ կառույցի պահպանումը չի խախտում այլ անձանց իրավունքները և օրենքով պահպանվող շահերը կամ վտանգ չի սպառնում քաղաքացիների կյանքին ու առողջությանը, կառուցված չէ ինժեներատրանսպորտային օբյեկտների օտարման կամ անվտանգության գոտիներում կամ կառուցված չէ քաղաքաշինական նորմերի ու կանոնների էական խախտումներով և չի առաջացնում հարկադիր սերվիտուտ պահանջելու իրավունք, **որոշում եմ.**

1. Սեփականության իրավունքով Համլետ Եփրեմի Սանամյանին, Փառանձիմ Ավետիսի Ավետիսյանին և Արսեն Համլետի Սանամյանին պատկանող, Սևան համայնք, գ. Լճաշեն,
   2-րդ փողոց, 25 հասցեում գտնվող 1160քմ մակերեսով հողատարածքում 48.33քմ մակերեսով ավտոտնակի /ներքին մակերեսը՝ 37.72քմ/, 110.25քմ մակերեսով տնտեսական շինության /ներքին մակերեսը՝ 91.97քմ/, 10.45քմ մակերեսով ծածկի, 5.12քմ մակերեսով պարսպի կառուցման աշխատանքները ճանաչել օրինական / հաշվառման տեղեկանք՝ 2022BGDBTB/՝ Սևան համայնքի բյուջե մուծելով օրինականացվող բնակելի նշանակության շինությունների յուրաքանչյուր 1քմ՝ 1028դրամ, տնտեսական և օժանդակ շինությունների յուրաքանչյուր 1քմ՝ 616.8դրամ:
2. Սույն որոշման ընդունման օրվանից սահմանված գումարը 60-օրյա ժամկետում չվճարելու դեպքում՝ սույն որոշումը համարվում է ուժը կորցրած:
3. Նկատի ունենալով, որ թույլ է տրվել ինքնակամություն, ուստի ինքնակամ կառույցի օրինականացման, պետական գրանցման, այդ թվում՝ համայնքային սեփականության ճանաչման և գրանցման ծախսերն իրականացվում են ինքնակամ կառույցն իրականացնողի միջոցներով:

4. Սույն որոշմամբ ծագող սեփականության իրավունքը ենթակա է պետական գրանցման:
5. Սույն որոշումն ուժի մեջ է՝ Արսեն Սանամյանին սույն որոշման ընդունման մասին իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻՆ ՓՈԽԱՐԻՆՈՂ՝ ԱՐԹՈՒՐ ՄԱՐԳԱՐՅԱՆ

2023 թվականի հունվարի 24
ք.Սևան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶ
ՍԵՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետություն Գեղարքունիքի մարզ Սևան համայնք
ք. Սևան, Նաիրյան փ. 164, (0261) 2-43-23, 4-00-00, sevan.gegharquniq@mta.gov.am

ՈՐՈՇՈՒՄ

24 հունվարի 2023 թվականի թիվ 71-Ա

ՇԻՆԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 42-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի, Հայաստանի Հանրապետության կառավարության՝ 2015 թվականի մարտի 19-ի N 596-Ն որոշման և հիմք ընդունելով քաղ. Հեղինե Սաֆարյանի դիմումը՝ **որոշում եմ.**

1. Հեղինե Սաֆարյանին տրամադրել շինարարության թույլտվություն Սևան համայնք, ք. Սևան, Գ. Լուսավորիչ փողոց թիվ 2 / 1 հասցեում գտնվող նոր կառուցվող երկհարկանի բնակելի տան և ցանկապատի կառուցման համար:
2. Հեղինե Սաֆարյանը շինարարական աշխատանքներն սկսելուց առնվազն երեք օր առաջ պարտավոր է Սևանի համայնքապետարանին և Հայաստանի Հանրապետության քաղաքաշինության, տեխնիկական և հրդեհային անվտանգության տեսչական մարմնին ներկայացնել N 2-5 ձևի տեղեկանք:
3. Հեղինե Սաֆարյանը պարտավոր է շինարարական աշխատանքներն ավարտելուց հետո՝ բայց ոչ ուշ, քան շինարարության թույլտվության ժամկետը լրանալուց 30 օր առաջ, դիմել Սևան համայնքի ղեկավարին՝ ավարտված շինարարության շահագործումը փաստագրելու համար, հակառակ դեպքում՝ կենթարկվի վարչական պատասխանատվության օրենքով սահմանված կարգով:
4. Սույն որոշումն ուժի մեջ է՝ Հեղինե Սաֆարյանին որոշման ընդունման մասին իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻՆ ՓՈԽԱՐԻՆՈՂ՝ ԱՐԹՈՒՐ ՄԱՐԳԱՐՅԱՆ

2023 թվականի հունվարի 24
ք.Սևան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶ
ՍԵՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետություն Գեղարքունիքի մարզ Սևան համայնք
ք. Սևան, Նաիրյան փ. 164, (0261) 2-43-23, 4-00-00, sevan.gegharquniq@mta.gov.am

ՈՐՈՇՈՒՄ

24 հունվարի 2023 թվականի թիվ 72-Ա

ՍԵՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ՝ 28.09.2022Թ. Ն 1116-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 33-րդ և 34-րդ հոդվածներով՝ **որոշում եմ.**

1. Սևան համայնքի ղեկավարի՝ 28.09.2022թ. «Բնակելի նշանակության շինությունները սեփական գույք ճանաչելու մասին» Ն 1116-Ա որոշման մեջ կատարել հետևյալ փոփոխությունը՝
   1) «արհեստանոցը» բառի փոխարեն կարդալ «տնտեսական շինություն» բառերը:
2. Սույն որոշումն ուժի մեջ է՝ պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻՆ ՓՈԽԱՐԻՆՈՂ՝ ԱՐԹՈՒՐ ՄԱՐԳԱՐՅԱՆ

2023 թվականի հունվարի 24
ք.Սևան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶ
ՍԵՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետություն Գեղարքունիքի մարզ Սևան համայնք
ք. Սևան, Նաիրյան փ. 164, (0261) 2-43-23, 4-00-00, sevan.gegharquniq@mta.gov.am

ՈՐՈՇՈՒՄ

24 հունվարի 2023 թվականի թիվ 73-Ա

ՀՈՂԱՏԱՐԱԾՔԻ ԱՃՈՒՐԴ-ՎԱՃԱՌՔԻ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի 1-ին կետի 24)-րդ ենթակետով, ՀՀ Հողային օրենսգրքի 70-րդ հոդվածով, Սևան համայնքի ավագանու՝ 10.03.2022թ. N26-Ա, 27-Ն որոշումներով և հիմք ընդունելով 23.01.2023թ. կայացած աճուրդ-վաճառքի արդյունքների վերաբերյալ կազմված արձանագրությունները՝ **որոշում եմ.**

1. Գեղարքունիքի մարզ, Սևան համայնք, ք. Սևան, գ. Վարսեր, Երևանյան խճուղի թիվ 7 / 1 հողամաս հասցեում գտնվող, ՀՀ Հողային օրենսգրքի 60-րդ հոդվածին չհամապատասխանող, բնակելի նշանակության համար նախատեսված 100.7քմ մակերեսով հողատարածքը, ըստ աճուրդ-վաճառքի արդյունքների՝ 1քմ՝ 811.8 դրամ, օտարել աճուրդում հաղթող ճանաչված, Գեղարքունիքի մարզ, Սևան համայնք, գ. Վարսեր, 1-ին փակուղի, 2-րդ նրբանցք թիվ 8 տան բնակիչ Ռուզաննա Խալիկի Պետրոսյանին:
2. Սակարկությունների ժամանակ ձևավորված գինը գնորդի կողմից 10 օրվա ընթացքում համայնքի բյուջե մուծելու դեպքում՝ վերջինիս հետ կնքել հողամասի օտարման պայմանագիր:
3. Զգուշացնել Ռուզաննա Խալիկի Պետրոսյանին՝ հատկացված տարածքում շինարարական աշխատանքներն սկսել միայն համապատասխան շինարարական փաստաթղթերի փաթեթը համայնքապետարանի հետ համաձայնեցնելուց և շինարարության թույլտվություն ստանալուց հետո:
4. Սույն որոշմամբ ձեռք բերված հողամասի սեփականության իրավունքը ենթակա է պետական գրանցման:
5. Սույն որոշումն ուժի մեջ է՝ պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻՆ ՓՈԽԱՐԻՆՈՂ՝ ԱՐԹՈՒՐ ՄԱՐԳԱՐՅԱՆ

2023 թվականի հունվարի 24
ք.Սևան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶ
ՍԵՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետություն Գեղարքունիքի մարզ Սևան համայնք
ք. Սևան, Նաիրյան փ. 164, (0261) 2-43-23, 4-00-00, sevan.gegharquniq@mta.gov.am

ՈՐՈՇՈՒՄ

24 հունվարի 2023 թվականի թիվ 74-Ա

ՀՈՂԱՏԱՐԱԾՔԻ ԱՃՈՒՐԴ-ՎԱՃԱՌՔԻ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի 1-ին կետի 24)-րդ ենթակետով, ՀՀ Հողային օրենսգրքի 70-րդ հոդվածով, Սևան համայնքի ավագանու՝ 10.03.2022թ. N26-Ա, 27-Ն որոշումներով և հիմք ընդունելով 23.01.2023թ. կայացած աճուրդ-վաճառքի արդյունքների վերաբերյալ կազմված արձանագրությունները՝ **որոշում եմ.**

1. Գեղարքունիքի մարզ, Սևան համայնք, ք. Սևան, գ. Վարսեր, Երևանյան խճուղի 7 / 2 հողամաս հասցեում գտնվող, ՀՀ Հողային օրենսգրքի 60-րդ հոդվածին չհամապատասխանող, բնակելի նշանակության համար նախատեսված 83.6 քմ մակերեսով հողատարածքը, ըստ աճուրդ-վաճառքի արդյունքների՝ 1քմ՝ 831.6 դրամ, օտարել աճուրդում հաղթող ճանաչված, Գեղարքունիքի մարզ, Սևան համայնք, գ. Վարսեր, 1-ին փակուղի, 2-րդ նրբանցք թիվ 8 տան բնակիչ Ռուզաննա Խալիկի Պետրոսյանին:
2. Սակարկությունների ժամանակ ձևավորված գինը գնորդի կողմից 10 օրվա ընթացքում համայնքի բյուջե մուծելու դեպքում՝ վերջինիս հետ կնքել հողամասի օտարման պայմանագիր:
3. Զգուշացնել Ռուզաննա Խալիկի Պետրոսյանին՝ հատկացված տարածքում շինարարական աշխատանքներն սկսել միայն համապատասխան շինարարական փաստաթղթերի փաթեթը համայնքապետարանի հետ համաձայնեցնելուց և շինարարության թույլտվություն ստանալուց հետո:
4. Սույն որոշմամբ ձեռք բերված հողամասի սեփականության իրավունքը ենթակա է պետական գրանցման:
5. Սույն որոշումն ուժի մեջ է՝ պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻՆ ՓՈԽԱՐԻՆՈՂ՝ ԱՐԹՈՒՐ ՄԱՐԳԱՐՅԱՆ

2023 թվականի հունվարի 24
ք.Սևան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶ
ՍԵՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետություն Գեղարքունիքի մարզ Սևան համայնք
ք. Սևան, Նաիրյան փ. 164, (0261) 2-43-23, 4-00-00, sevan.gegharquniq@mta.gov.am

ՈՐՈՇՈՒՄ

24 հունվարի 2023 թվականի թիվ 75-Ա

ՀՈՂԱՏԱՐԱԾՔԻ ԱՃՈՒՐԴ-ՎԱՃԱՌՔԻ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի 1-ին կետի 24)-րդ ենթակետով, ՀՀ Հողային օրենսգրքի 70-րդ հոդվածով, Սևան համայնքի ավագանու՝ 10.03.2022թ. N26-Ա, 27-Ն որոշումներով և հիմք ընդունելով 23.01.2023թ. կայացած աճուրդ-վաճառքի արդյունքների վերաբերյալ կազմված արձանագրությունները՝ **որոշում եմ.**

1. Գեղարքունիքի մարզ, Սևան համայնք, ք. Սևան, Հրազդան փողոց թիվ 42 / 72 հողամաս հասցեում գտնվող, ՀՀ Հողային օրենսգրքի 60-րդ հոդվածին չհամապատասխանող, բնակելի նշանակության համար նախատեսված 33.8 քմ մակերեսով հողատարածքը, ըստ աճուրդ-վաճառքի արդյունքների՝ 1քմ՝ 3031.86 դրամ, օտարել աճուրդում հաղթող ճանաչված, ք. Սևան, Նալբանդյան փողոց թիվ 49 / 6 բնակարանի բնակիչ Կարինե Հայկարամի Կարապետյանին:
2. Սակարկությունների ժամանակ ձևավորված գինը գնորդի կողմից 10 օրվա ընթացքում համայնքի բյուջե մուծելու դեպքում՝ վերջինիս հետ կնքել հողամասի օտարման պայմանագիր:
3. Զգուշացնել Կարինե Հայկարամի Կարապետյանին՝ հատկացված տարածքում շինարարական աշխատանքներն սկսել միայն համապատասխան շինարարական փաստաթղթերի փաթեթը համայնքապետարանի հետ համաձայնեցնելուց և շինարարության թույլտվություն ստանալուց հետո:
4. Սույն որոշմամբ ձեռք բերված հողամասի սեփականության իրավունքը ենթակա է պետական գրանցման:
5. Սույն որոշումն ուժի մեջ է՝ պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻՆ ՓՈԽԱՐԻՆՈՂ՝ ԱՐԹՈՒՐ ՄԱՐԳԱՐՅԱՆ

2023 թվականի հունվարի 24
ք.Սևան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶ
ՍԵՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետություն Գեղարքունիքի մարզ Սևան համայնք
ք. Սևան, Նաիրյան փ. 164, (0261) 2-43-23, 4-00-00, sevan.gegharquniq@mta.gov.am

ՈՐՈՇՈՒՄ

24 հունվարի 2023 թվականի թիվ 76-Ա

ՍԵՓԱԿԱՆ ԳՈՒՅՔ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի 1-ին կետի 24)-րդ ենթակետով, 28.06.2008թ. ՀՕ-117-Ն օրենքի 1-ին և 2-րդ հոդվածներով, ՀՀ կառավարության՝ 18.05.2006թ. թիվ 912-Ն որոշման, ՀՀ կառավարության՝ 29.12.2005թ. թիվ 2387-Ն որոշմամբ և հիմք ընդունելով Հայկուշ Մարգարյանի դիմումը՝ սեփականաշնորհման հանձնաժողովի՝ 14.04.1991թ. թիվ 10 որոշմամբ իրենց հատկացված, Գեղարքունիքի մարզ, Սևան համայնք, գ. Լճաշեն 1-ին փողոց 52 հասցեում գտնվող անհատական բնակելի տան կառուցման համար նախատեսված 500քմ մակերեսով հողատարածքը և մինչև 2001թ. մայիսի 15-ը կառուցված բնակելի նշանակության շինությունները սեփական գույք ճանաչելու մասին, ինչպես նաև նկատի ունենալով, որ դրանք չեն գտնվում ՀՀ Հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով սահմանված հողամասերի վրա, որոնց պահպանումը չի խախտում այլ անձանց իրավունքները և օրենքով պահպանվող շահերը կամ վտանգ չի սպառնում քաղաքացիների կյանքին ու առողջությանը, կառուցված չեն ինժեներատրանսպորտային օբյեկտների օտարման կամ անվտանգության գոտիներում կամ կառուցված չեն քաղաքաշինական նորմերի ու կանոնների էական խախտումներով և չեն առաջացնում հարկադիր սերվիտուտ պահանջելու իրավունք, **որոշում եմ.**

1. Սեփականաշնորհման հանձնաժողովի՝ 14.04.1991թ. թիվ 10 որոշմամբ Հայկուշ Սոսինի Մարգարյանին /ծնված՝ 25.03.1937թ./, Արամ Մոլոտի Մարգարյանին / ծնված՝ 06.05.1966թ./ անհատական բնակելի տան կառուցման և սպասարկման համար հատկացված 500քմ մակերեսով հողատարածքին կից գտնվող 140.9քմ մակերեսով հողատարածքի նկատմամբ ճանաչել Հայկուշ և Արամ Մարգարյանների սեփականության իրավունքը՝ տրամադրելով Սևան համայնք, գ. Լճաշեն, 1-ին փողոց թիվ 52 բնակելի տուն հասցե:
2. Սեփականության իրավունքով Հայկուշ Սոսինի Մարգարյանին և Արամ Մոլոտի Մարգարյանին պատկանող, Սևան համայնք, գ. Լճաշեն 1-ին փողոց թիվ 52 հասցեում գտնվող անհատական բնակելի տան կառուցման և սպասարկման համար նախատեսված 640.9քմ մակերեսով հողատարածքում 1968թ. կառուցված 27.92քմ մակերեսով նկուղը /ներքին մակերեսը՝22.05քմ/, 140.1քմ մակերեսով բնակելի տունը /ներքին մակերեսը՝108.61քմ/, 47.42քմ մակերեսով անասնաշենքը /ներքին մակերեսը՝32.84քմ/, 5.53քմ մակերեսով կաթսայատունը /ներքին մակերեսը՝4.58քմ/, 55.69քմ մակերեսով ձեղնահարկը /ներքին մակերեսը՝36.05քմ/, 6.37քմ մակերեսով պարիսպը, 9.12քմ մակերեսով աստիճանահարթակը ճանաչել Հայկուշ և Արամ Մարգարյանների սեփական գույքը:

3. Սևան համայնք, գ. Լճաշեն, 1-ին փողոց թիվ 52 հասցեում գտնվող, սեփականության իրավունքով Հայկուշ և Արամ Մարգարյաններին պատկանող 640.9քմ հողատարածքում 2011թ. կառուցված 13.82քմ մակերեսով տնտեսական շինությունը /ներքին մակերեսը՝ 9.3քմ/ և 69.44 քմ մակերեսով ծածկը ճանաչել ինքնակամ:
4. Սույն որոշումն ուժի մեջ է՝ Հայկուշ և Արամ Մարգարյաններին սույն որոշման ընդունման մասին իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻՆ ՓՈԽԱՐԻՆՈՂ՝ ԱՐԹՈՒՐ ՄԱՐԳԱՐՅԱՆ

2023 թվականի հունվարի 24
ք.Սևան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶ
ՍԵՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետություն Գեղարքունիքի մարզ Սևան համայնք
ք. Սևան, Նաիրյան փ. 164, (0261) 2-43-23, 4-00-00, sevan.gegharquniq@mta.gov.am

ՈՐՈՇՈՒՄ

25 հունվարի 2023 թվականի թիվ 77-Ա

ՍԵՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ՝ 21.11.2022Թ. N 1377-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 33-րդ և 34-րդ հոդվածները՝**որոշում եմ.**

1. Սևան համայնքի ղեկավարի՝ 21.11.2022թ. «Ինքնակամ կառուցված շինությունն օրինականացնելու մասին» N1377-Ա որոշման մեջ կատարել հետևյալ փոփոխությունը՝
1) «Հողամասի գործառնական նշանակությունը համարել փոփոխված՝ բնակավայրի ընդհանուրից՝ բնակավայրի հասարակական կառուցապատման» բառերի փոխարեն կարդալ հետևյալ բառերը «փոխելով հողամասի գործառնական նշանակությունը՝ բնակավայրի ընդհանուրից՝ բնակավայրի բնակելի կառուցապատման» բառերի:
2. Սույն որոշումն ուժի մեջ է՝ պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՍԱՐԳԻՍ ՄՈՒՐԱԴՅԱՆ

2023 թվականի հունվարի 25
ք.Սևան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶ
ՍԵՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետություն Գեղարքունիքի մարզ Սևան համայնք
ք. Սևան, Նաիրյան փ. 164, (0261) 2-43-23, 4-00-00, sevan.gegharquniq@mta.gov.am

ՈՐՈՇՈՒՄ

25 հունվարի 2023 թվականի թիվ 78-Ա

ՍԵՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ՝ 08.12.2022Թ. N 1469-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 33-րդ և 34-րդ հոդվածները՝**որոշում եմ.**

1. Սևան համայնքի ղեկավարի՝ 08.12.2022թ. «Հողատարածքը համայնքային սեփականություն ճանաչելու մասին» N 1469-Ա որոշման մեջ կատարել հետևյալ լրացումը՝

1) «Հողամասը ճանաչել համայնքային սեփականություն» բառերից հետո կարդալ «հողատարածքի գործառնական նշանակությունը համապատասխանեցնել Սևան քաղաքի լրամշակված գլխավոր հատակագծին՝ փոխելով հողամասի գործառնական նշանակությունը՝ բնակավայրի ընդհանուրից՝ բնակավայրի հասարակական կառուցապատման» բառերը:

2. Սույն որոշումն ուժի մեջ է՝ պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՍԱՐԳԻՍ ՄՈՒՐԱԴՅԱՆ

2023 թվականի հունվարի 25
ք.Սևան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶ ՍԵՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետություն Գեղարքունիքի մարզ Սևան համայնք
ք. Սևան, Նաիրյան փ. 164, (0261) 2-43-23, 4-00-00, sevan.gegharquniq@mta.gov.am

ՈՐՈՇՈՒՄ

25 հունվարի 2023 թվականի թիվ 79-Ա

ՀՈՂԱՄԱՍԻ ՍԱՀՄԱՆՆԵՐԻ ՈՒՂՂՄԱՆ ԵՎ ՃԱՆԱՉՄԱՆ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի 1-ին կետի 24)-րդ ենթակետով, ՀՀ կառավարության՝ 29.12.2005թ. թիվ 2387-Ն որոշմամբ և հաշվի առնելով, որ Սևան համայնքի հերթապահ էլ. քարտեզում առկա են անճշտություններ, որի հետևանքով անհրաժեշտություն է առաջացել փոփոխել և հաստատել /ՀՀ ԿԱ ԱԳԿՊԿ-ի կողմից տրված վկայական՝ 31082015-05-0026/՝ սեփականության իրավունքով Կարեն Կոստանյանին պատկանող, Գեղարքունիքի մարզ, համայնք Զովաբեր, 2-րդ փողոց, 3-րդ նրբանցք թիվ 39 հասցեում գտնվող հողատարածքի սահմանները, գծային չափերը, երկրաչափական պատկերը և հիմք ընդունելով որակավորում ունեցող անձի կողմից կատարված չափագրությունների արդյունքները՝ **որոշում եմ.**

1. Ուղղել և հաստատել Գեղարքունիքի մարզ, Զովաբեր համայնք, 2-րդ փողոց, 3-րդ նրբանցք թիվ 39 հասցեում գտնվող հողատարածքի սահմանները, գծային չափերը, երկրաչափական պատկերը:
2. Օրինական ճանաչել / կադաստրային ծածկագիր՝ 05-035-0046-0012-002/ անասնաշենքի քանդման աշխատանքները:
3. Սույն որոշումը հիմք է պետական գրանցում ստանալու համար:
4. Սույն որոշումն ուժի մեջ է՝ պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՍԱՐԳԻՍ ՄՈՒՐԱԴՅԱՆ

2023 թվականի հունվարի 25
ք.Սևան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶ
ՍԵՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետություն Գեղարքունիքի մարզ Սևան համայնք
ք. Սևան, Նաիրյան փ. 164, (0261) 2-43-23, 4-00-00, sevan.gegharquniq@mta.gov.am

ՈՐՈՇՈՒՄ

25 հունվարի 2023 թվականի թիվ 80-Ա

ԽՆԱՄԱԿԱԼՈՒԹՅՈՒՆ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետի, «ՀՀ Քաղաքացիական օրենսգրքի» 33-րդ, 34-րդ, 37-րդ հոդվածների, «ՀՀ Ընտանեկան օրենսգրքի» 42-րդ, 44-րդ, 134-րդ, 135-րդ հոդվածներով, ՀՀ կառավարության՝ 02.06.2016թ. N631-Ն որոշման պահանջներով, հիմք ընդունելով Սևան համայնքի ղեկավարի՝ 11.01.2023թ. N14-Ա որոշումը, նկատի ունենալով, որ ք. Սևան, Խաղաղության փողոց թիվ 2 / 25 հասցեի բնակիչներ, անչափահասներ երեխաներ Անի Արայիկի Ամիրյանը /ծնված՝ 19.12.2009թ., ծննդյան վկայական՝ ԱԲ 043004/ և Մանե Արայիկի Ամիրյանը /ծնված՝ 11.04.2011թ., ծննդյան վկայական՝ ԱԲ 125334/ մնացել են առանց ծնողական խնամքի, երեխաների ծնողները՝ Եթեր Հայկազի Հարությունյանը /ծնված՝ 28.02.1972թ., մահացած՝ 16.06.2022թ., մահվան վկայական՝ ԲԱ 573255/ և Արայիկ Հրաչի Ամիրյանը /ծնված՝ 01.02.1967թ., մահացած՝ 31.12.2022թ., մահվան վկայական՝ ԲԱ 654665/ մահացել են, հաշվի առնելով նաև երեխաների մորաքրոջ Լիլիա Հայկազի Հարությունյանի /ծնված՝ 24.07.1968թ., անձնագիր՝ AN0354209, հաշվառված՝ Սևան համայնք, ք. Սևան, Նալբանդյան փողոց թիվ 26 / 3 հասցեում/ և հորեղբոր Կարեն Հրաչի Ամիրյանի / ծնված՝ 19.11.1971թ., անձնագիր՝ AV0589195, հաշվառված՝ ք. Երևան, Միկոյան փողոց թիվ 25 / 6 հասցեում /՝ դիմումները՝ խնամակալություն սահմանելու մասին, հաշվի առնելով Սևանի համայնքապետարանում 20.01.2023թ. կայացած Սևանի համայնքապետարանի խնամակալության և հոգաբարձության հանձնաժողովի նիստը և նիստի արձանագրությամբ տրված եզրակացությունը, **որոշում եմ.**

1. Խնամակալություն սահմանել առանց ծնողական խնամքի մնացած անչափահաս երեխաներ Անի Արայիկի Ամիրյանի, Մանե Արայիկի Ամիրյանի նկատմամբ և նրանց մորաքրոջը՝ Լիլիա Հայկազի Հարությունյանին ճանաչել նրանց խնամակալ:
2. Պարտավորեցնել խնամակալ Լիլիա Հարությունյանին՝ հոգալ իր խնամարկյալների ապրուստը, ապահովել նրանց խնամքն ու բուժումը, կրթությունը և դաստիրարակությունը, պաշտպանել նրանց իրավունքներն ու շահերը:
3. Սույն որոշումն ուժի մեջ է՝ պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ ՝ ՍԱՐԳԻՍ ՄՈՒՐԱԴՅԱՆ

2023 թվականի հունվարի 25
ք.Սևան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶ
ՍԵՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետություն Գեղարքունիքի մարզ Սևան համայնք
ք. Սևան, Նաիրյան փ. 164, (0261) 2-43-23, 4-00-00, sevan.gegharquniq@mta.gov.am

ՈՐՈՇՈՒՄ

26 հունվարի 2023 թվականի թիվ 81-Ա

ՍԵՎԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ԹԱՓՈՒՐ ՊԱՇՏՈՆՆԵՐ ԶԲԱՂԵՑՆԵԼՈՒ ՀԱՄԱՐ ՄՐՑՈՒԹԱՅԻՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ԿԱԶՄԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Համայնքային ծառայության մասին» ՀՀ օրենքի 13-րդ հոդվածի 2.2 մասով, հիմք ընդունելով Սևան համայնքի ղեկավարի՝ 17.04.2019թ. N213-Ա որոշմամբ սահմանված Հավելված 1-ի 5.1 և 5.4 կետերը՝ **որոշում եմ.**

1. Հաստատել ՀՀ Գեղարքունիքի մարզի Սևանի համայնքապետարանի աշխատակազմի համայնքային ծառայության թափուր պաշտոններ զբաղեցնելու համար 2023թվականի հունվարի 13-ին անցկացվող մրցույթների /ծածկագրեր՝ 3.1-4, 3.1-14/ մրցութային հանձնաժողովի կազմը՝
   1. **Սարգիս Խաժակի Մուրադյան**
      Հաստատությունը՝ **Սևանի համայնքապետարան**
      Պաշտոնը՝ **Սևան համայնքի ղեկավար**
   2. **Պապ Ռոբերտի Պետրոսյան**
      Հաստատությունը՝ **Սևանի համայնքապետարան**
      Պաշտոնը՝ **Սևան համայնքի ղեկավարի խորհրդական**
   3. **Վանիկ Ժորայի Հարությունյան**
      Հաստատությունը՝ **ՀՀ Գեղարքունիքի մարզպետարան**
      Պաշտոնը՝ **ՏԻ և ՀԳՄՀ վարչության պետ**
   4. **Խաժակ Երջանիկի Սուչյան**
      Հաստատությունը՝ **ՀՀ Գեղարքունիքի մարզպետարան**
      Պաշտոնը՝ **ՀԳՄՏՍԳՀ բաժնի պետ**
   5. **Խաչիկ Արտավազդի Թորոսյան**
      Հաստատությունը՝ **Սևան համայնքի ավագանի**
      Պաշտոնը՝ **Սևան համայնքի ավագանու անդամ**
   6. **Գեղամ Սլավիկի Խաչատրյան**
      Հաստատությունը՝ **Գիտական և ուսումնական հաստատությունների ներկայացուցիչներ**
      Պաշտոնը՝ **Տնօրեն**
2. Մրցույթների լիազոր անձ նշանակել Սևանի համայնքապետարանի աշխատակազմի քարտուղար Արմենուհի Ղուկասյանին:
3. Սույն որոշումն ուժի մեջ է՝ ստորագրման պահից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՍԱՐԳԻՍ ՄՈՒՐԱԴՅԱՆ

2023 թվականի հունվարի 26
ք.Սևան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶ
ՍԵՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետություն Գեղարքունիքի մարզ Սևան համայնք
ք. Սևան, Նաիրյան փ. 164, (0261) 2-43-23, 4-00-00, sevan.gegharquniq@mta.gov.am

ՈՐՈՇՈՒՄ

26 հունվարի 2023 թվականի թիվ 82-Ա

ԻՆՔՆԱԿԱՄ ԿԱՌՈՒՑՎԱԾ ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆ ՕՐԻՆԱԿԱՆԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի 1-ին կետի 24)-րդ ենթակետով, ՀՀ Քաղաքացիական օրենսգրքի 188-րդ հոդվածի 4-րդ կետով, ՀՀ կառավարության՝ 29.12.2005թ. N2387-Ն, 18.05.2006թ. N731-Ն որոշումներով, ՀՀ կառավարության՝ 18.05.2006թ. թիվ 912-Ն որոշման 3-րդ, 33-րդ կետերով, «Քաղաքաշինության մասին» ՀՀ օրենքի 14^3 հոդվածով, հիմք ընդունելով ք. Սևան, Նաիրյան փողոց թիվ 150 / 22 բնակարանի բնակիչ Սամվել Հակոբյանի դիմումը՝ ք. Սևան, Նաիրյան փողոցի թիվ 187 շենքի հյուսիսային հատվածում՝ ավտոտնակների շարքում, համայնքային սեփականություն հանդիսացող հողատարածքի վրա իր կողմից ինքնակամ կառուցված 48.11քմ մակերեսով ավտոտնակն օրինականացնելու մասին, ինչպես նաև հաշվի առնելով, որ շինությունը կառուցված է համայնքային սեփականություն հանդիսացող հողատարածքի վրա, որի նկատմամբ ՀՀ Հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով սահմանված սահմանափակումներ չկան, որ կառույցի պահպանումը չի խախտում այլ անձանց իրավունքները և օրենքով պահպանվող շահերը կամ վտանգ չի սպառնում քաղաքացիների կյանքին ու առողջությանը, կառուցված չէ ինժեներատրանսպորտային օբյեկտների օտարման կամ անվտանգության գոտիներում կամ կառուցված չէ քաղաքաշինական նորմերի ու կանոնների էական խախտումներով և չի առաջացնում հարկադիր սերվիտուտ պահանջելու իրավունք, **որոշում եմ.**

1. Սամվել Հրաչիկի Հակոբյանի կողմից ք. Սևան, Նաիրյան փողոցի թիվ 187 շենքի հյուսիսային հատվածում՝ ավտոտնակների շարքում, ինքնակամ կառուցված 48.11քմ մակերեսով ավտոտնակը /ներքին մակերեսը՝ 44.05քմ/ և զբաղեցրած 48.11քմ մակերեսով հողատարածքը ճանաչել համայնքային սեփականություն, հողամասի գործառնական նշանակությունը համարել փոփոխված՝ բնակավայրի ընդհանուրից՝ բնակավայրի բնակելի կառուցապատման:
2. Սամվել Հակոբյանի կողմից ինքնակամ կառուցված 48.11քմ մակերեսով ավտոտնակը ճանաչել օրինական /հաշվառման տեղեկանք՝ 20236FVHHB/՝ տրամադրելով Սևան համայնք, ք. Սևան, Նաիրյան փողոց թիվ 187 / 69 ավտոտնակ հասցե:
3. Նկատի ունենալով, որ թույլ է տրվել ինքնակամություն, ուստի ինքնակամ կառույցի օրինականացման, պետական գրանցման, այդ թվում՝ համայնքային սեփականության ճանաչման և գրանցման ծախսերն իրականացվում են ինքնակամ կառույցն իրականացնողի միջոցներով:
4. Սույն որոշմամբ ծագող սեփականության իրավունքը ենթակա է պետական գրանցման:
5. Սույն որոշումն ուժի մեջ է՝ Սամվել Հակոբյանին սույն որոշման ընդունման մասին իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՍԱՐԳԻՍ ՄՈՒՐԱԴՅԱՆ

2023 թվականի հունվարի 26
ք.Սևան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶ
ՍԵՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետություն Գեղարքունիքի մարզ Սևան համայնք
ք. Սևան, Նաիրյան փ. 164, (0261) 2-43-23, 4-00-00, sevan.gegharquniq@mta.gov.am

ՈՐՈՇՈՒՄ

26 հունվարի 2023 թվականի թիվ 83-Ա

ՍԵՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ՝ 03.11.2022Թ. N 1286-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 33-րդ և 34-րդ հոդվածները՝**որոշում եմ.**

1. Սևան համայնքի ղեկավարի՝ 03.11.2022թ. «Հողատարածքը համայնքային սեփականություն ճանաչելու մասին» N1286-Ա որոշման մեջ կատարել հետևյալ փոփոխությունը՝

1) «0.78866հա մակերեսով» բառերի փոխարեն կարդալ «0.66986հա մակերեսով» բառերը:

2. Սույն որոշումն ուժի մեջ է՝ պաշտոնական հրապարակման հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՍԱՐԳԻՍ ՄՈՒՐԱԴՅԱՆ

2023 թվականի հունվարի 26
ք.Սևան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶ
ՍԵՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետություն Գեղարքունիքի մարզ Սևան համայնք
ք. Սևան, Նաիրյան փ. 164, (0261) 2-43-23, 4-00-00, sevan.gegharquniq@mta.gov.am

ՈՐՈՇՈՒՄ

26 հունվարի 2023 թվականի թիվ 84-Ա

ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԻ ՏՆՕՐԻՆՄԱՆ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի 1-ին կետի 24)-րդ ենթակետով, համաձայն ՀՀ Քաղաքացիական օրենսգրքի 188-րդ հոդվածի 2-րդ կետի, ՀՀ կառավարության՝ 18.05.2006թ. «Ինքնակամ կառույցների օրինականացման և տնօրինման կարգը հաստատելու մասին» թիվ 912-Ն որոշման 34-36 կետերի պահանջների, հաշվի առնելով քաղ. Անդրանիկ Շխոյանի դիմումը՝ Սևան համայնք, ք. Սևան, Նաիրյան փողոց թիվ 4 / 70 հասցեում կառուցված 35.44քմ մակերեսով ավտոտնակը և զբաղեցրած 35.44քմ մակերեսով հողատարածքն ուղղակի գործարքով իրեն վաճառելու մասին, ինչպես նաև նկատի ունենալով, որ զբաղեցրած հողատարածքը ՀՀ Հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով սահմանված հողատեսք չի հանդիսանում, **որոշում եմ.**

1. Սևան համայնք, ք. Սևան, Նաիրյան փողոց թիվ 4 / 70 հասցեում գտնվող, Սևան համայնքի ղեկավարի՝ 08.12.2022թ. թիվ 1472-Ա որոշմամբ օրինական և համայնքային սեփականություն ճանաչված, 23.01.2023 պետական գրանցում ստացած 35.44քմ մակերեսով ավտոտնակը՝ 1քմ՝ 1969դրամ, զբաղեցրած 35.44քմ մակերեսով հողատարածքը՝ 1քմ՝ 4441.8դրամ, ուղղակի գործարքի միջոցով վաճառել ՀՀ կառավարության՝ 18.05.2006թ. թիվ 912-Ն որոշման 34-րդ կետով սահմանված գնման նախապատվությունը ստանալուց հետո՝ 15 աշխատանքային օրվա ընթացքում համապատասխան դիմում ներկայացրած ք. Սևան, Նաիրյան փողոց թիվ 3 / 34 բնակարանի բնակիչ Անդրանիկ Շխոյանին:
2. Քաղ. Անդրանիկ Շխոյանի հետ կնքել առուվաճառքի պայմանագիր և սահմանել, որ առուվաճառքի հետ կապված ծախսերն իրականացվում են գնորդի հաշվին:
3. Սույն որոշմամբ ծագող սեփականության իրավունքը ենթակա է պետական գրանցման:
4. Սույն որոշումն ուժի մեջ է՝ Անդրանիկ Շխոյանին սույն որոշման ընդունման մասին իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՍԱՐԳԻՍ ՄՈՒՐԱԴՅԱՆ

2023 թվականի հունվարի 26
ք.Սևան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶ
ՍԵՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետություն Գեղարքունիքի մարզ Սևան համայնք
ք. Սևան, Նաիրյան փ. 164, (0261) 2-43-23, 4-00-00, sevan.gegharquniq@mta.gov.am

ՈՐՈՇՈՒՄ

27 հունվարի 2023 թվականի թիվ 85-Ա

ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 45-րդ հոդվածի 1-ին կետի 4-րդ ենթակետի, ՀՀ կառավարության՝19.07.2007թ. թիվ 843-Ն որոշման, Սևան համայնքի ավագանու՝ 14.12.2022թ. N108-Ն որոշման 1-ին կետով սահմանված թիվ 1 հավելվածի 10 -րդ կետի ա) ենթակետի և հիմք ընդունելով «Յասաման Լեյք» ՍՊԸ-ի կողմից ներկայացված հայտը՝ **որոշում եմ.**

1. «Յասաման Լեյք» ՍՊԸ-ին / գործունեությունը՝ Սևան համայնք, Ծովագյուղ բնակավայր, Սևան- Դիլիջան մայրուղի 1,5 կմ 1 հասցե / տրամադրել 2023թ. 1-ին եռամսյակի համար՝ հանրային սննդի կազմակերպման և իրացման թույլտվություն՝ Սևան համայնքի բյուջեի 900165101396 հաշվեհամարին վճարելով տեղական տուրք :
2. Սույն որոշումն ուժի մեջ է՝ «Յասաման Լեյք» ՍՊԸ-ին որոշման ընդունման մասին իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՍԱՐԳԻՍ ՄՈՒՐԱԴՅԱՆ

2023 թվականի հունվարի 27
ք.Սևան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶ
ՍԵՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետություն Գեղարքունիքի մարզ Սևան համայնք
ք. Սևան, Նաիրյան փ. 164, (0261) 2-43-23, 4-00-00, sevan.gegharquniq@mta.gov.am

ՈՐՈՇՈՒՄ

27 հունվարի 2023 թվականի թիվ 86-Ա

ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 45-րդ հոդվածի 1-ին կետի 2-րդ ենթակետի, ՀՀ կառավարության՝ 19.07.2007թ. թիվ 843-Ն որոշման, Սևան համայնքի ավագանու՝ 14.12.2022թ. N108-Ն որոշման 1-ին կետով սահմանված թիվ 1 հավելվածի և 7-րդ կետի ա) ենթակետի և հիմք ընդունելով «Յասաման Լեյք» ՍՊԸ-ի կողմից ներկայացված հայտը՝ **որոշում եմ.**

1. «Յասաման Լեյք» ՍՊԸ-ին / գործունեությունը՝ Սևան համայնք, Ծովագյուղ բնակավայր, Սևան-Դիլիջան մայրուղի 1,5 կմ 1 հասցե / տրամադրել 2023թ. 1-ին եռամսյակի համար՝ ոգելից և ալկոհոլային խմիչքների վաճառքի թույլտվություն՝ Սևան համայնքի բյուջեի 900165101354 հաշվեհամարին վճարելով տեղական տուրք:
2. Սույն որոշումն ուժի մեջ է՝ «Յասաման Լեյք» ՍՊԸ -ին որոշման ընդունման մասին իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՍԱՐԳԻՍ ՄՈՒՐԱԴՅԱՆ

2023 թվականի հունվարի 27
ք.Սևան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶ
ՍԵՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետություն Գեղարքունիքի մարզ Սևան համայնք
ք. Սևան, Նաիրյան փ. 164, (0261) 2-43-23, 4-00-00, sevan.gegharquniq@mta.gov.am

ՈՐՈՇՈՒՄ

27 հունվարի 2023 թվականի թիվ 87-Ա

ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի 1-ին կետի 24)-րդ ենթակետով, ՀՀ կառավարության՝ 29.12.2005թ. թիվ 2387-Ն որոշմամբ և հիմք ընդունելով Գեղարքունիքի մարզ, գ. Դդմաշեն, 9-րդ փողոց թիվ 41 տան բնակիչ Գուրգեն Հովհաննիսյանի դիմումը՝ Գեղարքունիքի մարզ, գ. Դդմաշեն հասցեում գտնվող տնամերձի / կադաստրային ծածկագիր՝ 05-030-0041-0001/ համար նոր հասցե տրամադրելու մասին, **որոշում եմ.**

1. Գեղարքունիքի մարզ, գ. Դդմաշեն հասցեում գտնվող տնամերձի համար տրամադրել Սևան համայնք, գ. Դդմաշեն, 9-րդ փողոց թիվ 39 / 2 անասնաշենք հասցե:
2. Սույն որոշումը հիմք է պետական գրանցում ստանալու համար:
3. Սույն որոշումն ուժի մեջ է՝ Գուրգեն Հովհաննիսյանին սույն որոշման ընդունման մասին իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՍԱՐԳԻՍ ՄՈՒՐԱԴՅԱՆ

2023 թվականի հունվարի 27
ք.Սևան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶ
ՍԵՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետություն Գեղարքունիքի մարզ Սևան համայնք
ք. Սևան, Նաիրյան փ. 164, (0261) 2-43-23, 4-00-00, sevan.gegharquniq@mta.gov.am

ՈՐՈՇՈՒՄ

27 հունվարի 2023 թվականի թիվ 88-Ա

ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի 1-ին կետի 24)-րդ ենթակետով, ՀՀ կառավարության՝ 29.12.2005թ. թիվ 2387-Ն որոշմամբ և հիմք ընդունելով Գեղարքունիքի մարզ, գ. Դդմաշեն, 9-րդ փողոց թիվ 41 տան բնակիչ Գուրգեն Հովհաննիսյանի դիմումը՝ Գեղարքունիքի մարզ, գ. Դդմաշեն հասցեում գտնվող տնամերձի /կադաստրային ծածկագիր՝ 05-030-0020-0033/ համար նոր հասցե տրամադրելու մասին, **որոշում եմ.**

1. Գեղարքունիքի մարզ, գ. Դդմաշեն հասցեում գտնվող տնամերձի համար տրամադրել Սևան համայնք, գ. Դդմաշեն, 9-րդ փողոց թիվ 41 բնակելի տուն հասցե:
2. Սույն որոշումը հիմք է պետական գրանցում ստանալու համար:
3. Սույն որոշումն ուժի մեջ է՝ Գուրգեն Հովհաննիսյանին սույն որոշման ընդունման մասին իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՍԱՐԳԻՍ ՄՈՒՐԱԴՅԱՆ

2023 թվականի հունվարի 27
ք.Սևան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶ
ՍԵՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետություն Գեղարքունիքի մարզ Սևան համայնք
ք. Սևան, Նաիրյան փ. 164, (0261) 2-43-23, 4-00-00, sevan.gegharquniq@mta.gov.am

ՈՐՈՇՈՒՄ

27 հունվարի 2023 թվականի թիվ 89-Ա

ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի 1-ին կետի 24)-րդ ենթակետով, ՀՀ կառավարության՝ 29.12.2005թ. թիվ 2387-Ն որոշմամբ և հիմք ընդունելով Գեղարքունիք մարզ, գ. Գեղամավան, 2-րդ փողոց, 3-րդ նրբանցք թիվ 3 տան բնակիչ Էլմիրա Հակոբյանի դիմումը՝ ըստ օրենքի ժառանգության իրավունքի վկայագրի իրեն պատկանող, Գեղարքունիքի մարզ, Գեղամավան հասցեում գտնվող անշարժ գույքի համար նոր հասցե տրամադրելու մասին, **որոշում եմ.**

1. Գեղարքունիքի մարզ, Գեղամավան հասցեում գտնվող անշարժ գույքի համար տրամադրել Սևան համայնք, գ. Գեղամավան, 3-րդ փողոց, 5-րդ նրբանցք թիվ 3 բնակելի տուն հասցե:
2. Սույն որոշումը հիմք է պետական գրանցում ստանալու համար:
3. Սույն որոշումն ուժի մեջ է՝ Էլմիրա Հակոբյանին սույն որոշման ընդունման մասին իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՍԱՐԳԻՍ ՄՈՒՐԱԴՅԱՆ

2023 թվականի հունվարի 27
ք.Սևան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶ
ՍԵՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետություն Գեղարքունիքի մարզ Սևան համայնք
ք. Սևան, Նաիրյան փ. 164, (0261) 2-43-23, 4-00-00, sevan.gegharquniq@mta.gov.am

ՈՐՈՇՈՒՄ

27 հունվարի 2023 թվականի թիվ 90-Ա

ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի 1-ին կետի 24)-րդ ենթակետով, ՀՀ կառավարության՝ 29.12.2005թ. թիվ 2387-Ն որոշմամբ և հիմք ընդունելով Գեղարքունիք մարզ, գ. Գեղամավան, 2-րդ փողոց, 1-ին նրբանցք թիվ 80 տան բնակիչ Լյովա Դավթյանի դիմումը՝ սեփականաշնորհման հանձնաժողովի՝ 10.02.1991թ. թիվ 1 որոշմամբ սեփականաշնորհված, Գեղամավան համայնք հասցեում գտնվող հողամասի համար նոր հասցե տրամադրելու մասին, **որոշում եմ.**

1. Գեղամավան համայնք հասցեում գտնվող անշարժ գույքի համար տրամադրել Սևան համայնք, գ. Գեղամավան, 2-րդ փողոց, 12-րդ նրբանցք, 1-ին փակուղի թիվ 11 հողամաս հասցե:
2. Սույն որոշումը հիմք է պետական գրանցում ստանալու համար:
3. Սույն որոշումն ուժի մեջ է՝ Լյովա Դավթյանին սույն որոշման ընդունման մասին իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՍԱՐԳԻՍ ՄՈՒՐԱԴՅԱՆ

2023 թվականի հունվարի 27
ք.Սևան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶ
ՍԵՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետություն Գեղարքունիքի մարզ Սևան համայնք
ք. Սևան, Նաիրյան փ. 164, (0261) 2-43-23, 4-00-00, sevan.gegharquniq@mta.gov.am

ՈՐՈՇՈՒՄ

27 հունվարի 2023 թվականի թիվ 91-Ա

ՍԵՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ՝ 09.08.2021Թ. Ն 637-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 33-րդ և 34-րդ հոդվածները՝**որոշում եմ.**

1. Սևան համայնքի ղեկավարի՝ 09.08.2021թ. «Սեփական գույք ճանաչելու մասին» 637-Ա որոշման մեջ կատարել հետևյալ լրացումը՝
1) «սեփական գույքը» բառերից հետո կարդալ «տրամադրելով Սևան համայնք, ք. Սևան, Հ. Բաբաջանյան փողոց թիվ 18 բնակելի տուն» բառերը:
2. Սույն որոշումն ուժի մեջ է՝ պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՍԱՐԳԻՍ ՄՈՒՐԱԴՅԱՆ

2023 թվականի հունվարի 27
ք.Սևան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶ
ՍԵՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետություն Գեղարքունիքի մարզ Սևան համայնք
ք. Սևան, Նաիրյան փ. 164, (0261) 2-43-23, 4-00-00, sevan.gegharquniq@mta.gov.am

ՈՐՈՇՈՒՄ

27 հունվարի 2023 թվականի թիվ 92-Ա

ԻՆՔՆԱԿԱՄ ԿԱՌՈՒՑՎԱԾ ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆ ՕՐԻՆԱԿԱՆԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի 1-ին կետի 24)-րդ ենթակետով, ՀՀ Քաղաքացիական օրենսգրքի 188-րդ հոդվածի 4-րդ կետով, ՀՀ կառավարության՝ 29.12.2005թ. N 2387-Ն, 18.05.2006թ. N 731-Ն որոշումներով, ՀՀ կառավարության՝ 18.05.2006թ. թիվ 912-Ն որոշման 3-րդ, 33-րդ կետերով, «Քաղաքաշինության մասին» ՀՀ օրենքի 14^3 հոդվածով, հիմք ընդունելով ք. Սևան, Նաիրյան փողոց թիվ 177 / 4 բնակարանի բնակիչ Նաիրա Ահարոնյանի դիմումը՝ ք. Սևան, Խաղաղության փողոցի թիվ 9 շենքի հյուսիսային հատվածում՝ ավտոտնակների շարքում, համայնքային սեփականություն հանդիսացող հողատարածքի վրա իր կողմից ինքնակամ կառուցված 23.52քմ մակերեսով ավտոտնակն օրինականացնելու մասին, ինչպես նաև հաշվի առնելով, որ շինությունը կառուցված է համայնքային սեփականություն հանդիսացող հողատարածքի վրա, որի նկատմամբ ՀՀ Հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով սահմանված սահմանափակումներ չկան, որ կառույցի պահպանումը չի խախտում այլ անձանց իրավունքները և օրենքով պահպանվող շահերը կամ վտանգ չի սպառնում քաղաքացիների կյանքին ու առողջությանը, կառուցված չէ ինժեներատրանսպորտային օբյեկտների օտարման կամ անվտանգության գոտիներում կամ կառուցված չէ քաղաքաշինական նորմերի ու կանոնների էական խախտումներով և չի առաջացնում հարկադիր սերվիտուտ պահանջելու իրավունք, **որոշում եմ.**

1. Նաիրա Հենրիկի Ահարոնյանի կողմից ք. Սևան, Խաղաղության փողոցի թիվ 9 շենքի հյուսիսային հատվածում՝ ավտոտնակների շարքում, ինքնակամ կառուցված 23.52քմ մակերեսով ավտոտնակը /ներքին մակերեսը՝ 22.69քմ/, 19.78քմ մակերեսով նկուղը /ներքին մակերեսը՝ 17.12քմ/, զբաղեցրած 23.52քմ մակերեսով հողատարածքը ճանաչել համայնքային սեփականություն, հողամասի գործառնական նշանակությունը համարել փոփոխված՝ բնակավայրի ընդհանուրից՝ բնակավայրի բնակելի կառուցապատման:
2. Նաիրա Ահարոնյանի կողմից ինքնակամ կառուցված 23.52քմ մակերեսով ավտոտնակը ճանաչել օրինական /հաշվառման տեղեկանք՝ 2023WVPUTS/՝ տրամադրելով Սևան համայնք, ք. Սևան, Խաղաղության փողոց թիվ 9 / 7 ավտոտնակ հասցե:
3. Նկատի ունենալով, որ թույլ է տրվել ինքնակամություն, ուստի ինքնակամ կառույցի օրինականացման, պետական գրանցման, այդ թվում՝ համայնքային սեփականության ճանաչման և գրանցման ծախսերն իրականացվում են ինքնակամ կառույցն իրականացնողի միջոցներով:
4. Սույն որոշմամբ ծագող սեփականության իրավունքը ենթակա է պետական գրանցման:
5. Սույն որոշումն ուժի մեջ է՝ Նաիրա Ահարոնյանին սույն որոշման ընդունման մասին իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՍԱՐԳԻՍ ՄՈՒՐԱԴՅԱՆ

2023 թվականի հունվարի 27
ք.Սևան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶ
ՍԵՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետություն Գեղարքունիքի մարզ Սևան համայնք
ք. Սևան, Նաիրյան փ. 164, (0261) 2-43-23, 4-00-00, sevan.gegharquniq@mta.gov.am

ՈՐՈՇՈՒՄ

27 հունվարի 2023 թվականի թիվ 93-Ա

ԻՆՔՆԱԿԱՄ ԿԱՏԱՐՎԱԾ ՇԻՆԱՐԱՐԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐՆ ՕՐԻՆԱԿԱՆ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի 1-ին կետի 24)-րդ ենթակետով, ՀՀ Քաղաքացիական օրենսգրքի 188-րդ հոդվածի 4-րդ կետով, 18.05.2006թ. N 912-Ն որոշման 9-րդ, 11-րդ և 18-րդ կետերով. ՀՀ կառավարության՝29.12.2005թ. թիվ 2387-Ն որոշմամբ և հիմք ընդունելով ք. Սևան, Չարենցի փողոց թիվ 100 տան բնակիչ Ռուզաննա Սողոմոնյանի դիմումը՝ սեփականության իրավունքով իրեն պատկանող, Սևան համայնք, ք. Սևան, Խաղաղության փողոց թիվ 16 / 41, 42 հասցեում գտնվող հողատարածքում առանց համապատասխան փաստաթղթերի 90.6քմ մակերեսով ավտոտեխսպասարկման կետի կառուցման աշխատանքներն օրինականացնելու մասին, ինչպես նաև նկատի ունենալով, որ կատարված շինարարական աշխատանքների պահպանումը չի խախտում այլ անձանց իրավունքները և օրենքով պահպանվող շահերը, վտանգ չի սպառնում քաղաքացիների կյանքին ու առողջությանը, կառուցված չի քաղաքաշինական նորմերի ու կանոնների էական խախտումներով, չի առաջացնում հարկադիր սերվիտուտ պահանջելու իրավունք, **որոշում եմ.**

1. Սևան համայնք, ք. Սևան, Խաղաղության փողոց թիվ 16 / 41, 42 հասցեում գտնվող, սեփականության իրավունքով Ռուզաննա Ռաֆիկի Սողոմոնյանին պատկանող 125.4քմ մակերեսով հողատարածքում 90.6քմ մակերեսով ավտոտեխսպասարկման կետի կառուցման աշխատանքները ճանաչել օրինական՝ տրամադրելով Սևան համայնք, ք. Սևան, Խաղաղության փողոց թիվ 16 / 44 ավտոտեխսպասարկման կետ հասցե / հաշվառման տեղեկանք՝ 20226VRMS3 /, Սևան համայնքի բյուջե մուծելով օրինականացվող շինությունների յուրաքանչյուր 1քմ-ի համար 3938 դրամ:
2. Սույն որոշման ընդունման օրվանից սահմանված գումարը 60-օրյա ժամկետում չվճարելու դեպքում՝ սույն որոշումը համարվում է ուժը կորցրած:
3. Սույն որոշմամբ ծագող սեփականության իրավունքը ենթակա է պետական գրանցման:
4. Սույն որոշումն ուժի մեջ է՝ Ռուզաննա Սողոմոնյանին սույն որոշման ընդունման մասին իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՍԱՐԳԻՍ ՄՈՒՐԱԴՅԱՆ

2023 թվականի հունվարի 27
ք.Սևան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶ
ՍԵՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետություն Գեղարքունիքի մարզ Սևան համայնք
ք. Սևան, Նաիրյան փ. 164, (0261) 2-43-23, 4-00-00, sevan.gegharquniq@mta.gov.am

ՈՐՈՇՈՒՄ

30 հունվարի 2023 թվականի թիվ 94-Ա

ՆԱԽԱԳԾՄԱՆ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 42-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետի, Հայաստանի Հանրապետության կառավարության՝ 2015 թվականի մարտի 19-ի N 596-Ն որոշման, հիմք ընդունելով «ԼՈՒՍ-ԷԼ» ՍՊԸ-ի տնօրեն Ցոլակ Ղազարյանի հայտը՝ **որոշում եմ.**

1. «ԼՈՒՍ-ԷԼ» ՍՊԸ-ի տնօրեն Ցոլակ Ղազարյանին տրամադրել նախագծման թույլտվություն Սևան համայնք, ք. Սևան, Սայաթ-Նովա փողոց թիվ 19 / 53 հասցեում գտնվող հողամասում նոր կառուցվող բազմաֆունկցիոնալ շինության համար :
2. «ԼՈՒՍ-ԷԼ» ՍՊԸ-ի տնօրեն Ցոլակ Ղազարյանը պարտավոր է նախագծային փաստաթղթերը ներկայացնել համաձայնեցման և ստանալ շինարարության թույլտվություն:
3. Սույն որոշումն ուժի մեջ է՝ «ԼՈՒՍ-ԷԼ» ՍՊԸ-ի տնօրեն Ցոլակ Ղազարյանին որոշման ընդունման մասին իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՍԱՐԳԻՍ ՄՈՒՐԱԴՅԱՆ

2023 թվականի հունվարի 30
ք.Սևան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶ
ՍԵՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետություն Գեղարքունիքի մարզ Սևան համայնք
ք. Սևան, Նաիրյան փ. 164, (0261) 2-43-23, 4-00-00, sevan.gegharquniq@mta.gov.am

ՈՐՈՇՈՒՄ

30 հունվարի 2023 թվականի թիվ 95-Ա

ՆԱԽԱԳԾՄԱՆ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 42-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետի, Հայաստանի Հանրապետության կառավարության՝ 2015 թվականի մարտի 19-ի N 596-Ն որոշման, հիմք ընդունելով Անի Պողոսյանի հայտը՝ **որոշում եմ.**

1. Անի Պողոսյանին տրամադրել նախագծման թույլտվություն Գեղարքունիքի մարզ, Սևան համայնք, ք. Սևան, Մյասնիկյան փողոց թիվ 54 / 1 հասցեում գտնվող հողատարածքում / կադաստրային ծածկագիր՝ 05-004-0213-0004-001/ խարխուլ առանձնատան քանդման, նոր բնակելի տան և ավտոտնակի կառուցման համար:
2. Անի Պողոսյանը պարտավոր է նախագծային փաստաթղթերը ներկայացնել համաձայնեցման և ստանալ շինարարության թույլտվություն:
3. Սույն որոշումն ուժի մեջ է՝ Անի Պողոսյանին որոշման ընդունման մասին իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՍԱՐԳԻՍ ՄՈՒՐԱԴՅԱՆ

2023 թվականի հունվարի 30
ք.Սևան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶ
ՍԵՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետություն Գեղարքունիքի մարզ Սևան համայնք
ք. Սևան, Նաիրյան փ. 164, (0261) 2-43-23, 4-00-00, sevan.gegharquniq@mta.gov.am

ՈՐՈՇՈՒՄ

30 հունվարի 2023 թվականի թիվ 96-Ա

ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի 1-ին կետի 24)-րդ ենթակետով, ՀՀ կառավարության՝ 29.12.2005թ. թիվ 2387-Ն որոշմամբ և հիմք ընդունելով Գեղարքունիքի մարզ, գ. Վարսեր, 3-րդ փողոց, 1 տան բնակիչներ Տաթևիկ Բարսեղյանի և Արայիկ Առաքելյանի դիմումը՝ Գեղարքունիքի մարզ, Վարսեր համայնք, 3-րդ փողոց թիվ 1 / 1 և համայնք Վարսեր 3–րդ փողոց 1 բնակելի տուն հասցեներում գտնվող /վկայականներ՝ 22092020-05-0015, 02092020-05-0052/ անշարժ գույքերը միավորելու և անշարժ գույքի համար նոր հասցե տրամադրելու մասին, **որոշում եմ.**

1. Գեղարքունիքի մարզ, Վարսեր համայնք, 3-րդ փողոց թիվ 1 / 1 և Վարսեր համայնք, 3–րդ փողոց, 1 բնակելի տուն հասցեներում գտնվող անշարժ գույքերը միավորել՝ տրամադրելով Սևան համայնք, գ. Վարսեր, 3-րդ փողոց թիվ 1 բնակելի տուն հասցե:
2. Սույն որոշումը հիմք է պետական գրանցում ստանալու համար:
3. Սույն որոշումն ուժի մեջ է՝ Տաթևիկ Բարսեղյանին և Արայիկ Առաքելյանին սույն որոշման ընդունման մասին իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՍԱՐԳԻՍ ՄՈՒՐԱԴՅԱՆ

2023 թվականի հունվարի 30
ք.Սևան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶ
ՍԵՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետություն Գեղարքունիքի մարզ Սևան համայնք
ք. Սևան, Նաիրյան փ. 164, (0261) 2-43-23, 4-00-00, sevan.gegharquniq@mta.gov.am

ՈՐՈՇՈՒՄ

30 հունվարի 2023 թվականի թիվ 97-Ա

ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի 1-ին կետի 24)-րդ ենթակետով, ՀՀ կառավարության՝ 29.12.2005թ. թիվ 2387-Ն որոշմամբ և հիմք ընդունելով Գեղարքունիքի մարզ, գ. Դդմաշեն, 9-րդ փողոց թիվ 47 տան բնակիչ Տիգրան Բեգլարյանի դիմումը՝ ՀՀ կառավարության՝ 02.02.1999թ. N39-Ն որոշմամբ իրեն սեփականության իրավունքով հատկացված Գեղարքունիքի մարզ, գյուղ Դդմաշեն, ուսուցչի տուն հասցեում գտնվող 2 սենյականոց բնակարանի համար նոր հասցե տրամադրելու մասին, **որոշում եմ.**

1. Գեղարքունիքի մարզ, գյուղ Դդմաշեն, ուսուցչի տուն հասցեում գտնվող 2 սենյականոց բնակարանի համար տրամադրել Սևան համայնք, գ. Դդմաշեն, 1-ին փողոց, 4-րդ նրբանցք, 3 շենք, 8 բնակարան հասցե:
2. Սույն որոշումը հիմք է պետական գրանցում ստանալու համար:
3. Սույն որոշումն ուժի մեջ է՝ Տիգրան Բեգլարյանին սույն որոշման ընդունման մասին իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՍԱՐԳԻՍ ՄՈՒՐԱԴՅԱՆ

2023 թվականի հունվարի 30
ք.Սևան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶ
ՍԵՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետություն Գեղարքունիքի մարզ Սևան համայնք
ք. Սևան, Նաիրյան փ. 164, (0261) 2-43-23, 4-00-00, sevan.gegharquniq@mta.gov.am

ՈՐՈՇՈՒՄ

30 հունվարի 2023 թվականի թիվ 98-Ա

ԳՈՒՄԱՐ ՓՈԽԱՆՑԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 38-րդ հոդվածի 7-րդ և 8-րդ կետերի պահանջներով՝ **որոշում եմ.**

1. Սևան համայնքի 2023թ. բյուջեի ընդհանուր բնույթի ծախսերի հաշվից /բաժին 01, խումբ 6, դաս 1, հոդված 4241/ Սևանի համայնքային սեփականություն հանդիսացող ներքոհիշյալ հասցեների հողատարածքների պետական գրանցման ծառայության արժեքները փոխանցել ՀՀ ԿԿ հաշվեհամարին, իսկ պետական գրանցման պետական տուրքի արժեքը՝ 500-ական դրամ, ՀՀ պետական բյուջե /հոդված 4823/՝
   1) գ. Սեմյոնովկա - 1000 դրամ;
   2) գ. Սեմյոնովկա թիվ 21 - 12500 դրամ:
2. Սույն որոշումն ուժի մեջ է՝ պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՍԱՐԳԻՍ ՄՈՒՐԱԴՅԱՆ

2023 թվականի հունվարի 30
ք.Սևան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶ
ՍԵՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետություն Գեղարքունիքի մարզ Սևան համայնք
ք. Սևան, Նաիրյան փ. 164, (0261) 2-43-23, 4-00-00, sevan.gegharquniq@mta.gov.am

ՈՐՈՇՈՒՄ

31 հունվարի 2023 թվականի թիվ 99-Ա

ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի 1-ին կետի 24)-րդ ենթակետով, ՀՀ կառավարության՝ 29.12.2005թ. թիվ 2387-Ն որոշմամբ և հիմք ընդունելով Գեղարքունիքի մարզ, գ. Դդմաշեն, 5-րդ փողոց թիվ 30 տան բնակիչ Սուրեն Հովհաննիսյանի դիմումը՝ ըստ օրենքի ժառանգության իրավունքի վկայագրի Գեղարքունիքի մարզ, գ. Դդմաշեն հասցեում գտնվող /05-030-0094-0006 կադաստրային ծածկագրով/ տնամերձի համար նոր հասցե տրամադրելու մասին, **որոշում եմ.**

1. Գեղարքունիքի մարզ, գ. Դդմաշեն հասցեում գտնվող տնամերձի համար տրամադրել Սևան համայնք, գ. Դդմաշեն, 5-րդ փողոց թիվ 30 բնակելի տուն հասցե:
2. Սույն որոշումը հիմք է պետական գրանցում ստանալու համար:
3. Սույն որոշումն ուժի մեջ է՝ Սուրեն Հովհաննիսյանին սույն որոշման ընդունման մասին իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՍԱՐԳԻՍ ՄՈՒՐԱԴՅԱՆ

2023 թվականի հունվարի 30
ք.Սևան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶ
ՍԵՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետություն Գեղարքունիքի մարզ Սևան համայնք
ք. Սևան, Նաիրյան փ. 164, (0261) 2-43-23, 4-00-00, sevan.gegharquniq@mta.gov.am

ՈՐՈՇՈՒՄ

31 հունվարի 2023 թվականի թիվ 100-Ա

ՕԳՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՏԿԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի 1-ին կետի 24)-րդ ենթակետով՝ **որոշում եմ.**

1. Համայնքի 2023թվականի բյուջեով նախատեսված / բաժին 10, խումբ 7, դաս 1, հոդված 4729 / օգնությունների գումարից՝ 516.800դրամ, ըստ կից հավելվածի, հատկացնել քաղաքացիներին:
2. Սույն որոշումն ուժի մեջ է՝ պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՍԱՐԳԻՍ ՄՈՒՐԱԴՅԱՆ

2023 թվականի հունվարի 31
ք.Սևան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶ
ՍԵՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետություն Գեղարքունիքի մարզ Սևան համայնք
ք. Սևան, Նաիրյան փ. 164, (0261) 2-43-23, 4-00-00, sevan.gegharquniq@mta.gov.am

ՈՐՈՇՈՒՄ

31 հունվարի 2023 թվականի թիվ 101-Ա

ՍԵՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ՝ 02.08.2022Թ. Ն 800-Ա ՈՐՈՇՈՒՄՆ ՈՒԺԸ ԿՈՐՑՐԱԾ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի 1-ին կետի 24)-րդ ենթակետով, «Նորմատիվ իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 37-րդ հոդվածով՝ **որոշում եմ.**

1. Ուժը կորցրած ճանաչել Սևան համայնքի ղեկավարի՝ «Շինարարության թույլտվություն տրամադրելու մասին մասին» 02.08.2022թ. Ն 800-Ա որոշումը և N45 շինարարության թույտվությունը:
2. Սույն որոշումն ուժի մեջ է՝ պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՍԱՐԳԻՍ ՄՈՒՐԱԴՅԱՆ

2023 թվականի հունվարի 31
ք.Սևան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶ
ՍԵՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետություն Գեղարքունիքի մարզ Սևան համայնք
ք. Սևան, Նաիրյան փ. 164, (0261) 2-43-23, 4-00-00, sevan.gegharquniq@mta.gov.am

ՈՐՈՇՈՒՄ

31 հունվարի 2023 թվականի թիվ 102-Ա

ՍԵՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ՝ 26.12.2022Թ. N 1577-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 33-րդ և 34-րդ հոդվածները՝**որոշում եմ.**

1. Սևան համայնքի ղեկավարի՝ 26.12.2022թ. «Ինքնակամ կատարված շինարարական աշխատանքներն օրինական ճանաչելու մասին» N1577-Ա որոշման մեջ կատարել հետևյալ լրացումը՝
2) Օրինական ճանաչել /կադաստրային ծածկագրեր՝ 05-070-0013-0001-002, 05-070-0013-0001-003/ անասնաշենքի և խորդանոցի քանդման աշխատանքները:
2. Սույն որոշումն ուժի մեջ է՝ պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՍԱՐԳԻՍ ՄՈՒՐԱԴՅԱՆ

2023 թվականի հունվարի 31
ք.Սևան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶ
ՍԵՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետություն Գեղարքունիքի մարզ Սևան համայնք
ք. Սևան, Նաիրյան փ. 164, (0261) 2-43-23, 4-00-00, sevan.gegharquniq@mta.gov.am

ՈՐՈՇՈՒՄ

31 հունվարի 2023 թվականի թիվ 103-Ա

ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի 1-ին կետի 24)-րդ ենթակետով, ՀՀ կառավարության՝ 29.12.2005թ. թիվ 2387-Ն որոշմամբ և հիմք ընդունելով ք. Սևան, Նաիրյան փողոց թիվ 51 տան բնակիչ Աիդա Դադիկյանի դիմումը՝ սեփականության իրավունքով Սևան համայնք, ք. Սևան, Նաիրյան փողոց թիվ 59 / 1 հասցեում գտնվող /վկայական՝ 18012023-05-0029/, բնակելի տան համար նոր հասցե տրամադրելու մասին, **որոշում եմ.**

1. Սևան համայնք, ք. Սևան, Նաիրյան փողոց թիվ 59 / 1 հասցեում գտնվող բնակելի տան համար տրամադրել Սևան համայնք, ք. Սևան, Նաիրյան փողոց թիվ 51 բնակելի տուն հասցե:
2. Սույն որոշումը հիմք է պետական գրանցում ստանալու համար:
3. Սույն որոշումն ուժի մեջ է՝ Աիդա Դադիկյանին սույն որոշման ընդունման մասին իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՍԱՐԳԻՍ ՄՈՒՐԱԴՅԱՆ

2023 թվականի հունվարի 31
ք.Սևան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶ
ՍԵՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետություն Գեղարքունիքի մարզ Սևան համայնք
ք. Սևան, Նաիրյան փ. 164, (0261) 2-43-23, 4-00-00, sevan.gegharquniq@mta.gov.am

ՈՐՈՇՈՒՄ

01 փետրվարի 2023 թվականի թիվ 104-Ա

ՊԵՏԱԿԱՆ ՏՈՒՐՔԻ ՎՃԱՐՄԱՆ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 38-րդ հոդվածի 7-րդ և 8-րդ կետերի պահանջներով՝ **որոշում եմ.**

1. Սևան համայնքի 2023թ. բյուջեի ընդհանուր բնույթի ծախսերի հաշվից /բաժին 01, խումբ 6, դաս 1, հոդված 4823/ փոխանցել վարձակալական վճարների բռնագանձման նպատակով դատարան ներկայացվող հայցադիմումների պետական տուրքի գումարներ ներքոհիշյալ իրավաբանական և ֆիզիկական անձանց գծով՝

1) «Տարածքային զարգացման և հետազոտությունների կենտրոն» ՀԿ – 79900 դրամ;
2) Մարտին Բադեյան – 123615 դրամ:

2. Սույն որոշումն ուժի մեջ է՝ պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՍԱՐԳԻՍ ՄՈՒՐԱԴՅԱՆ

2023 թվականի փետրվարի 01
ք.Սևան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶ
ՍԵՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետություն Գեղարքունիքի մարզ Սևան համայնք
ք. Սևան, Նաիրյան փ. 164, (0261) 2-43-23, 4-00-00, sevan.gegharquniq@mta.gov.am

ՈՐՈՇՈՒՄ

01 փետրվարի 2023 թվականի թիվ 105-Ա

ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի 1-ին կետի 24)-րդ ենթակետով, ՀՀ կառավարության՝ 29.12.2005թ. թիվ 2387-Ն որոշմամբ և հիմք ընդունելով Գեղարքունիքի մարզ, գ. Վարսեր, 1-ին փողոց թիվ 84 տան բնակիչ Նորիկ Սամսոնյանի դիմումը՝ Գեղարքունիքի մարզ, Սևան համայնք, գ. Վարսեր հասցեում գտնվող հողամասի /վկայական՝ 17012023-05-0060/ համար նոր հասցե տրամադրելու մասին, **որոշում եմ.**

1. Գեղարքունիքի մարզ, Սևան համայնք, գ. Վարսեր հասցեում գտնվող հողամասի համար տրամադրել Սևան համայնք, գ. Վարսեր, 1-ին փողոց, 6-րդ նրբանցք թիվ 3 հողամաս հասցե:
2. Սույն որոշումը հիմք է պետական գրանցում ստանալու համար:
3. Սույն որոշումն ուժի մեջ է՝ Նորիկ Սամսոնյանին սույն որոշման ընդունման մասին իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՍԱՐԳԻՍ ՄՈՒՐԱԴՅԱՆ

2023 թվականի փետրվարի 01
ք.Սևան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶ
ՍԵՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետություն Գեղարքունիքի մարզ Սևան համայնք
ք. Սևան, Նաիրյան փ. 164, (0261) 2-43-23, 4-00-00, sevan.gegharquniq@mta.gov.am

ՈՐՈՇՈՒՄ

01 փետրվարի 2023 թվականի թիվ 106-Ա

ՆԱԽԱԳԾՄԱՆ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 42-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետի, Հայաստանի Հանրապետության կառավարության՝ 2015 թվականի մարտի 19-ի N 596-Ն որոշման, հիմք ընդունելով Դավիթ Հարությունյանի հայտը՝ **որոշում եմ.**

1. Դավիթ Հարությունյանին տրամադրել նախագծման թույլտվություն Սևան համայնք, ք. Սևան, Սայաթ-Նովա փողոց թիվ 8 / 27 հասցեում գտնվող հողատարածքում 2.1քմ մակերեսով պարսպի քանդման, առևտրի և սպասարկման ոլորտի օբյեկտի կառուցման համար :
2. Դավիթ Հարությունյանը պարտավոր է նախագծային փաստաթղթերը ներկայացնել համաձայնեցման և ստանալ շինարարության թույլտվություն:
3. Սույն որոշումն ուժի մեջ է՝ Դավիթ Հարությունյանին որոշման ընդունման մասին իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՍԱՐԳԻՍ ՄՈՒՐԱԴՅԱՆ

2023 թվականի փետրվարի 01
ք.Սևան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶ
ՍԵՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետություն Գեղարքունիքի մարզ Սևան համայնք
ք. Սևան, Նաիրյան փ. 164, (0261) 2-43-23, 4-00-00, sevan.gegharquniq@mta.gov.am

ՈՐՈՇՈՒՄ

01 փետրվարի 2023 թվականի թիվ 107-Ա

ՀՈՂԱՄԱՍԻ ՍԱՀՄԱՆՆԵՐԻ ՈՒՂՂՄԱՆ ԵՎ ՃԱՆԱՉՄԱՆ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի 1-ին կետի 24)-րդ ենթակետով, ՀՀ կառավարության՝ 29.12.2005թ. թիվ 2387-Ն որոշմամբ և հաշվի առնելով, որ Սևան համայնքի հերթապահ էլ. քարտեզում առկա են անճշտություններ, որի հետևանքով անհրաժեշտություն է առաջացել փոփոխել և հաստատել սեփականության իրավունքով Դիանա Գասպարյանին պատկանող, Գեղարքունիքի մարզ, համայնք Նորաշեն, 2-րդ փողոց թիվ 9 հասցեում գտնվող հողատարածքի /ՀՀ ԿԱ ԱԳԿՊԿ-ի կողմից տրված վկայական՝ 14032016-05-0022/ սահմանները, գծային չափերը, երկրաչափական պատկերը, հիմք ընդունելով որակավորում ունեցող անձի կողմից կատարված չափագրությունների արդյունքները՝ **որոշում եմ.**

1. Ուղղել և հաստատել Գեղարքունիքի մարզ, Նորաշեն համայնք, 2-րդ փողոց թիվ 9 հասցեում գտնվող հողատարածքի սահմանները, գծային չափերը, երկրաչափական պատկերը:
2. Սույն որոշումը հիմք է պետական գրանցում ստանալու համար:
3. Սույն որոշումն ուժի մեջ է՝ պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՍԱՐԳԻՍ ՄՈՒՐԱԴՅԱՆ

2023 թվականի փետրվարի 01
ք.Սևան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶ
ՍԵՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետություն Գեղարքունիքի մարզ Սևան համայնք
ք. Սևան, Նաիրյան փ. 164, (0261) 2-43-23, 4-00-00, sevan.gegharquniq@mta.gov.am

ՈՐՈՇՈՒՄ

01 փետրվարի 2023 թվականի թիվ 108-Ա

ՀՈՂԱՄԱՍԻ ՍԱՀՄԱՆՆԵՐԻ ՈՒՂՂՄԱՆ ԵՎ ՃԱՆԱՉՄԱՆ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի 1-ին կետի 24)-րդ ենթակետով, ՀՀ կառավարության՝ 29.12.2005թ. թիվ 2387-Ն որոշմամբ և հաշվի առնելով, «Մեգերյան Կարպետ» ԲԲԸ-ի լիազոր անձ Կարեն Այվազյանի դիմումը՝ սեփականության իրավունքով «Մեգերյան Կարպետ» ԲԲԸ-ին պատկանող, ք. Սևան, Պռոշյան նրբանցք, 32 հասցեում գտնվող հողատարածքի /ՀՀ ԿԱ ԱԳԿՊԿ-ի կողմից տրված վկայական՝ 2453350, 06.05.2008թ./ սահմանները, գծային չափերը, երկրաչափական պատկերը և հիմք ընդունելով որակավորում ունեցող անձի կողմից կատարված չափագրությունների արդյունքները՝ **որոշում եմ.**

1. Ուղղել և հաստատել ք. Սևան, Պռոշյան նրբանցք 32 հասցեում գտնվող հողատարածքի սահմանները, գծային չափերը, երկրաչափական պատկերը:
2. Ք. Սևան, Պռոշյան նրբանցք 32 հասցեում գտնվող անշարժ գույքի համար տրամադրել Սևան համայնք, ք. Սևան, Բարեկամության փողոց թիվ 30 վարչական շենք հասցե:
3. Սույն որոշումը հիմք է պետական գրանցում ստանալու համար:
4. Սույն որոշումն ուժի մեջ է՝ պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՍԱՐԳԻՍ ՄՈՒՐԱԴՅԱՆ

2023 թվականի փետրվարի 01
ք.Սևան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶ
ՍԵՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետություն Գեղարքունիքի մարզ Սևան համայնք
ք. Սևան, Նաիրյան փ. 164, (0261) 2-43-23, 4-00-00, sevan.gegharquniq@mta.gov.am

ՈՐՈՇՈՒՄ

01 փետրվարի 2023 թվականի թիվ 109-Ա

ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի 1-ին կետի 24)-րդ ենթակետով, ՀՀ կառավարության՝ 29.12.2005թ. թիվ 2387-Ն որոշմամբ և հիմք ընդունելով Գեղարքունիքի մարզ, գ. Դդմաշեն, 5-րդ փողոց թիվ 30 տան բնակիչ Սուրեն Հովհաննիսյանի դիմումը՝ սեփականաշնորհման տեղական հանձնաժողովի 20.04.1992թ. N 12 որոշմամբ սեփականաշնորհված, Գեղարքունիքի մարզ, գ. Դդմաշեն հասցեում գտնվող /կադաստրային ծածկագիր՝ 05-030-0095-0005/, տնամերձի համար նոր հասցե տրամադրելու մասին, **որոշում եմ.**

1. Գեղարքունիքի մարզ, գ. Դդմաշեն հասցեում գտնվող տնամերձի համար տրամադրել Սևան համայնք, գ. Դդմաշեն, 13-րդ փողոց թիվ 16 հողամաս հասցե:
2. Սույն որոշումը հիմք է պետական գրանցում ստանալու համար:
3. Սույն որոշումն ուժի մեջ է՝ Սուրեն Հովհաննիսյանին սույն որոշման ընդունման մասին իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՍԱՐԳԻՍ ՄՈՒՐԱԴՅԱՆ

2023 թվականի փետրվարի 01
ք.Սևան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶ
ՍԵՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետություն Գեղարքունիքի մարզ Սևան համայնք
ք. Սևան, Նաիրյան փ. 164, (0261) 2-43-23, 4-00-00, sevan.gegharquniq@mta.gov.am

ՈՐՈՇՈՒՄ

02 փետրվարի 2023 թվականի թիվ 110-Ա

ԱՎԱՐՏԱԿԱՆ ԱԿՏ (ՇԱՀԱԳՈՐԾՄԱՆ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ) ՁԵՎԱԿԵՐՊԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 42-րդ հոդվածի 1-ին կետի 7-րդ ենթակետի, Հայաստանի Հանրապետության կառավարության՝ 2015 թվականի մարտի 19-ի N 596-Ն որոշման, Սևան համայնքի ավագանու՝ 14.12.2022թ. N108-Ն որոշման 2-րդ կետի և հաշվի առնելով քաղ. Գառնիկ Մնեյանի դիմումը՝ **որոշում եմ.**

1. Ձևակերպել կառուցապատող Գառնիկ Մնեյանի կողմից իրականացված Սևան համայնք, ք. Սևան, Կարմիր բանակի փողոց թիվ 50 / 35 հասցեում գտնվող ավտոտնակ-տնտեսական շինության շահագործման թույլտվությունը:
2. Սույն որոշումն ուժի մեջ է՝ Գառնիկ Մնեյանին որոշման ընդունման մասին իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՍԱՐԳԻՍ ՄՈՒՐԱԴՅԱՆ

2023 թվականի փետրվարի 02
ք.Սևան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶ
ՍԵՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետություն Գեղարքունիքի մարզ Սևան համայնք
ք. Սևան, Նաիրյան փ. 164, (0261) 2-43-23, 4-00-00, sevan.gegharquniq@mta.gov.am

ՈՐՈՇՈՒՄ

03 փետրվարի 2023 թվականի թիվ 111-Ա

ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԻ ՏՆՕՐԻՆՄԱՆ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի 1-ին կետի 24)-րդ ենթակետով, համաձայն ՀՀ Քաղաքացիական օրենսգրքի 188-րդ հոդվածի 2-րդ կետի, ՀՀ կառավարության՝ 18.05.2006թ. «Ինքնակամ կառույցների օրինականացման և տնօրինման կարգը հաստատելու մասին» թիվ 912-Ն որոշման 34-36 կետերի պահանջների, հաշվի առնելով քաղ. Սամվել Հակոբյանի դիմումը՝ Սևան համայնք, ք. Սևան, Նաիրյան փողոց թիվ 187 / 69 հասցեում կառուցված 48.11քմ մակերեսով ավտոտնակը և զբաղեցրած 48.11քմ մակերեսով հողատարածքն ուղղակի գործարքով իրեն վաճառելու մասին, ինչպես նաև նկատի ունենալով, որ զբաղեցրած հողատարածքը ՀՀ Հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով սահմանված հողատեսք չի հանդիսանում, **որոշում եմ.**

1. Սևան համայնք, ք. Սևան, Նաիրյան փողոց թիվ 187 / 69 հասցեում գտնվող, Սևան համայնքի ղեկավարի՝ 26.01.2023թ. թիվ 82-Ա որոշմամբ օրինական և համայնքային սեփականություն ճանաչված, 02.02.2023թ. պետական գրանցում ստացած 48.11քմ մակերեսով ավտոտնակը՝ 1քմ՝ 1673.0դրամ, զբաղեցրած 48.11քմ մակերեսով հողատարածքը՝ 1քմ՝ 2887.5դրամ, ուղղակի գործարքի միջոցով վաճառել ՀՀ կառավարության՝ 18.05.2006թ. թիվ 912-Ն որոշման 34-րդ կետով սահմանված գնման նախապատվությունը ստանալուց հետո՝ 15 աշխատանքային օրվա ընթացքում համապատասխան դիմում ներկայացրած ք. Սևան, Նաիրյան փողոց թիվ 150 / 22 բնակարանի բնակիչ Սամվել Հակոբյանին :
2. Քաղ. Սամվել Հակոբյանի հետ կնքել առուվաճառքի պայմանագիր և սահմանել, որ առուվաճառքի հետ կապված ծախսերն իրականացվում են գնորդի հաշվին:
3. Սույն որոշմամբ ծագող սեփականության իրավունքը ենթակա է պետական գրանցման:
4. Սույն որոշումն ուժի մեջ է՝ Սամվել Հակոբյանին սույն որոշման ընդունման մասին իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՍԱՐԳԻՍ ՄՈՒՐԱԴՅԱՆ

2023 թվականի փետրվարի 03
ք.Սևան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶ
ՍԵՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետություն Գեղարքունիքի մարզ Սևան համայնք
ք. Սևան, Նաիրյան փ. 164, (0261) 2-43-23, 4-00-00, sevan.gegharquniq@mta.gov.am

ՈՐՈՇՈՒՄ

03 փետրվարի 2023 թվականի թիվ 112-Ա

ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 45-րդ հոդվածի 1-ին կետի 2-րդ ենթակետի, ՀՀ կառավարության՝19.07.2007թ. թիվ 843-Ն որոշման, Սևան համայնքի ավագանու՝ 14.12.2022թ. N108-Ն որոշման 1-ին կետով սահմանված թիվ 1 հավելվածի 7-րդ կետի ա) և բ) ենթակետերի, հիմք ընդունելով «Հեղինե Սանամյան» ԱՁ-ի կողմից ներկայացված հայտը՝ **որոշում եմ.**

1. «Հեղինե Սանամյան» ԱՁ -ին / գործունեությունը՝ Սևան համայնք, գ. Լճաշեն, 1-ին փողոց թիվ 13 / 1 հասցե / տրամադրել 2023թ. 1-ին եռամսյակի համար՝
1) ոգելից և ալկոհոլային խմիչքների վաճառքի թույլտվություն՝ Սևան համայնքի բյուջեի 900165101354 հաշվեհամարին վճարելով տեղական տուրք;
2) ծխախոտի արտադրանքի վաճառքի թույլտվություն՝ Սևան համայնքի բյուջեի 900165101339 հաշվեհամարին վճարելով տեղական տուրք :
2. Սույն որոշումն ուժի մեջ է՝ «Հեղինե Սանամյան» ԱՁ -ին որոշման ընդունման մասին իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ ՝ ՍԱՐԳԻՍ ՄՈՒՐԱԴՅԱՆ

2023 թվականի փետրվարի 03
ք.Սևան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶ
ՍԵՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետություն Գեղարքունիքի մարզ Սևան համայնք
ք. Սևան, Նաիրյան փ. 164, (0261) 2-43-23, 4-00-00, sevan.gegharquniq@mta.gov.am

ՈՐՈՇՈՒՄ

03 փետրվարի 2023 թվականի թիվ 113-Ա

ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի 1-ին կետի 24)-րդ ենթակետով, ՀՀ կառավարության՝ 29.12.2005թ. թիվ 2387-Ն որոշմամբ և հիմք ընդունելով ք. Սևան Նալբանդյան փողոց թիվ 44 / 13 բնակարանի բնակիչ Սիլվարդ Հովհաննիսյանի դիմումը՝ ըստ օրենքի ժառանգության իրավունքի վկայագրի իրեն պատկանող, ք. Սևան, Նալբանդյան փողոց 40 շենք թիվ 9ա հասցեում գտնվող բնակարանի համար նոր հասցե տրամադրելու մասին, **որոշում եմ.**

1. Ք. Սևան, Նալբանդյան փողոց 40 շենք թիվ 9ա հասցեում գտնվող բնակարանի համար տրամադրել Սևան համայնք, ք. Սևան, Մ. Նալբանդյան փողոց, 40 շենք թիվ 9 / 1 բնակարան հասցե:
2. Սույն որոշումը հիմք է պետական գրանցում ստանալու համար:
3. Սույն որոշումն ուժի մեջ է՝ Սիլվարդ Հովհաննիսյանին սույն որոշման ընդունման մասին իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՍԱՐԳԻՍ ՄՈՒՐԱԴՅԱՆ

2023 թվականի փետրվարի 03
ք.Սևան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶ
ՍԵՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետություն Գեղարքունիքի մարզ Սևան համայնք
ք. Սևան, Նաիրյան փ. 164, (0261) 2-43-23, 4-00-00, sevan.gegharquniq@mta.gov.am

ՈՐՈՇՈՒՄ

03 փետրվարի 2023 թվականի թիվ 114-Ա

ՀՈՂՀԱՏԿԱՑՄԱՆ ՀԻՄՔԵՐԸ ՎԵՐԱԿԱԳՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 32-րդ հոդվածի 16-րդ կետի պահանջներով, ՀՀ Հողային օրենսգրքի 64-րդ հոդվածի 8-րդ, 16-րդ կետերով և 118-րդ հոդվածով, ՀՀ Կառավարության 29.12.2005թ թիվ N 2387-Ն որոշմամբ, հիմք ընդունելով Գեղարքունիքի մարզ, գ. Զովաբեր, 5-րդ փողոց թիվ 11 տան բնակիչ Ժիրայր Շահբազյանի դիմումը՝ 15.10.1993թ. «Տարոն» գյուղացիական կոլեկտիվ տնտեսության ընդհանուր ժողովի արձանագրության համաձայն իրեն հատկացված 1884.99քմ մակերեսով անասնաֆերմայի զբաղեցրած և սպասարկման համար նախատեսված հողատարածքի հողհատկացման հիմքերը վերականգնելու մասին, ինչպես նաև հաշվի առնելով այն, որ հողամասը ընդգրկված չէ ՀՀ Հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով սահմանված հողամասերի ցանկում, **որոշում եմ.**

1. Վերակագնել «Տարոն» գյուղացիական կոլեկտիվ տնտեսության ընդհանուր ժողովի՝ 15.10.1993թ. արձանագրության համաձայն Ժիրայր Ժորայի Շահբազյանին հատկացված 1884.99քմ մակերեսով անասնաֆերմայի զբաղեցրած և սպասարկման համար նախատեսված 6500քմ մակերեսով հողատարածքի /կադաստրային ծածկագիր՝ 05-035-0046-0002/ հողհատկացման հիմքերը՝ 6500քմ մակերեսով հողատարածքի նկատմամբ տրամադրելով անհատույց սեփականության իրավունք՝ անշարժ գույքի առքուվաճառքի նվիրատվության կամ փոխանակման դեպքում համայնքայի բյուջե հողամասի տվյալ պահին գործող կադաստրային արժեքը վճարելու պայմանով:
2. 05-035-0046-0002 կադաստրային ծածկագրով անշարժ գույքի համար տրամադրել Սևան համայնք, գ. Զովաբեր, 2-րդ փողոց, 3-րդ նրբանցք թիվ 6 անասնշենք հասցե:
3. Սույն որոշումն ուժի մեջ է՝ Ժիրայր Շահբազյանին սույն որոշման ընդունման մասին իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՍԱՐԳԻՍ ՄՈՒՐԱԴՅԱՆ

2023 թվականի փետրվարի 03
ք.Սևան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶ
ՍԵՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետություն Գեղարքունիքի մարզ Սևան համայնք
ք. Սևան, Նաիրյան փ. 164, (0261) 2-43-23, 4-00-00, sevan.gegharquniq@mta.gov.am

ՈՐՈՇՈՒՄ

06 փետրվարի 2023 թվականի թիվ 115-Ա

ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի 1-ին կետի 24)-րդ ենթակետով, ՀՀ կառավարության՝ 29.12.2005թ. թիվ 2387-Ն որոշմամբ, հիմք ընդունելով ք. Սևան, Նաիրյան փողոց 187 / 24 բնակարանի բնակիչներ Աննա Բադալյանի և Դավիթ Թադևոսյանի դիմումը՝ ընդհանուր համատեղ սեփականության իրավունքով իրենց պատկանող, Սևան համայնք, ք. Սևան, Երևանյան խճուղի 1 / 1, 2 և Սևան համայնք, ք. Սևան, Ս. Շահումյան փողոց 1 / 21 բենզալցակայան հասցեներում գտնվող անշարժ գույքերը /վկայականներ՝ 29072022-05-0031, 30012023-05-0009/ միավորելու և անշարժ գույքի համար նոր հասցե տրամադրելու մասին, **որոշում եմ.**

1. Սևան համայնք, ք. Սևան, Երևանյան խճուղի 1/1, 2 և Սևան համայնք, ք. Սևան, Ս. Շահումյան փողոց 1 / 21 բենզալցակայան հասցեներում գտնվող անշարժ գույքերը միավորել՝ տրամադրելով Սևան համայնք, ք. Սևան, Երևանյան փողոց 1 / 3 բենզալցակայան հասցե:
2. Սույն որոշումը հիմք է պետական գրանցում ստանալու համար:
3. Սույն որոշումն ուժի մեջ է՝ Աննա Բադալյանին և Դավիթ Թադևոսյանին սույն որոշման ընդունման մասին իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՍԱՐԳԻՍ ՄՈՒՐԱԴՅԱՆ

2023 թվականի փետրվարի 06
ք.Սևան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶ
ՍԵՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետություն Գեղարքունիքի մարզ Սևան համայնք
ք. Սևան, Նաիրյան փ. 164, (0261) 2-43-23, 4-00-00, sevan.gegharquniq@mta.gov.am

ՈՐՈՇՈՒՄ

06 փետրվարի 2023 թվականի թիվ 116-Ա

ՕԳՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՏԿԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի 1-ին կետի 24)-րդ ենթակետով՝ **որոշում եմ.**

1. Համայնքի 2023թվականի բյուջեով նախատեսված / բաժին 10, խումբ 7, դաս 1, հոդված 4729 / օգնությունների գումարից՝ 130.460դրամ, ըստ կից հավելվածի, հատկացնել քաղաքացիներին:
2. Սույն որոշումն ուժի մեջ է՝ պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՍԱՐԳԻՍ ՄՈՒՐԱԴՅԱՆ

2023 թվականի փետրվարի 06
ք.Սևան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶ
ՍԵՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետություն Գեղարքունիքի մարզ Սևան համայնք
ք. Սևան, Նաիրյան փ. 164, (0261) 2-43-23, 4-00-00, sevan.gegharquniq@mta.gov.am

ՈՐՈՇՈՒՄ

06 փետրվարի 2023 թվականի թիվ 117-Ա

ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԻ ՏՆՕՐԻՆՄԱՆ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի 1-ին կետի 24)-րդ ենթակետով, համաձայն ՀՀ Քաղաքացիական օրենսգրքի 188-րդ հոդվածի 2-րդ կետի, ՀՀ կառավարության՝ 18.05.2006թ. «Ինքնակամ կառույցների օրինականացման և տնօրինման կարգը հաստատելու մասին» թիվ 912-Ն որոշման 34-36 կետերի պահանջների, հաշվի առնելով քաղ. Էմիլ Գևորգյանի դիմումը՝ Սևան համայնք, ք. Սևան, Ս. Սևանեցու փողոց թիվ 6 / 5 հասցեում կառուցված 29.57քմ մակերեսով ավտոտնակը, 19.97քմ մակերեսով նկուղը, 21.37քմ մակերեսով ձեռնահարկը և զբաղեցրած 29.57քմ մակերեսով հողատարածքն ուղղակի գործարքով իրեն վաճառելու մասին, ինչպես նաև նկատի ունենալով, որ զբաղեցրած հողատարածքը ՀՀ հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով սահմանված հողատեսք չի հանդիսանում, **որոշում եմ.**

1. Սևան համայնք, ք. Սևան, Ս. Սևանեցու փողոց թիվ 6 / 5 հասցեում գտնվող, Սևան համայնքի ղեկավարի՝ 17.01.2023թ. թիվ 42-Ա որոշմամբ օրինական և համայնքային սեփականություն ճանաչված, 31.01.2023թ. պետական գրանցում ստացած 29.57քմ մակերեսով ավտոտնակը՝ 1քմ՝ 1969դրամ, 19.97քմ մակերեսով նկուղը՝ 1քմ՝ 3938դրամ, 21.37քմ մակերեսով ձեռնահարկը՝ 1քմ՝ 3938դրամ և զբաղեցրած 29.57քմ մակերեսով հողատարածքը՝ 1քմ՝ 4441.8դրամ, ուղղակի գործարքի միջոցով վաճառել ՀՀ կառավարության՝ 18.05.2006թ. թիվ 912-Ն որոշման 34-րդ կետով սահմանված գնման նախապատվությունը ստանալուց հետո՝ 15 աշխատանքային օրվա ընթացքում համապատասխան դիմում ներկայացրած ք. Սևան, Ս. Սևանեցու փողոց թիվ 7 / 6 բնակարանի բնակիչ Էմիլ Գևորգյանին:
2. Քաղ. Էմիլ Գևորգյանի հետ կնքել առուվաճառքի պայմանագիր և սահմանել, որ առուվաճառքի հետ կապված ծախսերը իրականացվում են գնորդի հաշվին:
3. Սույն որոշմամբ ծագող սեփականության իրավունքը ենթակա է պետական գրանցման:
4. Սույն որոշումն ուժի մեջ է՝ Էմիլ Գևորգյանին սույն որոշման ընդունման մասին իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՍԱՐԳԻՍ ՄՈՒՐԱԴՅԱՆ

2023 թվականի փետրվարի 06
ք.Սևան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶ
ՍԵՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետություն Գեղարքունիքի մարզ Սևան համայնք
ք. Սևան, Նաիրյան փ. 164, (0261) 2-43-23, 4-00-00, sevan.gegharquniq@mta.gov.am

ՈՐՈՇՈՒՄ

06 փետրվարի 2023 թվականի թիվ 118-Ա

ԳՈՐԾԱՌԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ ՓՈԽԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի 1-ին կետի 24)-րդ ենթակետով, ՀՀ կառավարության՝ 02.02.2002թ. թիվ 88 որոշմամբ և հիմք ընդունելով ք.Սևան, Կոմիտաս փողոց թիվ 6 տան բնակիչ Անուշ Բադալյանի դիմումը՝ սեփականության իրավունքով իրեն պատկանող, Սևան համայնք, ք. Սևան, Կոմիտաս փողոց թիվ 6 / 1 հասցեում գտնվող բնակելի տան գործառական նշանակությունը փոխելու մասին, **որոշում եմ.**

1. Սևան համայնք, ք. Սևան, Կոմիտաս փողոց թիվ 6 / 1 հասցեում գտնվող բնակելի տան գործառնական նշանակությունը փոխել հասարակականի՝ սպասարկման համալիր:
2. Սույն որոշումը հիմք է պետական գրանցում ստանալու համար:
3. Սույն որոշումն ուժի մեջ է՝ Անուշ Բադալյանին սույն որոշման ընդունման մասին իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՍԱՐԳԻՍ ՄՈՒՐԱԴՅԱՆ

2023 թվականի փետրվարի 06
ք.Սևան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶ
ՍԵՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետություն Գեղարքունիքի մարզ Սևան համայնք
ք. Սևան, Նաիրյան փ. 164, (0261) 2-43-23, 4-00-00, sevan.gegharquniq@mta.gov.am

ՈՐՈՇՈՒՄ

06 փետրվարի 2023 թվականի թիվ 119-Ա

ԻՆՔՆԱԿԱՄ ԿԱՏԱՐՎԱԾ ՇԻՆԱՐԱՐԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐՆ ՕՐԻՆԱԿԱՆ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի 1-ին կետի 24)-րդ ենթակետով, ՀՀ Քաղաքացիական օրենսգրքի 188-րդ հոդվածի 4-րդ կետով, 18.05.2006թ. թիվ 912-Ն որոշման 8-րդ, 8.1-րդ, 9-րդ, 11-րդ, 18-րդ կետերով, ՀՀ կառավարության՝ 29.12.2005թ. թիվ 2387-Ն որոշմամբ և հիմք ընդունելով քաղ. Վլադիմիր Սուլթանովի դիմումը՝ համատեղ սեփականության իրավունքով Վլադիրմիր Սուլթանովին, Նիզամի Սուլթանովին և Ասյա Սուլթանովային պատկանող, Գեղարքունիքի մարզ, գյուղ Սեմյոնովկա հասցեում գտնվող 0.301հա մակերեսով հողատարածքում 29.50քմ մակերեսով բնակելի տան, 7.82քմ մակերեսով ծածկի կառուցման աշխատանքներն օրինական ճանաչելու մասին, ինչպես նաև հաշվի առնելով, որ կառույցի պահպանումը չի խախտում այլ անձանց իրավունքները և օրենքով պահպանվող շահերը կամ վտանգ չի սպառնում քաղաքացիների կյանքին ու առողջությանը, կառուցված չէ ինժեներատրանսպորտային օբյեկտների օտարման կամ անվտանգության գոտիներում կամ կառուցված չէ քաղաքաշինական նորմերի ու կանոնների էական խախտումներով և չի առաջացնում հարկադիր սերվիտուտ պահանջելու իրավունք, **որոշում եմ.**

1. Համատեղ սեփականության իրավունքով Վլադիրմիր Սուլթանովին, Նիզամի Սուլթանովին և Ասյա Սուլթանովային պատկանող, Գեղարքունիքի մարզ, գյուղ Սեմյոնովկա հասցեում գտնվող 0.301հա մակերեսով հողատարածքում 29.50քմ մակերեսով բնակելի տան /ներքին մակերեսը՝ 20.48քմ/, 7.82քմ մակերեսով ծածկի կառուցման աշխատանքները ճանաչել օրինական՝ տրամադրելով Սևան համայնք, գ. Սեմյոնովկա, 1-ին փողոց թիվ 61 բնակելի տուն հասցե / հաշվառման տեղեկանք՝ 2023KYAZG5/՝ Սևան համայնքի բյուջե մուծելով օրինականացվող բնակելի նշանակության շինությունների յուրաքանչյուր 1քմ-ի համար՝ 536.0 դրամ:
2. Սևան համայնք, գ. Սեմյոնովկա, 1-ին փողոց թիվ 61 հասցեում գտնվող 0.301հա մակերեսով հողատարածքում 59.0քմ մակերեսով շինության քանդման աշխատանքները ճանաչել օրինական:
3. Սույն որոշման ընդունման օրվանից սահմանված գումարը 60-օրյա ժամկետում չվճարելու դեպքում՝ սույն որոշումը համարվում է ուժը կորցրած:
4. Սույն որոշմամբ ծագող սեփականության իրավունքը ենթակա է պետական գրանցման:
5. Սույն որոշումն ուժի մեջ է՝ Վլադիրմիր Սուլթանովին, Նիզամի Սուլթանովին և Ասյա Սուլթանովային սույն որոշման ընդունման մասին իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՍԱՐԳԻՍ ՄՈՒՐԱԴՅԱՆ

2023 թվականի փետրվարի 06
ք.Սևան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶ
ՍԵՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետություն Գեղարքունիքի մարզ Սևան համայնք
ք. Սևան, Նաիրյան փ. 164, (0261) 2-43-23, 4-00-00, sevan.gegharquniq@mta.gov.am

ՈՐՈՇՈՒՄ

06 փետրվարի 2023 թվականի թիվ 120-Ա

ՀՈՂԱՏԱՐԱԾՔԸ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի 1-ին կետի 24)-րդ ենթակետով, ՀՀ Հողային օրենսգրքի 86-րդ հոդվածի 2-րդ կետով, «Քաղաքաշինության մասին» ՀՀ օրենքի 14^3 հոդվածով, ՀՀ կառավարության՝ 29.12.2005թ. թիվ 2387-Ն որոշմամբ՝ **որոշում եմ.**

1. Համաձայն ներկայացվող հատակագծի՝ 0.00561հա մակերեսով հողամասը ճանաչել համայնքային սեփականություն՝ տրամադրելով Սևան համայնք, ք. Սևան, Հ. Թումանյան փողոց թիվ 13 / 22 հողամաս հասցե:
2. Սույն որոշումն ուժի մեջ է՝ պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՍԱՐԳԻՍ ՄՈՒՐԱԴՅԱՆ

2023 թվականի փետրվարի 06
ք.Սևան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶ
ՍԵՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետություն Գեղարքունիքի մարզ Սևան համայնք
ք. Սևան, Նաիրյան փ. 164, (0261) 2-43-23, 4-00-00, sevan.gegharquniq@mta.gov.am

ՈՐՈՇՈՒՄ

06 փետրվարի 2023 թվականի թիվ 121-Ա

ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԻ ՏՆՕՐԻՆՄԱՆ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի 1-ին կետի 24)-րդ ենթակետով, համաձայն ՀՀ Քաղաքացիական օրենսգրքի 188-րդ հոդվածի 2-րդ կետի, ՀՀ կառավարության՝ 18.05.2006թ. «Ինքնակամ կառույցների օրինականացման և տնօրինման կարգը հաստատելու մասին» թիվ 912-Ն որոշման 34-36 կետերի պահանջների, հաշվի առնելով քաղ. Բալաբեկ Հակոբյանի դիմումը՝ Սևան համայնք, ք. Սևան, Կ. Դեմիրճյան փողոց թիվ 21 / 27 հասցեում կառուցված 46.87քմ մակերեսով ավտոտնակը և զբաղեցրած 46.87քմ մակերեսով հողատարածքն ուղղակի գործարքով իրեն վաճառելու մասին, ինչպես նաև նկատի ունենալով, որ զբաղեցրած հողատարածքը ՀՀ հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով սահմանված հողատեսք չի հանդիսանում, **որոշում եմ.**

1. Սևան համայնք, ք. Սևան, Կ.Դեմիրճյան փողոց թիվ 21 / 27 հասցեում գտնվող, Սևան համայնքի ղեկավարի՝ 16.01.2023թ. թիվ 29-Ա որոշմամբ օրինական և համայնքային սեփականություն ճանաչված, 31.01.2023 պետական գրանցում ստացած 46.87քմ մակերեսով ավտոտնակը՝ 1քմ՝ 1673.0դրամ և զբաղեցրած 46.87քմ մակերեսով հողատարածքը՝ 1քմ՝ 2887.5դրամ, ուղղակի գործարքի միջոցով վաճառել ՀՀ կառավարության՝ 18.05.2006թ. թիվ 912-Ն որոշման 34-րդ կետով սահմանված գնման նախապատվությունը ստանալուց հետո՝ 15 աշխատանքային օրվա ընթացքում համապատասխան դիմում ներկայացրած ք. Սևան, Սայաթ-Նովա փողոց թիվ 18 / 38 բնակարանի բնակիչ Բալաբեկ Հակոբյանին :
2. Քաղ. Բալաբեկ Հակոբյանի հետ կնքել առուվաճառքի պայմանագիր և սահմանել, որ առուվաճառքի հետ կապված ծախսերն իրականացվում են գնորդի հաշվին:
3. Սույն որոշմամբ ծագող սեփականության իրավունքը ենթակա է պետական գրանցման:
4. Սույն որոշումն ուժի մեջ է՝ Բալաբեկ Հակոբյանին սույն որոշման ընդունման մասին իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՍԱՐԳԻՍ ՄՈՒՐԱԴՅԱՆ

2023 թվականի փետրվարի 06
ք.Սևան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶ
ՍԵՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետություն Գեղարքունիքի մարզ Սևան համայնք
ք. Սևան, Նաիրյան փ. 164, (0261) 2-43-23, 4-00-00, sevan.gegharquniq@mta.gov.am

ՈՐՈՇՈՒՄ

06 փետրվարի 2023 թվականի թիվ 122-Ա

ՉԿԱԼՈՎԿԱ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ՝ 15.02.2021Թ. Ն 3-Ա ՈՐՈՇՈՒՄՆ ՈՒԺԸ ԿՈՐՑՐԱԾ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի 1-ին կետի 24)-րդ ենթակետով, «Նորմատիվ իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 37-րդ հոդվածով՝ **որոշում եմ.**

1. Ուժը կորցրած ճանաչել Չկալովկա համայնքի ղեկավարի՝ 15.02.2021թ. «ՀՀ Գեղարքունիքի մարզի Չկալովկա համայնքի բնակիչ Ռուբիկ Ղուկասյանին պատկանող կենցաղի տանը հողամաս տրամադրելու մասին» Ն 3-Ա որոշումը:
2. Սույն որոշումն ուժի մեջ է՝ պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՍԱՐԳԻՍ ՄՈՒՐԱԴՅԱՆ

2023 թվականի փետրվարի 06
ք.Սևան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶ
ՍԵՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետություն Գեղարքունիքի մարզ Սևան համայնք
ք. Սևան, Նաիրյան փ. 164, (0261) 2-43-23, 4-00-00, sevan.gegharquniq@mta.gov.am

ՈՐՈՇՈՒՄ

06 փետրվարի 2023 թվականի թիվ 123-Ա

ԳՈՐԾԱՌՆԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ ՓՈՓՈԽԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 29-րդ կետով, ՀՀ Հողային օրենսգրքի 7-րդ հոդվածով՝ և հիմք ընդունելով Գեղարքունիքի մարզ, գ. Գեղամավան, 1-ին փողոց, 1-ին նրբանցք 24 տան բանկիչ Վախթանգ Կարապետյանի դիմումը՝ Գեղամավանի սեփականաշնորհման հանձնաժողովի՝ 10.02.1991թ. թիվ 1 նիստի որոշմամբ իրեն հատկացված 0.12282հա մակերեսով հողամասի գործառնական նշանակությունը փոխելու մասին դիմումը՝ **որոշում եմ.**

1. Սևան համայնք, գ. Գեղամավան, 2-րդ փողոց, 6-րդ նրբանցք, 28 հասցեում գտնվող, Գեղամավանի սեփականաշնորհման հանձնաժողովի՝ 10.02.1991թ. թիվ 1 նիստի որոշմամբ Վախթանգ Կարապետյանին սեփականաշնորհված, 05-024-002-0019 կադաստրային ծածկագրով, բնակավայրերի՝ նպատակային, այլ հողեր՝ գործառնական նշանակություն ունեցող 0.12282հա մակերեսով հողատարածքի գործառնական նշանակությունը փոխել բնակելի՝ բնակավայրերի նպատակային նշանակության:
2. Սույն որոշումը հիմք է պետական գրանցում ստանալու համար:
3. Սույն որոշումն ուժի մեջ է՝ պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՍԱՐԳԻՍ ՄՈՒՐԱԴՅԱՆ

2023 թվականի փետրվարի 06
ք.Սևան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶ
ՍԵՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետություն Գեղարքունիքի մարզ Սևան համայնք
ք. Սևան, Նաիրյան փ. 164, (0261) 2-43-23, 4-00-00, sevan.gegharquniq@mta.gov.am

ՈՐՈՇՈՒՄ

06 փետրվարի 2023 թվականի թիվ 124-Ա

ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԻ ՏՆՕՐԻՆՄԱՆ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի 1-ին կետի 24)-րդ ենթակետով, համաձայն ՀՀ Քաղաքացիական օրենսգրքի 188-րդ հոդվածի 2-րդ կետի, ՀՀ կառավարության՝ 18.05.2006թ. «Ինքնակամ կառույցների օրինականացման և տնօրինման կարգը հաստատելու մասին» թիվ 912-Ն որոշման 34-36 կետերի պահանջների, հաշվի առնելով քաղ. Գուրգեն Սիմոնյանի դիմումը՝ Սևան համայնք, ք. Սևան, Նալբանդյան փողոց թիվ 59 / 33 հասցեում կառուցված 32.76քմ մակերեսով ավտոտնակը, զբաղեցրած 32.76քմ մակերեսով հողատարածքն ուղղակի գործարքով իրեն վաճառելու մասին, ինչպես նաև նկատի ունենալով, որ զբաղեցրած հողատարածքը ՀՀ Հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով սահմանված հողատեսք չի հանդիսանում, **որոշում եմ.**

1. Սևան համայնք, ք. Սևան, Նալբանդյան փողոց թիվ 59 / 33 հասցեում գտնվող, Սևան համայնքի ղեկավարի՝ 16.01.2023թ. թիվ 28-Ա որոշմամբ օրինական և համայնքային սեփականություն ճանաչված, 30.01.2023թ. պետական գրանցում ստացած 32.76քմ մակերեսով ավտոտնակը՝ 1քմ՝ 1673.0դրամ, զբաղեցրած 32.76քմ մակերեսով հողատարածքը 1քմ՝ 2887.5դրամ, ուղղակի գործարքի միջոցով վաճառել ՀՀ կառավարության՝ 18.05.2006թ. թիվ 912-Ն որոշման 34-րդ կետով սահմանված գնման նախապատվությունը ստանալուց հետո՝ 15 աշխատանքային օրվա ընթացքում համապատասխան դիմում ներկայացրած ք. Սևան, Շինարարների փողոց թիվ 3 / 16 բնակարանի բնակիչ Գուրգեն Սիմոնյանին:
2. Քաղ. Գուրգեն Սիմոնյանի հետ կնքել առուվաճառքի պայմանագիր և սահմանել, որ առուվաճառքի հետ կապված ծախսերն իրականացվում են գնորդի հաշվին:
3. Սույն որոշմամբ ծագող սեփականության իրավունքը ենթակա է պետական գրանցման:
4. Սույն որոշումն ուժի մեջ է՝ Գուրգեն Սիմոնյանին սույն որոշման ընդունման մասին իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՍԱՐԳԻՍ ՄՈՒՐԱԴՅԱՆ

2023 թվականի փետրվարի 06
ք.Սևան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶ
ՍԵՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետություն Գեղարքունիքի մարզ Սևան համայնք
ք. Սևան, Նաիրյան փ. 164, (0261) 2-43-23, 4-00-00, sevan.gegharquniq@mta.gov.am

ՈՐՈՇՈՒՄ

06 փետրվարի 2023 թվականի թիվ 125-Ա

ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի 1-ին կետի 24)-րդ ենթակետով, ՀՀ կառավարության՝ 29.12.2005թ. թիվ 2387-Ն որոշմամբ և հիմք ընդունելով ք. Սևան, Գործարանային փողոց թիվ 1 / 6 բնակարանի բնակիչ Նորիկ Եղիազարյանի դիմումը՝ սեփականության իրավունքով իրեն պատկանող, ք. Սևան, Գործարանային փողոց թիվ 1 / 6 բնակարանի համար նոր հասցե տրամադրելու մասին, **որոշում եմ.**

1. Ք. Սևան, Գործարանային փողոց թիվ 1 / 6 հասցեում գտնվող բնակարանի համար տրամադրել Սևան համայնք, ք. Սևան, Գործարանային փողոց, 1-ին շենք թիվ 6 բնակարան հասցե:
2. Սույն որոշումը հիմք է պետական գրանցում ստանալու համար:
3. Սույն որոշումն ուժի մեջ է՝ Նորիկ Եղիազարյանին սույն որոշման ընդունման մասին իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՍԱՐԳԻՍ ՄՈՒՐԱԴՅԱՆ

2023 թվականի փետրվարի 06
ք.Սևան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶ
ՍԵՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետություն Գեղարքունիքի մարզ Սևան համայնք
ք. Սևան, Նաիրյան փ. 164, (0261) 2-43-23, 4-00-00, sevan.gegharquniq@mta.gov.am

ՈՐՈՇՈՒՄ

06 փետրվարի 2023 թվականի թիվ 126-Ա

ՀՈՂԱՏԱՐԱԾՔԸ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի 1-ին կետի 24)-րդ ենթակետով, ՀՀ Հողային օրենսգրքի 86-րդ հոդվածի 2-րդ կետով, **որոշում եմ.**

1. Համաձայն ներկայացվող հատակագծի՝ 05-024-0226-0023 կադաստրային ծածկագրով /գ.Գեղամավան/ 0.0204հա մակերեսով հողատարածքը ճանաչել համայնքային սեփականություն և կատարել պետական գրանցում:
2. Համաձայն ներկայացվող հատակագծի՝ 05-024-0224-0048 կադաստրային ծածկագրով /գ.Գեղամավան/ 0.01000հա մակերեսով հողատարածքը ճանաչել համայնքային սեփականություն և կատարել պետական գրանցում:
3. Համաձայն ներկայացվող հատակագծի՝ 05-024-0261-0057 կադաստրային ծածկագրով /գ.Գեղամավան/ 0.00722հա մակերեսով հողատարածքը ճանաչել համայնքային սեփականություն և կատարել պետական գրանցում:
4. Համաձայն ներկայացվող հատակագծի՝ 05-024-0261-0049 կադաստրային ծածկագրով /գ.Գեղամավան/ 0.00462հա մակերեսով հողատարածքը ճանաչել համայնքային սեփականություն և կատարել պետական գրանցում:
5. Համաձայն ներկայացվող հատակագծի՝ 05-024-0259-0023 կադաստրային ծածկագրով /գ.Գեղամավան/ 0.00462հա մակերեսով հողատարածքը ճանաչել համայնքային սեփականություն և կատարել պետական գրանցում:
6. Համաձայն ներկայացվող հատակագծի՝ 05-024-0258-0004 կադաստրային ծածկագրով /գ.Գեղամավան/ 0.00518հա մակերեսով հողատարածքը ճանաչել համայնքային սեփականություն և կատարել պետական գրանցում:
7. Համաձայն ներկայացվող հատակագծի՝ 05-024-0258-0004 կադաստրային ծածկագրով /գ.Գեղամավան/ 0.01000հա մակերեսով հողատարածքը ճանաչել համայնքային սեփականություն և կատարել պետական գրանցում:
8. Համաձայն ներկայացվող հատակագծի՝ 05-024-0258-0004 կադաստրային ծածկագրով /գ.Գեղամավան/ 0.00462հա մակերեսով հողատարածքը ճանաչել համայնքային սեփականություն և կատարել պետական գրանցում:
9. Համաձայն ներկայացվող հատակագծի՝ 05-024-0258-0004 կադաստրային ծածկագրով /գ.Գեղամավան/ 0.01144հա մակերեսով հողատարածքը ճանաչել համայնքային սեփականություն և կատարել պետական գրանցում:
10. Համաձայն ներկայացվող հատակագծի՝ 05-024-0258-0004 կադաստրային ծածկագրով /գ.Գեղամավան/ 0.00462հա մակերեսով հողատարածքը ճանաչել համայնքային սեփականություն և կատարել պետական գրանցում:
11. Համաձայն ներկայացվող հատակագծի՝ 05-024-0258-0004 կադաստրային ծածկագրով /գ.Գեղամավան/ 0.00462հա մակերեսով հողատարածքը ճանաչել համայնքային սեփականություն և կատարել պետական գրանցում:

12. Համաձայն ներկայացվող հատակագծի՝ 05-024-0257-0001 կադաստրային ծածկագրով /գ.Գեղամավան/ 0.01000հա մակերեսով հողատարածքը ճանաչել համայնքային սեփականություն և կատարել պետական գրանցում:
13. Համաձայն ներկայացվող հատակագծի՝ 05-024-0256-0003 կադաստրային ծածկագրով /գ.Գեղամավան/ 0.00577հա մակերեսով հողատարածքը ճանաչել համայնքային սեփականություն և կատարել պետական գրանցում:
14. Համաձայն ներկայացվող հատակագծի՝ 05-024-0258-0004 կադաստրային ծածկագրով /գ.Գեղամավան/ 0.01144հա մակերեսով հողատարածքը ճանաչել համայնքային սեփականություն և կատարել պետական գրանցում:
15. Համաձայն ներկայացվող հատակագծի՝ 05-024-0253-0001 կադաստրային ծածկագրով /գ.Գեղամավան/ 0.01150հա մակերեսով հողատարածքը ճանաչել համայնքային սեփականություն և կատարել պետական գրանցում:
16. Համաձայն ներկայացվող հատակագծի՝ 05-024-0252-0001 կադաստրային ծածկագրով /գ.Գեղամավան/ 0.01416հա մակերեսով հողատարածքը ճանաչել համայնքային սեփականություն և կատարել պետական գրանցում:
17. Համաձայն ներկայացվող հատակագծի՝ 05-024-0224-0087 կադաստրային ծածկագրով /գ.Գեղամավան/ 0.00518հա մակերեսով հողատարածքը ճանաչել համայնքային սեփականություն և կատարել պետական գրանցում:
18. Համաձայն ներկայացվող հատակագծի՝ 05-024-0224-0087 կադաստրային ծածկագրով /գ.Գեղամավան/ 0.00686հա մակերեսով հողատարածքը ճանաչել համայնքային սեփականություն և կատարել պետական գրանցում:
19. Համաձայն ներկայացվող հատակագծի 05-024-0225-0004 կադաստրային ծածկագրով /գ.Գեղամավան/ 0.00721հա մակերեսով հողատարածքը ճանաչել համայնքային սեփականություն և կատարել պետական գրանցում:
20. Համաձայն ներկայացվող հատակագծի՝ 05-024-0222-0001 կադաստրային ծածկագրով /գ.Գեղամավան/ 0.00462հա մակերեսով հողատարածքը ճանաչել համայնքային սեփականություն և կատարել պետական գրանցում:
21. Համաձայն ներկայացվող հատակագծի՝ 05-024-0226-0023 կադաստրային ծածկագրով /գ.Գեղամավան/ 0.01000հա մակերեսով հողատարածքը ճանաչել համայնքային սեփականություն և կատարել պետական գրանցում:
22. Համաձայն ներկայացվող հատակագծի՝ 05-024-0226-0023 կադաստրային ծածկագրով /գ.Գեղամավան/ 0.01000հա մակերեսով հողատարածքը ճանաչել համայնքային սեփականություն և կատարել պետական գրանցում:
23. Համաձայն ներկայացվող հատակագծի՝ 05-024-0226-0023 կադաստրային ծածկագրով /գ.Գեղամավան/ 0.01000հա մակերեսով հողատարածքը ճանաչել համայնքային սեփականություն և կատարել պետական գրանցում:
24. Համաձայն ներկայացվող հատակագծի՝ 05-086-0143-0001 կադաստրային ծածկագրով /գ.Վարսեր/ 0.01000հա մակերեսով հողատարածքը ճանաչել համայնքային սեփականություն և կատարել պետական գրանցում:
25. Համաձայն ներկայացվող հատակագծի՝ 05-086-0189-0001 կադաստրային ծածկագրով /գ.Վարսեր/ 0.00577հա մակերեսով հողատարածքը ճանաչել համայնքային սեփականություն և կատարել պետական գրանցում:
26. Համաձայն ներկայացվող հատակագծի՝ 05-086-0143-0001 կադաստրային ծածկագրով /գ.Վարսեր/ 0.01000հա մակերեսով հողատարածքը ճանաչել համայնքային սեփականություն և կատարել պետական գրանցում:
27. Համաձայն ներկայացվող հատակագծի՝ 05-086-0143-0001 կադաստրային ծածկագրով /գ.Վարսեր/ 0.00518հա մակերեսով հողատարածքը ճանաչել համայնքային սեփականություն և կատարել պետական գրանցում :
28. Սույն որոշումն ուժի մեջ է՝ պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՍԱՐԳԻՍ ՄՈՒՐԱԴՅԱՆ

2023 թվականի փետրվարի 06
ք.Սևան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶ
ՍԵՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետություն Գեղարքունիքի մարզ Սևան համայնք
ք. Սևան, Նաիրյան փ. 164, (0261) 2-43-23, 4-00-00, sevan.gegharquniq@mta.gov.am

ՈՐՈՇՈՒՄ

06 փետրվարի 2023 թվականի թիվ 127-Ա

ՀՀ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՍԵՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ 2023ԹՎԱԿԱՆԻ ԱՂԵՏՆԵՐԻ ՌԻՍԿԻ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՊԼԱՆԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Սևան համայնքի աղետների ռիսկի նվազեցման միջոցառումների կազմակերպման և իրականացման, արտակարգ իրավիճակներում գործելու ընթացակարգերի սահմանման, արտակարգ իրավիճակներում համայնքի բնակիչների պաշտպանության կազմակերպման նպատակով, ղեկավարվելով «Արտակարգ իրավիճակներում բնակչության պաշտպանության մասին» ՀՀ օրենքի 16-րդ հոդվածով, «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 12-րդ հոդվածի 1-ին մասի 12-րդ և 41-րդ հոդվածի 2-րդ մասի 7-րդ կետերով՝ **որոշում եմ.**

1. Հաստատել Սևան համայնքի 2023թվականի աղետների ռիսկի կառավարման պլանը՝ համաձայն 1-ից 6-րդ հավելվածների:
2. Արտակարգ իրավիճակի սպառնալիքի կամ առաջացման դեպքում՝ աղետների ռիսկի կառավարման պլանի հավելված N6-ով որևէ երեք միջոցառում իրականացնելու պայմանում աղետների ռիսկի կառավարման պլանը համարել գործողության մեջ դրված:
3. Սույն որոշումն ուժի մեջ է՝ պաշտոնական հրապարակման պահից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՍԱՐԳԻՍ ՄՈՒՐԱԴՅԱՆ

2023 թվականի փետրվարի 06
ք.Սևան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶ
ՍԵՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետություն Գեղարքունիքի մարզ Սևան համայնք
ք. Սևան, Նաիրյան փ. 164, (0261) 2-43-23, 4-00-00, sevan.gegharquniq@mta.gov.am

ՈՐՈՇՈՒՄ

06 փետրվարի 2023 թվականի թիվ 128-Ա

ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 45-րդ հոդվածի 1-ին կետի 2-րդ ենթակետի, ՀՀ կառավարության՝ 19.07.2007թ. թիվ 843-Ն որոշման, Սևան համայնքի ավագանու՝ 14.12.2022թ. N108-Ն որոշման 1-ին կետով սահմանված թիվ 1 հավելվածի 7-րդ կետի ա և բ ենթակետերի, հիմք ընդունելով «Ացելիկ Սարիբեկյան» ԱՁ-ի կողմից ներկայացված հայտը՝ **որոշում եմ.**

1. «Ացելիկ Սարիբեկյան» ԱՁ -ին / գործունեությունը՝ ք.Սևան, Ս. Սևանեցի փողոց, շենք 7 հասցե / տրամադրել 2023թ. 1-ին եռամսյակի համար՝
1) ոգելից և ալկոհոլային խմիչքների վաճառքի թույլտվություն՝ Սևան համայնքի բյուջեի 900165101354 հաշվեհամարին վճարելով տեղական տուրք՝ 6.000դրամ ,
2) ծխախոտի արտադրանքի վաճառքի թույլտվություն՝ Սևան համայնքի բյուջեի 900165101339 հաշվեհամարին վճարելով տեղական տուրք՝ 6.000 դրամ :
2. Սույն որոշումն ուժի մեջ է՝ «Ացելիկ Սարիբեկյան» ԱՁ -ին որոշման ընդունման մասին իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ ՝ ՍԱՐԳԻՍ ՄՈՒՐԱԴՅԱՆ

2023 թվականի փետրվարի 06
ք.Սևան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶ
ՍԵՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետություն Գեղարքունիքի մարզ Սևան համայնք
ք. Սևան, Նաիրյան փ. 164, (0261) 2-43-23, 4-00-00, sevan.gegharquniq@mta.gov.am

ՈՐՈՇՈՒՄ

06 փետրվարի 2023 թվականի թիվ 129-Ա

ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 45-րդ հոդվածի 1-ին կետի 2-րդ ենթակետի, ՀՀ կառավարության՝ 19.07.2007թ. թիվ 843-Ն որոշման, Սևան համայնքի ավագանու՝ 14.12.2022թ. N108-Ն որոշման 1-ին կետով սահմանված թիվ 1 հավելվածի 7-րդ կետի ա և բ ենթակետերի, հիմք ընդունելով « Աննա Ղարիբյան» ԱՁ-ի կողմից ներկայացված հայտը՝ **որոշում եմ.**

1. «Աննա Ղարիբյան» ԱՁ-ին / գործունեությունը՝ ք.Սևան, Խաղաղության 12 շենքից հարավ հասցե / տրամադրել 2023թ. 1-ին եռամսյակի համար՝
1) ոգելից և ալկոհոլային խմիչքների վաճառքի թույլտվություն՝ Սևան համայնքի բյուջեի 900165101354 հաշվեհամարին վճարելով տեղական տուրք՝ 10.100դրամ ,
2) ծխախոտի արտադրանքի վաճառքի թույլտվություն՝ Սևան համայնքի բյուջեի 900165101339 հաշվեհամարին վճարելով տեղական տուրք՝ 10.100 դրամ :
2. Սույն որոշումն ուժի մեջ է՝ « Աննա Ղարիբյան » ԱՁ -ին որոշման ընդունման մասին իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ ՝ ՍԱՐԳԻՍ ՄՈՒՐԱԴՅԱՆ

2023 թվականի փետրվարի 06
ք.Սևան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶ
ՍԵՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետություն Գեղարքունիքի մարզ Սևան համայնք
ք. Սևան, Նաիրյան փ. 164, (0261) 2-43-23, 4-00-00, sevan.gegharquniq@mta.gov.am

ՈՐՈՇՈՒՄ

06 փետրվարի 2023 թվականի թիվ 130-Ա

ՎԱՐՉԱԿԱՆ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՆ ԵՆԹԱՐԿԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի 1-ին կետի 24)-րդ ենթակետով, «Վարչական իրավախախտումների վերաբերյալ» ՀՀ օրենսգրքի 154-րդ հոդվածի 1-ի կետի պահանջներով, այն է՝ սեփականության կամ հողօգտագործման իրավունք ունեցող անձի կողմից այդ հողամասի վրա առանց թույլտվության կամ թույլտվությամբ սահմանված պայմանների կամ քաղաքաշինական նորմերի ու կանոնների էական խախտումներով շենք շինություն կամ այլ կառույց կառուցելը կամ տեղադրելը կամ առանց թույլտվության շինարարություն կամ տեղադրման թույլտվություն պահանջող շինարարական աշխատանքներ իրականացնելը առաջացնում է տուգանքի նշանակում, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության քաղաքաշինության, տեխնիկական և հրդեհային անվտանգության տեսչական մարմնի ղեկավարի տեղակալի՝ 12.12.2022թ. թիվ ՔՏՄ/18.9/21199-22 գրությունը, հաշվի առնելով Սևանի համայնքապետարանի կողմից կազմված 01.02.2023թ. վարչական իրավախախտման վերաբերյալ թիվ 2 արձանագրությունը՝ Վաղարշարկ Գրիգորյանի կողմից /հաշվառված՝ Գեղարքունիքի մարզ, գ, Ծովագյուղ, 21-րդ փողոց թիվ 13 հասցեում/ «Արևիկ» հանգստյան գոտու մասնաշենքին կից, առանց համապատասխան փաստաթղթերի, 5x5x1 մետր չափերով ինքնակամ շինարարական աշխատանքներ կատարելու մասին, **որոշում եմ.**

1. Վարձակալության իրավունքով Վաղարշարկ Գրիգորյանին պատկանող «Արևիկ» հանգստյան գոտու զբաղեցրած հողատարածքում, առանց համապատասխան փաստաթղթերի, 5x5x1 մետր չափերով ինքնակամ շինարարական աշխատանքներ կատարելու համար Վ. Գրիգորյանի նկատմամբ նշանակել տուգանք սահմանված նվազագույն աշխատավարձի հինգհարյուրապատիկի չափով:
2. Առաջարկել զանցառու Վաղարշակ Գրիգորյանին՝ 15-օրյա ժամկետում կամավոր հիմունքներով տուգանքը վճարել Սևանի համայնք բյուջեի 900165101123 հաշվեհամարին /ՀՀՖՆԳՎ/:
3. Նշանակված տուգանքը ժամանակին չվճարելու դեպքում այն ենթակա է գանձման օրենքով սահմանված կարգով:
4. Սույն որոշումը ստանալուց հետո քանդել ինքնակամ վերակառուցված սանհանգույցը և տարածքը բերել նախկին տեսքին:
5. Սույն որոշումը կարող է բողոքարկվել օրենքով սահմանված կարգով:
6. Սույն որոշումն ուժի մեջ է՝ Վաղարշակ Գրիգորյանին սույն որոշման ընդունման մասին իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՍԱՐԳԻՍ ՄՈՒՐԱԴՅԱՆ

2023 թվականի փետրվարի 06
ք.Սևան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶ
ՍԵՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետություն Գեղարքունիքի մարզ Սևան համայնք
ք. Սևան, Նաիրյան փ. 164, (0261) 2-43-23, 4-00-00, sevan.gegharquniq@mta.gov.am

ՈՐՈՇՈՒՄ

06 փետրվարի 2023 թվականի թիվ 131-Ա

ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 45-րդ հոդվածի 1-ին կետի 2-րդ ենթակետի, ՀՀ կառավարության՝ 19.07.2007թ. թիվ 843-Ն որոշման, Սևան համայնքի ավագանու՝ 14.12.2022թ. N108-Ն որոշման 1-ին կետով սահմանված թիվ 1 հավելվածի 7-րդ կետի ա և բ ենթակետերի, հիմք ընդունելով « Սանամյան Սարիբեկ» ԱՁ-ի կողմից ներկայացված հայտը՝ **որոշում եմ.**

1. «Սանամյան Սարիբեկ» ԱՁ -ին / գործունեությունը՝ ք.Սևան, Շահումյան փողոց թիվ 35 / 31 հասցե / տրամադրել 2023թ. 1-ին եռամսյակի համար՝
1) ոգելից և ալկոհոլային խմիչքների վաճառքի թույլտվություն՝ Սևան համայնքի բյուջեի 900165101354 հաշվեհամարին վճարելով տեղական տուրք՝ 10.100դրամ;
2) ծխախոտի արտադրանքի վաճառքի թույլտվություն՝ Սևան համայնքի բյուջեի 900165101339 հաշվեհամարին վճարելով տեղական տուրք՝ 10.100 դրամ :
2. Սույն որոշումն ուժի մեջ է՝ «Սանամյան Սարիբեկ» ԱՁ -ին որոշման ընդունման մասին իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՍԱՐԳԻՍ ՄՈՒՐԱԴՅԱՆ

2023 թվականի փետրվարի 06
ք.Սևան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶ
ՍԵՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետություն Գեղարքունիքի մարզ Սևան համայնք
ք. Սևան, Նաիրյան փ. 164, (0261) 2-43-23, 4-00-00, sevan.gegharquniq@mta.gov.am

ՈՐՈՇՈՒՄ

06 փետրվարի 2023 թվականի թիվ 132-Ա

ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 45-րդ հոդվածի 1-ին կետի 2-րդ ենթակետի, ՀՀ կառավարության՝ 19.07.2007թ. թիվ 843-Ն որոշման, Սևան համայնքի ավագանու՝ 14.12.2022թ. N108-Ն որոշման 1-ին կետով սահմանված թիվ 1 հավելվածի 7-րդ կետի ա և բ ենթակետերի, հիմք ընդունելով «Յուրիկ Թորոսյան» ԱՁ-ի կողմից ներկայացված հայտը՝ **որոշում եմ.**

1. « Յուրիկ Թորոսյան » ԱՁ-ին / գործունեությունը՝ ք. Սևան, Նաիրյան փողոց 53 հասցե / տրամադրել 2023թ. 1-ին եռամսյակի համար՝
1) ոգելից և ալկոհոլային խմիչքների վաճառքի թույլտվություն՝ Սևան համայնքի բյուջեի 900165101354 հաշվեհամարին վճարելով տեղական տուրք՝ 6000 դրամ;
2) ծխախոտի արտադրանքի վաճառքի թույլտվություն՝ Սևան համայնքի բյուջեի 900165101339 հաշվեհամարին վճարելով տեղական տուրք՝ 6000 դրամ :
2. Սույն որոշումն ուժի մեջ է՝ «Յուրիկ Թորոսյան» ԱՁ-ին որոշման ընդունման մասին իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՍԱՐԳԻՍ ՄՈՒՐԱԴՅԱՆ

2023 թվականի փետրվարի 06
ք.Սևան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶ
ՍԵՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետություն Գեղարքունիքի մարզ Սևան համայնք
ք. Սևան, Նաիրյան փ. 164, (0261) 2-43-23, 4-00-00, sevan.gegharquniq@mta.gov.am

ՈՐՈՇՈՒՄ

06 փետրվարի 2023 թվականի թիվ 133-Ա

ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 45-րդ հոդվածի 1-ին կետի 2-րդ ենթակետի, ՀՀ կառավարության՝ 19.07.2007թ. թիվ 843-Ն որոշման, Սևան համայնքի ավագանու՝ 14.12.2022թ. N108-Ն որոշման 1-ին կետով սահմանված թիվ 1 հավելվածի 7-րդ կետի ա և բ ենթակետերի, հիմք ընդունելով «Ռիփսիկ Մինասյան» ԱՁ-ի կողմից ներկայացված հայտը՝ **որոշում եմ.**

1. «Ռիփսիկ Մինասյան» ԱՁ-ին / գործունեությունը՝ ք.Սևան, Գրիբայեդով փողոց թիվ 9 / 38 հասցե / տրամադրել 2023թ. 1-ին եռամսյակի համար՝
1) ոգելից և ալկոհոլային խմիչքների վաճառքի թույլտվություն՝ Սևան համայնքի բյուջեի 900165101354 հաշվեհամարին վճարելով տեղական տուրք՝ 10.100դրամ;
2) ծխախոտի արտադրանքի վաճառքի թույլտվություն՝ Սևան համայնքի բյուջեի 900165101339 հաշվեհամարին վճարելով տեղական տուրք՝ 10.100 դրամ :
2. Սույն որոշումն ուժի մեջ է՝ «Ռիփսիկ Մինասյան» ԱՁ-ին որոշման ընդունման մասին իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՍԱՐԳԻՍ ՄՈՒՐԱԴՅԱՆ

2023 թվականի փետրվարի 06
ք.Սևան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶ
ՍԵՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետություն Գեղարքունիքի մարզ Սևան համայնք
ք. Սևան, Նաիրյան փ. 164, (0261) 2-43-23, 4-00-00, sevan.gegharquniq@mta.gov.am

ՈՐՈՇՈՒՄ

06 փետրվարի 2023 թվականի թիվ 134-Ա

ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 45 -րդ հոդվածի 1-ին մասի 8 -րդ կետի, «Տեղական տուրքերի և վճարների մասին» ՀՀ օրենքի 9-րդ և 12-րդ հոդվածի 7-րդ կետի, Սևան համայնքի ավագանու՝ 14.12.2022թ. N108-Ն որոշման 1-ին կետով սահմանված 1 հավելվածի և հիմք ընդունելով «ՍԻ ՓԻ ԷՍ ԷՆԵՐՋԻ ԳՐՈՒՊ» ՍՊԸ-ի տնօրենի հայտը՝ **որոշում եմ.**

1. «ՍԻ ՓԻ ԷՍ ԷՆԵՐՋԻ ԳՐՈՒՊ» ՍՊԸ-ին / գործունեությունը՝ Սևան համայնք, գ. Վարսերի վարչական սահման հասցե / տրամադրել 2023թվականի համար՝ համայնքի տարածքում սեղմված բնական գազի և հեղուկ վառելիքի մանրածախ առևտրի կետում վաճառքի թույլտվություն՝ Սևանի համայնքապետարանի 900165101370 հաշվեհամարին վճարելով հեղուկ վառելիքի թույլտվության համար տեղական տուրք:
2. Սույն որոշումն ուժի մեջ է՝ «ՍԻ ՓԻ ԷՍ ԷՆԵՐՋԻ ԳՐՈՒՊ» ՍՊԸ-ի տնօրենին որոշման ընդունման մասին իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՍԱՐԳԻՍ ՄՈՒՐԱԴՅԱՆ

2023 թվականի փետրվարի 06
ք.Սևան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶ
ՍԵՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետություն Գեղարքունիքի մարզ Սևան համայնք
ք. Սևան, Նաիրյան փ. 164, (0261) 2-43-23, 4-00-00, sevan.gegharquniq@mta.gov.am

ՈՐՈՇՈՒՄ

06 փետրվարի 2023 թվականի թիվ 135-Ա

ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 45 -րդ հոդվածի 1-ին մասի 8 -րդ կետի, «Տեղական տուրքերի և վճարների մասին» ՀՀ օրենքի 9-րդ և 12-րդ հոդվածի 7-րդ կետի, Սևան համայնքի ավագանու՝ 14.12.2022թ. N108-Ն որոշման 1-ին կետով սահմանված 1 հավելվածի 4.1 կետի և հիմք ընդունելով «ՍԻՓԻԷՍ ԷՆԵՐՋԻ ԳՐՈՒՊ» ՍՊԸ -ի տնօրենի հայտը՝ **որոշում եմ.**

1. «ՍԻ ՓԻ ԷՍ ԷՆԵՐՋԻ ԳՐՈՒՊ» ՍՊԸ-ին / գործունեությունը՝ ք. Սևան, Երևանյան խճուղի 29 հասցե / տրամադրել 2023 թվականի համար՝ համայնքի տարածքում սեղմված բնական գազի և հեղուկ վառելիքի մանրածախ առևտրի կետում վաճառքի թույլտվություն՝ Սևանի համայքապետարանի 900165101370 հաշվեհամարին վճարելով հեղուկ վառելիքի թույլտվության համար տեղական տուրք՝ 100.000 դրամ:
2. Սույն որոշումն ուժի մեջ է՝ «ՍԻ ՓԻ ԷՍ ԷՆԵՐՋԻ ԳՐՈՒՊ» ՍՊԸ-ի տնօրենին որոշման ընդունման մասին իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՍԱՐԳԻՍ ՄՈՒՐԱԴՅԱՆ

2023 թվականի փետրվարի 06
ք.Սևան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶ
ՍԵՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետություն Գեղարքունիքի մարզ Սևան համայնք
ք. Սևան, Նաիրյան փ. 164, (0261) 2-43-23, 4-00-00, sevan.gegharquniq@mta.gov.am

ՈՐՈՇՈՒՄ

08 փետրվարի 2023 թվականի թիվ 136-Ա

ԻՆՔՆԱԿԱՄ ԿԱՌՈՒՑՎԱԾ ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆ ՕՐԻՆԱԿԱՆԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի 1-ին կետի 24)-րդ ենթակետով, ՀՀ Քաղաքացիական օրենսգրքի 188-րդ հոդվածի 4-րդ կետով, ՀՀ կառավարության՝ 29.12.2005թ. N 2387-Ն, 18.05.2006թ. N 731-Ն որոշումներով, ՀՀ կառավարության՝ 18.05.2006թ. թիվ 912-Ն որոշման 3-րդ, 33-րդ կետերով, «Քաղաքաշինության մասին» ՀՀ օրենքի 14^3 հոդվածով, հիմք ընդունելով ք. Սևան, Չարենցի փողոց թիվ 37 տան բնակիչ Վոլոդյա Շանշիևի դիմումը՝ ք. Սևան, Չարենցի փողոց թիվ 37 հասցեում գտնվող բնակելի տանը կից ինքնակամ կառուցված 6.87քմ մակերեսով պարիսպն օրինականացնելու մասին, ինչպես նաև հաշվի առնելով, որ շինությունը կառուցված է համայնքային սեփականություն հանդիսացող հողատարածքի վրա, որի նկատմամբ ՀՀ Հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով սահմանված սահմանափակումներ չկան, որ կառույցի պահպանումը չի խախտում այլ անձանց իրավունքները և օրենքով պահպանվող շահերը կամ վտանգ չի սպառնում քաղաքացիների կյանքին ու առողջությանը, կառուցված չէ ինժեներատրանսպորտային օբյեկտների օտարման կամ անվտանգության գոտիներում կամ կառուցված չէ քաղաքաշինական նորմերի ու կանոնների էական խախտումներով և չի առաջացնում հարկադիր սերվիտուտ պահանջելու իրավունք, **որոշում եմ.**

1. Ք. Սևան, Չարենցի փողոց թիվ 37 հասցեում գտնվող բնակելի տանը կից Վոլոդյա Իոսիփի Շանշիևի կողմից ինքնակամ կառուցված 6.87քմ մակերեսով պարիսպը, զբաղեցրած ու սպասարկման համար նախատեսված 61.8քմ մակերեսով հողատարածքը ճանաչել համայնքային սեփականություն, հողամասի գործառնական նշանակությունը համարել փոփոխված՝ բնակավայրի այլ բնակելիից՝ բնակավայրի բնակելի կառուցապատման:
2. Ք. Սևան, Չարենցի փողոց թիվ 37 հասցեում գտնվող բնակելի տանը կից ինքնակամ կառուցված 6.87քմ մակերեսով պարիսպը ճանաչել օրինական՝ տրամադրելով ք. Սևան, Ե. Չարենցի փողոց թիվ 37 / 1 պարիսպ հասցե /հաշվառման տեղեկանք՝ 2023JSFJNB/:
3. Նկատի ունենալով, որ թույլ է տրվել ինքնակամություն, ուստի ինքնակամ կառույցի օրինականացման, պետական գրանցման, այդ թվում՝ համայնքային սեփականության ճանաչման և գրանցման ծախսերն իրականացվում են ինքնակամ կառույցն իրականացնողի միջոցներով:
4. Սույն որոշմամբ ծագող սեփականության իրավունքը ենթակա է պետական գրանցման:
5. Սույն որոշումն ուժի մեջ է՝ Վոլոդյա Շանշիևին սույն որոշման ընդունման մասին իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՍԱՐԳԻՍ ՄՈՒՐԱԴՅԱՆ

2023 թվականի փետրվարի 08
ք.Սևան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶ
ՍԵՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետություն Գեղարքունիքի մարզ Սևան համայնք
ք. Սևան, Նաիրյան փ. 164, (0261) 2-43-23, 4-00-00, sevan.gegharquniq@mta.gov.am

ՈՐՈՇՈՒՄ

08 փետրվարի 2023 թվականի թիվ 137-Ա

ԽՆԱՄԱԿԱԼՈՒԹՅՈՒՆ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետի, ՀՀ Քաղաքացիական օրենսգրքի 33-րդ հոդվածի 1-ին և 2-րդ մասերի, 34-րդ, 37-րդ հոդվածների, ՀՀ կառավարության՝ 02.06.2016թ. N631-Ն որոշման պահանջներով, հիմք ընդունելով ՀՀ Գեղարքունիքի մարզի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանի թիվ ԳԴ4/0065/02/22 քաղաքացիական գործով վճիռն անձին անգործունակ ճանաչելու մասին, Սևան համայնք, գ.Լճաշեն, 24 փ., 1.նրբ., տ1 հասցեի բնակիչ Մանվել Ապավենի Գրիգորյանի դիմումը՝ խնամակալություն սահմանելու մասին, հաշվի առնելով Սևանի համայնքապետարանի խնամակալության և հոգաբարձության հանձնաժողովի կողմից տրված եզրակացությունը, **որոշում եմ.**

1. Խնամակալություն սահմանել ՀՀ Գեղարքունիքի մարզի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանի թիվ ԳԴ4/0065/02/22 վճռով անգործունակ ճանաչված Էմմա Մանվելի Գրիգորյանի /ծնված՝ 18.12.2003թ., անձնագիր՝ AU0574989/ նկատմամբ և Մանվել Ապավենի Գրիգորյանին /ծնված՝ 27.08.1981թ., անձնագիր՝ AR0311263/ ճանաչել նրա խնամակալ:
2. Պարտավորեցնել խնամակալ Մանվել Գրիգորյանին՝ հոգալ իր խնամարկյալի ապրուստը, ապահովել նրա խնամքն ու բուժումը, կրթությունը և դաստիրարակությունը, պաշտպանել նրա իրավունքներն ու շահերը:
3. Սույն որոշումն ուժի մեջ է՝ պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՍԱՐԳԻՍ ՄՈՒՐԱԴՅԱՆ

2023 թվականի փետրվարի 08
ք.Սևան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶ
ՍԵՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետություն Գեղարքունիքի մարզ Սևան համայնք
ք. Սևան, Նաիրյան փ. 164, (0261) 2-43-23, 4-00-00, sevan.gegharquniq@mta.gov.am

ՈՐՈՇՈՒՄ

08 փետրվարի 2023 թվականի թիվ 138-Ա

ՍԵՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ՝ 04.01.2023Թ. N 4-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 33-րդ և 34-րդ հոդվածները՝ **որոշում եմ.**

1. Սևան համայնքի ղեկավարի՝ 04.01.2023թ. «Ինքնակամ կառուցված անավարտ շինությունն օրինականացնելու մասին» 4-Ա որոշման վերնագրում կատարել հետևյալ փոփոխությունը՝

1) «Ինքնակամ կառուցված անավարտ շինությունն օրինականացնելու մասին» բառերի փոխարեն կարդալ «Ինքնակամ կառուցված շինությունն օրինականացնելու մասին» բառերը:

2. Սույն որոշումն ուժի մեջ է՝ պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՍԱՐԳԻՍ ՄՈՒՐԱԴՅԱՆ

2023 թվականի փետրվարի 08
ք.Սևան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶ
ՍԵՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետություն Գեղարքունիքի մարզ Սևան համայնք
ք. Սևան, Նաիրյան փ. 164, (0261) 2-43-23, 4-00-00, sevan.gegharquniq@mta.gov.am

ՈՐՈՇՈՒՄ

08 փետրվարի 2023 թվականի թիվ 139-Ա

ՀՈՂԱՏԱՐԱԾՔԸ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի 1-ին կետի 24)-րդ ենթակետով, ՀՀ Հողային օրենսգրքի 86-րդ հոդվածի 2-րդ կետով, «Քաղաքաշինության մասին» ՀՀ օրենքի 14^3 հոդվածով, ՀՀ կառավարության՝ 29.12.2005թ. թիվ 2387-Ն որոշմամբ՝ **որոշում եմ.**

1. Համաձայն ներկայացվող հատակագծի՝ 90քմ մակերեսով հողամասը /ք. Սևան/ ճանաչել համայնքային սեփականություն՝ տրամադրելով Սևան համայնք, ք. Սևան, Մ. Նալբանդյան փողոց թիվ 28 / 31 հողամաս հասցե:
2. Սույն որոշումն ուժի մեջ է՝ պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՍԱՐԳԻՍ ՄՈՒՐԱԴՅԱՆ

2023 թվականի փետրվարի 08
ք.Սևան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶ
ՍԵՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետություն Գեղարքունիքի մարզ Սևան համայնք
ք. Սևան, Նաիրյան փ. 164, (0261) 2-43-23, 4-00-00, sevan.gegharquniq@mta.gov.am

ՈՐՈՇՈՒՄ

08 փետրվարի 2023 թվականի թիվ 140-Ա

ԻՆՔՆԱԿԱՄ ԿԱՌՈՒՑՎԱԾ ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆ ՕՐԻՆԱԿԱՆԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի 1-ին կետի 24)-րդ ենթակետով, ՀՀ Քաղաքացիական օրենսգրքի 188-րդ հոդվածի 4-րդ կետով, ՀՀ կառավարության՝ 29.12.2005թ. N 2387-Ն, 18.05.2006թ. N 731-Ն որոշումներով, ՀՀ կառավարության՝ 18.05.2006թ. թիվ 912-Ն որոշման 3-րդ, 33-րդ կետերով, «Քաղաքաշինության մասին» ՀՀ օրենքի 14^3 հոդվածով, հիմք ընդունելով ք. Սևան, Խաղաղության փողոց թիվ 2 / 6 բնակարանի բնակիչ Մնացական Ավետիսյանի դիմումը՝ ք. Սևան, Նալբանդյան փողոցի թիվ 45 շենքի հյուսիսային մասում՝ ավտոտնակների շարքում, համայնքային սեփականություն հանդիսացող հողատարածքի վրա իր կողմից ինքնակամ կառուցված 21.52քմ մակերեսով ավտոտնակն օրինականացնելու մասին, ինչպես նաև հաշվի առնելով, որ շինությունը կառուցված է համայնքային սեփականություն հանդիսացող հողատարածքի վրա, որի նկատմամբ ՀՀ Հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով սահմանված սահմանափակումներ չկան, որ կառույցի պահպանումը չի խախտում այլ անձանց իրավունքները և օրենքով պահպանվող շահերը կամ վտանգ չի սպառնում քաղաքացիների կյանքին ու առողջությանը, կառուցված չէ ինժեներատրանսպորտային օբյեկտների օտարման կամ անվտանգության գոտիներում կամ կառուցված չէ քաղաքաշինական նորմերի ու կանոնների էական խախտումներով և չի առաջացնում հարկադիր սերվիտուտ պահանջելու իրավունք, **որոշում եմ.**

1. Մնացական Գուրգենի Ավետիսյանի կողմից ք. Սևան, Նալբանդյան փողոցի թիվ 45 շենքի հյուսիսային մասում՝ ավտոտնակների շարքում, ինքնակամ կառուցված 21.52քմ մակերեսով ավտոտնակը /ներքին մակերեսը՝ 20.94քմ/, զբաղեցրած 21.52քմ մակերեսով հողատարածքը ճանաչել համայնքային սեփականություն, հողամասի գործառնական նշանակությունը համարել փոփոխված՝ բնակավայրի ընդհանուրից՝ բնակավայրի բնակելի կառուցապատման:
2. Մնացական Ավետիսյանի կողմից ինքնակամ կառուցված 21.52քմ մակերեսով ավտոտնակը ճանաչել օրինական /հաշվառման տեղեկանք՝ 2023Q8YQRK/՝ տրամադրելով Սևան համայնք, ք. Սևան, Հրազդան փողոց թիվ 42 / 75 ավտոտնակ հասցե:
3. Նկատի ունենալով, որ թույլ է տրվել ինքնակամություն, ուստի ինքնակամ կառույցի օրինականացման, պետական գրանցման, այդ թվում՝ համայնքային սեփականության ճանաչման և գրանցման ծախսերն իրականացվում են ինքնակամ կառույցն իրականացնողի միջոցներով:
4. Սույն որոշմամբ ծագող սեփականության իրավունքը ենթակա է պետական գրանցման:
5. Սույն որոշումն ուժի մեջ է՝ Մնացական Ավետիսյանին սույն որոշման ընդունման մասին իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՍԱՐԳԻՍ ՄՈՒՐԱԴՅԱՆ

2023 թվականի փետրվարի 08
ք.Սևան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶ
ՍԵՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետություն Գեղարքունիքի մարզ Սևան համայնք
ք. Սևան, Նաիրյան փ. 164, (0261) 2-43-23, 4-00-00, sevan.gegharquniq@mta.gov.am

ՈՐՈՇՈՒՄ

09 փետրվարի 2023 թվականի թիվ 141-Ա

ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի 1-ին կետի 24)-րդ ենթակետով, ՀՀ կառավարության՝ 29.12.2005թ. թիվ 2387-Ն որոշմամբ և հիմք ընդունելով Գեղարքունիք մարզ, գ. Դդմաշեն, 10-րդ փողոց թիվ 9 տան բնակիչ Վարդան Անդրեսյանի դիմումը՝ համատեղ սեփականության իրավունքով Սուրեն, Արփիկ, Վարդան և Վարդուհի Անդրեսյաններին պատկանող, Գեղարքունիքի մարզ, գ. Դդմաշեն, տնամերձ, 10-րդ փողոց հասցեում գտնվող տան /վկայական՝ 1059145, տրված՝ 09.11.2003թ./ համար նոր հասցե տրամադրելու մասին, **որոշում եմ.**

1. Գեղարքունիքի մարզ, գ. Դդմաշեն, տնամերձ, 10-րդ փողոց, 9 հասցեում գտնվող տան համար տրամադրել Սևան համայնք, գ. Դդմաշեն, 10-րդ փողոց թիվ 9 բնակելի տուն հասցե:
2. Սույն որոշումը հիմք է պետական գրանցում ստանալու համար:
3. Սույն որոշումն ուժի մեջ է՝ Վարդան Անդրեսյանին սույն որոշման ընդունման մասին իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՍԱՐԳԻՍ ՄՈՒՐԱԴՅԱՆ

2023 թվականի փետրվարի 09
ք.Սևան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶ
ՍԵՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետություն Գեղարքունիքի մարզ Սևան համայնք
ք. Սևան, Նաիրյան փ. 164, (0261) 2-43-23, 4-00-00, sevan.gegharquniq@mta.gov.am

ՈՐՈՇՈՒՄ

09 փետրվարի 2023 թվականի թիվ 142-Ա

ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի 1-ին կետի 24)-րդ ենթակետով, ՀՀ կառավարության՝ 29.12.2005թ. թիվ 2387-Ն որոշմամբ Սևան համայնք, գ. Վարսեր, Երևան-Սևան մայրուղի 56-57կմ, 133 հողամաս հասցեում գտնվող անշարժ գույքն /վկայական՝09062022-05-0023/ առանձնացնելու և առանձնացված հողամասերի համար նոր հասցեներ տրամադրելու մասին, **որոշում եմ.**

1. Սևան համայնք, գ. Վարսեր, Երևան-Սևան մայրուղի 56-57կմ, 133 հասցեում գտնվող 7.1հա մակերեսով հողամասը, համաձայն ներկայացվող հատակագծերի, բաժանել 3 միավոր գույքի և տրամադրել հասցեներ՝

1) առաջին միավոր գույքի՝ 20930.0քմ մակերեսով հողատարածքի համար տրամադրել Սևան համայնք, գ. Վարսեր, Երևան-Սևան մայրուղի 56-57կմ, 133 / 2 հողամաս հասցե;
2) երկրորդ միավոր գույքի՝ 23930.0քմ մակերեսով անշարժ գույքի համար տրամադրել Սևան համայնք, գ. Վարսեր, Երևան-Սևան մայրուղի 56-57կմ, 133 / 3 հողամաս հասցե;
3) երրորդ միավոր գույքի՝ 26140.0քմ մակերեսով անշարժ գույքի համար տրամադրել Սևան համայնք, գ. Վարսեր, Երևան-Սևան մայրուղի 56-57կմ, 133 / 4 հողամաս հասցե:

2. Սույն որոշումը հիմք է պետական գրանցում ստանալու համար:
3. Սույն որոշումն ուժի մեջ է՝ պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՍԱՐԳԻՍ ՄՈՒՐԱԴՅԱՆ

2023 թվականի փետրվարի 09
ք.Սևան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶ
ՍԵՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետություն Գեղարքունիքի մարզ Սևան համայնք
ք. Սևան, Նաիրյան փ. 164, (0261) 2-43-23, 4-00-00, sevan.gegharquniq@mta.gov.am

ՈՐՈՇՈՒՄ

09 փետրվարի 2023 թվականի թիվ 143-Ա

ՀՈՂԱՏԱՐԱԾՔՆ ՈՒՂՂԱԿԻ ՎԱՃԱՌՔԻ ԿԱՐԳՈՎ ՕՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի 1-ին կետի 24-րդ ենթակետով, ՀՀ կառավարության՝ 27.04.2006թ. «ՀՀ կառավարության՝ 2001թ. ապրիլի 12-ի թիվ 286-Ն որոշման մեջ փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» թիվ 844-Ն որոշման 1-ին կետի 6-րդ ենթակետով, ՀՀ կառավարության՝ 26.05.2016թ. N550-Ն, 29.12.2005թ. թիվ 2387-Ն որոշմամբ, հիմք ընդունելով ք. Սևան, Նաիրյան փողոց թիվ 143 / 13 բնակարանի բնակիչ Սևակ Ստեփանյանի դիմումը՝ սեփականության իրավունքով իրեն պատկանող, Գեղարքունիքի մարզ, Վարսեր համայնք, Երևանյան խճուղի 19 հասցեում գտնվող հողամասի /վկայական՝ 02102015-05-0016 / զբաղեցրած 0.3000հա մակերեսով հողատարածքն ընդլայնելու մասին, հաշվի առնելով, որ նշված հողատարածքը չի հանդիսանում ՀՀ Հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով նախատեսված հողատարածք, **որոշում եմ.**

1. Համաձայն ներկայացվող հատակագծի՝ Գեղարքունիքի մարզ, Վարսեր համայնք, Երևանյան խճուղի 19 հասցեում գտնվող 0.3000հա մակերեսով հողատարածքին կից 148.4քմ մակերեսով հողատարածքը ճանաչել համայնքային սեփականություն և կատարել պետական գրանցում՝ տրամադրելով Սևան համայնք, գ. Վարսեր, Երևանյան խճուղի 19 / 2 հողամաս հասցե:
2. Սեփականության իրավունքով Սևակ Գագիկի Ստեփանյանին պատկանող, Գեղարքունիքի մարզ, Վարսեր համայնք, Երևանյան խճուղի 19 հասցեում գտնվող հողամասի զբաղեցրած 0.3000հա մակերեսով հողատարածքն ընդլայնել 0.01484հա մակերեսով / հասցե՝ Սևան համայնք, գ. Վարսեր, Երևանյան խճուղի 19 / 2 հողամաս հասցե/, ուղղակի վաճառքի կարգով, հողի կադաստրային արժեքը՝ 1-քմ 792դրամ, վճարելու պայմանով:
3. Սույն որոշումը ենթակա է պետական գրանցման հողի կադաստրային արժեքը մուծելուց հետո :
4. Սույն որոշումն ուժի մեջ է՝ Սևակ Ստեփանյանին սույն որոշման ընդունման մասին իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՍԱՐԳԻՍ ՄՈՒՐԱԴՅԱՆ

2023 թվականի փետրվարի 09
ք.Սևան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶ
ՍԵՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետություն Գեղարքունիքի մարզ Սևան համայնք
ք. Սևան, Նաիրյան փ. 164, (0261) 2-43-23, 4-00-00, sevan.gegharquniq@mta.gov.am

ՈՐՈՇՈՒՄ

09 փետրվարի 2023 թվականի թիվ 144-Ա

ՍԵՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ՝ 08.12.2022Թ. N 1468-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 33-րդ և 34-րդ հոդվածները՝**որոշում եմ.**

1. Սևան համայնքի ղեկավարի՝ 08.12.2022թ. «Հողատարածքը համայնքային սեփականություն ճանաչելու մասին» N1468-Ա որոշման մեջ կատարել հետևյալ փոփոխությունը՝

1) «0.01663հա մակերեսով» բառերի փոխարեն կարդալ «0.009729հա մակերեսով» բառերը:

2. Սույն որոշումն ուժի մեջ է՝ պաշտոնական հրապարակման հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՍԱՐԳԻՍ ՄՈՒՐԱԴՅԱՆ

2023 թվականի փետրվարի 09
ք.Սևան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶ ՍԵՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետություն Գեղարքունիքի մարզ Սևան համայնք
ք. Սևան, Նաիրյան փ. 164, (0261) 2-43-23, 4-00-00, sevan.gegharquniq@mta.gov.am

ՈՐՈՇՈՒՄ

09 փետրվարի 2023 թվականի թիվ 145-Ա

ՇԻՆԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 42-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի, Հայաստանի Հանրապետության կառավարության՝ 2015 թվականի մարտի 19-ի N 596-Ն որոշման և հիմք ընդունելով Մովսես Կարապետյանի դիմումը՝ **որոշում եմ.**

1. Մովսես Կարապետյանին տրամադրել շինարարության թույլտվություն Սևան համայնք, գ. Չկալովկա, 5-րդ փողոց թիվ 14 հասցեում գտնվող կիսակառույց բնակելի տան կառուցման համար:
2. Մովսես Կարապետյանը շինարարական աշխատանքներն սկսելուց առնվազն երեք օր առաջ պարտավոր է Սևանի համայնքապետարանին և Հայաստանի Հանրապետության քաղաքաշինության, տեխնիկական և հրդեհային անվտանգության տեսչական մարմնին ներկայացնել N 2-5 ձևի տեղեկանք:
3. Մովսես Կարապետյանը պարտավոր է շինարարական աշխատանքներն ավարտելուց հետո՝ բայց ոչ ուշ, քան շինարարության թույլտվության ժամկետը լրանալուց 30 օր առաջ, դիմել Սևան համայնքի ղեկավարին՝ ավարտված շինարարության շահագործումը փաստագրելու համար, հակառակ դեպքում՝ կենթարկվի վարչական պատասխանատվության օրենքով սահմանված կարգով:
4. Սույն որոշումն ուժի մեջ է՝ Մովսես Կարապետյանին որոշման ընդունման մասին իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՍԱՐԳԻՍ ՄՈՒՐԱԴՅԱՆ

2023 թվականի փետրվարի 09
ք.Սևան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶ
ՍԵՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետություն Գեղարքունիքի մարզ Սևան համայնք
ք. Սևան, Նաիրյան փ. 164, (0261) 2-43-23, 4-00-00, sevan.gegharquniq@mta.gov.am

ՈՐՈՇՈՒՄ

09 փետրվարի 2023 թվականի թիվ 146-Ա

ՇԻՆԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 42-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի, Հայաստանի Հանրապետության կառավարության՝ 2015 թվականի մարտի 19-ի N 596-Ն որոշման և հիմք ընդունելով Հովհաննես Մելիքյանի դիմումը՝ **որոշում եմ.**

1. Հովհաննես Մելիքյանին տրամադրել շինարարության թույլտվություն Սևան համայնք, ք. Սևան, Գործարանային փողոց թիվ 9 / 6 հասցեում գտնվող հողատարածքում ջերմոցային տնտեսության և օժանդակ շինության կառուցման համար :
2. Հովհաննես Մելիքյանը շինարարական աշխատանքներն սկսելուց առնվազն երեք օր առաջ պարտավոր է Սևանի համայնքապետարանին և Հայաստանի Հանրապետության քաղաքաշինության, տեխնիկական և հրդեհային անվտանգության տեսչական մարմնին ներկայացնել N 2-5 ձևի տեղեկանք:
3. Հովհաննես Մելիքյանը պարտավոր է շինարարական աշխատանքներն ավարտելուց հետո՝ բայց ոչ ուշ, քան շինարարության թույլտվության ժամկետը լրանալուց 30 օր առաջ, դիմել Սևան համայնքի ղեկավարին՝ ավարտված շինարարության շահագործումը փաստագրելու համար, հակառակ դեպքում՝ կենթարկվի վարչական պատասխանատվության օրենքով սահմանված կարգով:
4. Սույն որոշումն ուժի մեջ է՝ Հովհաննես Մելիքյանին որոշման ընդունման մասին իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՍԱՐԳԻՍ ՄՈՒՐԱԴՅԱՆ

2023 թվականի փետրվարի 09
ք.Սևան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶ
ՍԵՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետություն Գեղարքունիքի մարզ Սևան համայնք
ք. Սևան, Նաիրյան փ. 164, (0261) 2-43-23, 4-00-00, sevan.gegharquniq@mta.gov.am

ՈՐՈՇՈՒՄ

09 փետրվարի 2023 թվականի թիվ 147-Ա

ՆԱԽԱԳԾՄԱՆ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 42-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետի, Հայաստանի Հանրապետության կառավարության՝ 2015 թվականի մարտի 19-ի N 596-Ն որոշման, հիմք ընդունելով քաղ. Էմիլ Բզնունու հայտը՝ **որոշում եմ.**

1. Էմիլ Բզնունուն տրամադրել նախագծման թույլտվություն Գեղարքունիքի մարզ, Սևան համայնք, ք. Սևան, Գայի փողոց թիվ 32 հասցեում գտնվող հողատարածքում կցակառույցի քանդման, կցակառույցի և 23.0 գծամետր երկարությամբ պարսպի կառուցման համար :
2. Էմիլ Բզնունը պարտավոր է նախագծային փաստաթղթերը ներկայացնել համաձայնեցման և ստանալ շինարարության թույլտվություն:
3. Սույն որոշումն ուժի մեջ է՝ Էմիլ Բզնունուն որոշման ընդունման մասին իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՍԱՐԳԻՍ ՄՈՒՐԱԴՅԱՆ

2023 թվականի փետրվարի 09
ք.Սևան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶ
ՍԵՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետություն Գեղարքունիքի մարզ Սևան համայնք
ք. Սևան, Նաիրյան փ. 164, (0261) 2-43-23, 4-00-00, sevan.gegharquniq@mta.gov.am

ՈՐՈՇՈՒՄ

09 փետրվարի 2023 թվականի թիվ 148-Ա

ԲՆԱԿԵԼԻ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՍԵՓԱԿԱՆ ԳՈՒՅՔ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի 1-ին կետի 24)-րդ ենթակետով, ՀՀ հողային օրենսգրքի 64-րդ հոդվածի 2-րդ և 3-րդ կետերով, 28.06.2008թ. ՀՕ-117-Ն օրենքի 1-ին հոդվածով, ՀՀ կառավարության՝ 29.12.2005թ. թիվ 2387-Ն որոշմամբ և հիմք ընդունելով Հայկ Մկրտչյանի դիմումը՝ Ծովագյուղի հողային բարեփախումների և սեփականաշնորհման տեղական հանձնաժողովի՝ 14.07.1992թ. N 3 նիստի որոշմամբ Սվետլանա Օհանյանին, Հայկ, Արմենուհի, Վիկտորյա, Մանուշ Մկրտչաններին պատկանող, Գեղարքունիքի մարզ, Ծովագյուղ գյուղում գտնվող անհատական բնակելի տան կառուցման համար հատկացված 960քմ մակերեսով հողատարածքին կից գտնվող 56.7քմ մակերեսով հողատարածքն իրենց տրամադրելու մինչև 2001թ. մայիսի 15-ը կառուցված բնակելի նշանակության շինությունները սեփական գույք ճանաչելու մասին, ինչպես նաև նկատի ունենալով, որ դրանք չեն գտնվում ՀՀ հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով սահմանված հողամասերի վրա, որոնց պահպանումը չի խախտում այլ անձանց իրավունքները և օրենքով պահպանվող շահերը կամ վտանգ չի սպառնում քաղաքացիների կյանքին ու առողջությանը, կառուցված չեն ինժեներատրանսպորտային օբյեկտների օտարման կամ անվտանգության գոտիներում կամ կառուցված չեն քաղաքաշինական նորմերի ու կանոնների էական խախտումներով և չեն առաջացնում հարկադիր սերվիտուտ պահանջելու իրավունք, **որոշում եմ.**

1. Ծովագյուղի հողային բարեփախումների և սեփականաշնորհման տեղական հանձնաժողովի՝ 14.07.1992թ. N3 նիստի որոշմամբ Հայկ Անուշավանի Մկրտչյանին /ծնված՝ 01.12.1957թ./, Սվետլանա Գագիկի Օհանյանին /ծնված՝ 24.05.1961թ./, Արմենուհի Հայկի Մկրտչյանին /ծնված՝ 12.08.1979թ./, Վիկտորյա Հայկի Մկրտչյանին /ծնված՝ 13.06.1982թ./, Մանուշ Հայկի Մկրտչյանին /ծնված՝ 27.12.1988թ./ պատկանող, Գեղարքունիքի մարզ, Ծովագյուղ գյուղում գտնվող անհատական բնակելի տան կառուցման համար հատկացված 960քմ մակերեսով հողատարածքի և հողատարածքին կից 56.7քմ մակերեսով հողատարածքի նկատմամբ Սվետլանա Օհանյանի, Հայկ, Արմենուհի, Վիկտորյա և Մանուշ Մկրտչյանների սեփականության իրավունքը:
2. Սեփականության իրավունքով Սվետլանա Օհանյանին, Հայկ, Արմենուհի, Վիկտորյա և Մանուշ Մկրտչաններին պատկանող Գեղարքունիքի մարզ, Ծովագյուղ գյուղում գտնվող, անհատական բնակելի տան կառուցման համար 1016.7քմ մակերեսով հողատարածքում 1985թ. կառուցված 179.42քմ մակերեսով բնակելի տունը /ներքին մակերեսը՝ 116.12 քմ/, 79.9քմ մակերեսով նկուղը /ներքին մակերեսը՝ 51.61քմ/,

16.47քմ մակերեսով խոհանոցը / ներքին մակերեսը՝ 13.37քմ/, 22.43քմ մակերեսով հարթակը, 1965թ. կառուցված 52.04քմ մակերեսով խորդանոցը /ներքին մակերեսը՝46.09քմ/, 1989թ. կառուցված 49.55քմ մակերեսով ավտոտնակը /ներքին մակերեսը՝ 46.01քմ/, 1986թ. կառուցված 47.31քմ մակերեսով անասնագոմը /ներքին մակերեսը՝ 36.99քմ/ ճանաչել Սվետլանա Օհանյանի, Հայկ, Արմենուհի, Վիկտորյա և Մանուշ Մկրտչյանների սեփական գույքը՝ տրամադրելով Սևան համայնք, գյուղ Ծովագյուղ, 5-րդ փողոց թիվ 10 բնակելի տուն հասցե:

3. Սույն որոշումն ուժի մեջ է՝ Հայկ Մկրտչյանին սույն որոշման ընդունման մասին իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՍԱՐԳԻՍ ՄՈՒՐԱԴՅԱՆ

2023 թվականի փետրվարի 09
ք.Սևան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶ
ՍԵՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետություն Գեղարքունիքի մարզ Սևան համայնք
ք. Սևան, Նաիրյան փ. 164, (0261) 2-43-23, 4-00-00, sevan.gegharquniq@mta.gov.am

ՈՐՈՇՈՒՄ

09 փետրվարի 2023 թվականի թիվ 149-Ա

ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 45-րդ հոդվածի 1-ին կետի 2-րդ ենթակետի, ՀՀ կառավարության՝19.07.2007թ. թիվ 843-Ն որոշման, Սևան համայնքի ավագանու՝ 14.12.2022թ. N108-Ն որոշման 1-ին կետով սահմանված թիվ 1 հավելվածի և 7-րդ կետի ա և բ ենթակետերի, հիմք ընդունելով «Կարինե Պետրոսյան» ԱՁ-ի կողմից ներկայացված հայտը՝ **որոշում եմ.**

1. «Կարինե Պետրոսյան» ԱՁ-ին / գործունեությունը՝ Սևան համայնք, գ. Նորաշեն, հասցե/ տրամադրել 2023թ. 1-ին եռամսյակի համար՝
1.1 ոգելից և ալկոհոլային խմիչքների վաճառքի թույլտվություն՝ Սևան համայնքի բյուջեի 900165101354 հաշվեհամարին վճարելով տեղական տուրք;
1.2 ծխախոտի արտադրանքի վաճառքի թույլտվություն՝ Սևան համայնքի բյուջեի 900165101339 հաշվեհամարին վճարելով տեղական տուրք :
2. Սույն որոշումն ուժի մեջ է՝ «Կարինե Պետրոսյան» ԱՁ-ին որոշման ընդունման մասին իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՍԱՐԳԻՍ ՄՈՒՐԱԴՅԱՆ

2023 թվականի փետրվարի 09
ք.Սևան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶ
ՍԵՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետություն Գեղարքունիքի մարզ Սևան համայնք
ք. Սևան, Նաիրյան փ. 164, (0261) 2-43-23, 4-00-00, sevan.gegharquniq@mta.gov.am

ՈՐՈՇՈՒՄ

10 փետրվարի 2023 թվականի թիվ 150-Ա

ԻՆՔՆԱԿԱՄ ԿԱՌՈՒՑՎԱԾ ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆ ՕՐԻՆԱԿԱՆԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի 1-ին կետի 24)-րդ ենթակետով, ՀՀ Քաղաքացիական օրենսգրքի 188-րդ հոդվածի 4-րդ կետով, ՀՀ կառավարության՝ 29.12.2005թ. N 2387-Ն, 18.05.2006թ. N 731-Ն որոշումներով, ՀՀ կառավարության՝ 18.05.2006թ. թիվ 912-Ն որոշման 3-րդ, 33-րդ կետերով, «Քաղաքաշինության մասին» ՀՀ օրենքի 14^3 հոդվածով, հիմք ընդունելով ք. Սևան, Նալբանդյան փողոց թիվ 39 / 31 բնակարանի բնակիչ Վարդգես Պողոսյանի դիմումը՝ ք. Սևան« Նալբանդյան փողոցի թիվ 39 շենքի հարևանությամբ՝ ավտոտնակների շարքում, համայնքային սեփականություն հանդիսացող հողատարածքի վրա իր կողմից ինքնակամ կառուցված 33.10քմ մակերեսով ավտոտնակն օրինականացնելու մասին, ինչպես նաև հաշվի առնելով, որ շինությունը կառուցված է համայնքային սեփականություն հանդիսացող հողատարածքի վրա, որի նկատմամբ ՀՀ Հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով սահմանված սահմանափակումներ չկան, որ կառույցի պահպանումը չի խախտում այլ անձանց իրավունքները և օրենքով պահպանվող շահերը կամ վտանգ չի սպառնում քաղաքացիների կյանքին ու առողջությանը, կառուցված չէ ինժեներատրանսպորտային օբյեկտների օտարման կամ անվտանգության գոտիներում կամ կառուցված չէ քաղաքաշինական նորմերի ու կանոնների էական խախտումներով և չի առաջացնում հարկադիր սերվիտուտ պահանջելու իրավունք, **որոշում եմ.**

1. Վարդգես Մելիքսեթի Պողոսյանի կողմից ք. Սևան, Նալբանդյան փողոցի թիվ 39 շենքի հարևանությամբ՝ ավտոտնակների շարքում, ինքնակամ կառուցված 33.10քմ մակերեսով ավտոտնակը /ներքին մակերեսը՝ 29.57քմ/, զբաղեցրած 33.10քմ մակերեսով հողատարածքը ճանաչել համայնքային սեփականություն, հողամասի գործառնական նշանակությունը համարել փոփոխված՝ բնակավայրի ընդհանուրից՝ բնակավայրի բնակելի կառուցապատման:
2. Վարդգես Պողոսյանի կողմից ինքնակամ կառուցված 33.10քմ մակերեսով ավտոտնակը ճանաչել օրինական /հաշվառման տեղեկանք՝ 2023L7ZUTE/՝ տրամադրելով Սևան համայնք, ք. Սևան, Հրազդան փողոց թիվ 42 / 107 ավտոտնակ հասցե:
3. Նկատի ունենալով, որ թույլ է տրվել ինքնակամություն, ուստի ինքնակամ կառույցի օրինականացման, պետական գրանցման, այդ թվում՝ համայնքային սեփականության ճանաչման և գրանցման ծախսերն իրականացվում են ինքնակամ կառույցն իրականացնողի միջոցներով:
4. Սույն որոշմամբ ծագող սեփականության իրավունքը ենթակա է պետական գրանցման:
5. Սույն որոշումն ուժի մեջ է՝ Վարդգես Պողոսյանին սույն որոշման ընդունման մասին իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՍԱՐԳԻՍ ՄՈՒՐԱԴՅԱՆ

2023 թվականի փետրվարի 10
ք.Սևան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶ
ՍԵՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետություն Գեղարքունիքի մարզ Սևան համայնք
ք. Սևան, Նաիրյան փ. 164, (0261) 2-43-23, 4-00-00, sevan.gegharquniq@mta.gov.am

ՈՐՈՇՈՒՄ

10 փետրվարի 2023 թվականի թիվ 151-Ա

ՀՈՂԱՏԱՐԱԾՔՆ ՈՒՂՂԱԿԻ ՎԱՃԱՌՔԻ ԿԱՐԳՈՎ ՕՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի 1-ին կետի 24-րդ ենթակետով, ՀՀ կառավարության՝ 27.04.2006թ. «ՀՀ կառավարության՝ 2001թ. ապրիլի 12-ի թիվ 286-Ն որոշման մեջ փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» թիվ 844-Ն որոշման 1-ին կետի 6-րդ ենթակետով. ՀՀ կառավարության՝ 26.05.2016թ N550-Ն, 29.12.2005. թիվ 2387-Ն որոշմամբ, հիմք ընդունելով ք. Սևան, Սայաթ-Նովա փողոց թիվ 15 / 12 բնակարանի բնակիչ Անդրանիկ Մելոյանի դիմումը՝ սեփականության իրավունքով իրեն պատկանող, համայնք Սևան ք. Նաիրյան փողոց թիվ 164 / 17 հասցեում գտնվող հողամասի / վկայական՝10062021-05-0050 / զբաղեցրած 30.63քմ մակերեսով հողատարածքն ընդլայնելու մասին, հաշվի առնելով, որ նշված հողատարածքը չի հանդիսանում ՀՀ Հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով նախատեսված հողատարածք, **որոշում եմ.**

1. Համաձայն ներկայացվող հատակագծի՝ Սևան համայնք, ք. Սևան, Նաիրյան փողոց թիվ 164 / 17 հասցեում գտնվող 30.63քմ մակերեսով հողատարածքին կից 21.47քմ մակերեսով հողատարածքը ճանաչել համայնքային սեփականություն և կատարել պետական գրանցում՝ տրամադրելով Սևան համայնք, ք. Սևան, Նաիրյան փողոց թիվ 164 / 19 հողամաս հասցե:
2. Սեփականության իրավունքով Անդրանիկ Փայլակի Մելոյանին պատկանող, համայնք Սևան ք. Նաիրյան փողոց թիվ 164 / 17 հասցեում գտնվող հողամասի զբաղեցրած 30.63քմ մակերեսով հողատարածքն ընդլայնել 21.47քմ մակերեսով / հասցե՝ Սևան համայնք, ք. Սևան, Նաիրյան փողոց թիվ 164 / 19 հողամաս/, ուղղակի վաճառքի կարգով, հողի կադաստրային արժեքը՝ 1-քմ 4441.8 դրամ, վճարելու պայմանով:
3. Սույն որոշումը ենթակա է պետական գրանցման հողի կադաստրային արժեքը մուծելուց հետո :
4. Սույն որոշումն ուժի մեջ է՝ Անդրանիկ Մելոյանին սույն որոշման ընդունման մասին իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ ՝ ՍԱՐԳԻՍ ՄՈՒՐԱԴՅԱՆ

2023 թվականի փետրվարի 10
ք.Սևան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶ
ՍԵՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետություն Գեղարքունիքի մարզ Սևան համայնք
ք. Սևան, Նաիրյան փ. 164, (0261) 2-43-23, 4-00-00, sevan.gegharquniq@mta.gov.am

ՈՐՈՇՈՒՄ

10 փետրվարի 2023 թվականի թիվ 152-Ա

ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի 1-ին կետի 24)-րդ ենթակետով, ՀՀ կառավարության՝ 29.12.2005թ. թիվ 2387-Ն որոշմամբ և հիմք ընդունելով Գեղարքունիքի մարզ, գ. Ծովագյուղ, 1-ին թաղամաս, շենք 1 թիվ 19 բնակարանի բնակիչ Սուսաննա Մկրտչյանի դիմումը՝ ըստ օրենքի ժառանգության իրավունքի վկայագրի իրեն պատկանող, Գեղարքունիքի մարզ, գ. Ծովագյուղ, 1-ին թաղամաս, 1 շենք, 19 բնակարան հասցեում գտնվող բնակարանի /կադաստրային ծածկագիր՝ 05-049-0134-0001-001 / համար նոր հասցե տրամադրելու մասին, **որոշում եմ.**

1. Գեղարքունիքի մարզ, գ. Ծովագյուղ, 1-ին թաղամաս, 1 շենք, 19 բնակարան հասցեում գտնվող բնակարանի համար տրամադրել Սևան համայնք, գ. Ծովագյուղ, 1-ին թաղամաս, 1 շենք, 19 բնակարան հասցե:
2. Սույն որոշումը հիմք է պետական գրանցում ստանալու համար:
3. Սույն որոշումն ուժի մեջ է՝ Սուսաննա Մկրտչյանին սույն որոշման ընդունման մասին իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՍԱՐԳԻՍ ՄՈՒՐԱԴՅԱՆ

2023 թվականի փետրվարի 10
ք.Սևան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶ
ՍԵՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետություն Գեղարքունիքի մարզ Սևան համայնք
ք. Սևան, Նաիրյան փ. 164, (0261) 2-43-23, 4-00-00, sevan.gegharquniq@mta.gov.am

ՈՐՈՇՈՒՄ

10 փետրվարի 2023 թվականի թիվ 153-Ա

ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի 1-ին կետի 24)-րդ ենթակետով, ՀՀ կառավարության՝ 29.12.2005թ. թիվ 2387-Ն որոշմամբ և հիմք ընդունելով Գեղարքունիքի մարզ, գ. Զովաբեր, 6-րդ փողոց թիվ 10 տան բնակիչ Արմեն Մկրտչյանի դիմումը՝ համատեղ սեփականության իրավունքով Արմեն և Վարդուշ Մկրտչյաններին պատկանող, Գեղարքունիքի մարզ, գ. Զովաբեր, 6-րդ փողոց թիվ 10 հասցեում գտնվող տնամերձի / վկայական՝ 942274 / համար նոր հասցե տրամադրելու մասին, **որոշում եմ.**

1. Գեղարքունիքի մարզ, գ. Զովաբեր, 6-րդ փողոց թիվ 10 հասցեում գտնվող տնամերձի համար տրամադրել Սևան համայնք, գ. Զովաբեր, 6-րդ փողոց թիվ 10 բնակելի տուն հասցե:
2. Սույն որոշումը հիմք է պետական գրանցում ստանալու համար:
3. Սույն որոշումն ուժի մեջ է՝ Արմեն Մկրտչյանին սույն որոշման ընդունման մասին իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՍԱՐԳԻՍ ՄՈՒՐԱԴՅԱՆ

2023 թվականի փետրվարի 10
ք.Սևան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶ
ՍԵՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետություն Գեղարքունիքի մարզ Սևան համայնք
ք. Սևան, Նաիրյան փ. 164, (0261) 2-43-23, 4-00-00, sevan.gegharquniq@mta.gov.am

ՈՐՈՇՈՒՄ

10 փետրվարի 2023 թվականի թիվ 154-Ա

ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի 1-ին կետի 24)-րդ ենթակետով, ՀՀ կառավարության՝ 29.12.2005թ. թիվ 2387-Ն որոշմամբ և հիմք ընդունելով Գեղարքունիքի մարզ, գ. Դդմաշեն, 1-ին փողոց, 2-րդ նրբանցք թիվ 6 տան բնակիչ Վիգեն Սմբատյանի դիմումը՝ Գեղարքունիքի մարզ, գ. Դդմաշեն, տնամերձ հասցեում գտնվող հողամասի /կադաստրային ծածկագիր՝ 05-030-0062-0017, վկայական՝ 1049666, տրված՝ 24.09.2003թ./ համար նոր հասցե տրամադրելու մասին, **որոշում եմ.**

1. Գեղարքունիքի մարզ, գ. Դդմաշեն, տնամերձ հասցեում գտնվող անշարժ գույքի համար տրամադրել Սևան համայնք, գ. Դդմաշեն, 1-ին փողոց, 1-ին նրբանցք թիվ 18 հողամաս հասցե:
2. Սույն որոշումը հիմք է պետական գրանցում ստանալու համար:
3. Սույն որոշումն ուժի մեջ է՝ Վիգեն Սմբատյանին սույն որոշման ընդունման մասին իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՍԱՐԳԻՍ ՄՈՒՐԱԴՅԱՆ

2023 թվականի փետրվարի 10
ք.Սևան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶ
ՍԵՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետություն Գեղարքունիքի մարզ Սևան համայնք
ք. Սևան, Նաիրյան փ. 164, (0261) 2-43-23, 4-00-00, sevan.gegharquniq@mta.gov.am

ՈՐՈՇՈՒՄ

10 փետրվարի 2023 թվականի թիվ 155-Ա

ԲՆԱԿԵԼԻ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՍԵՓԱԿԱՆ ԳՈՒՅՔ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի 1-ին կետի 24)-րդ ենթակետով, ՀՀ Հողային օրենսգրքի 64-րդ հոդվածի 2-րդ և 3-րդ կետերով, 28.06.2008թ. ՀՕ-117-Ն օրենքի 1-ին հոդվածով, ՀՀ կառավարության՝ 29.12.2005թ. թիվ 2387-Ն որոշմամբ և հիմք ընդունելով Գեղարքունիքի մարզ, գ. Դդմաշեն, 7-րդ փողոց, 14 տան բնակիչ Կիմա Ներսիսյանի դիմումը՝ Դդմաշենի սեփականաշնորհման տեղական հանձնաժողովի՝ 20.04.1992թ. N12 որոշմամբ Գեղարքունիքի մարզ, գ. Դդմաշեն, 7-րդ փողոց 14 հասցեում անհատական բնակելի տան կառուցման համար իրեն հատկացված 2700քմ մակերեսով հողատարածքը, մինչև 2001թ. մայիսի 15-ը կառուցված բնակելի նշանակության շինությունները սեփական գույք ճանաչելու մասին, ինչպես նաև նկատի ունենալով, որ դրանք չեն գտնվում ՀՀ Հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով սահմանված հողամասերի վրա, որոնց պահպանումը չի խախտում այլ անձանց իրավունքները և օրենքով պահպանվող շահերը կամ վտանգ չի սպառնում քաղաքացիների կյանքին ու առողջությանը, կառուցված չեն ինժեներատրանսպորտային օբյեկտների օտարման կամ անվտանգության գոտիներում կամ կառուցված չեն քաղաքաշինական նորմերի ու կանոնների էական խախտումներով և չեն առաջացնում հարկադիր սերվիտուտ պահանջելու իրավունք, **որոշում եմ.**

1. Դդմաշենի սեփականաշնորհման տեղական հանձնաժողովի՝ 20.04.1992թ. N12 որոշմամբ Գեղարքունիքի մարզ, գ. Դդմաշեն, 7-րդ փողոց, 14 հասցեում գտնվող, Կիմա Գարեգինի Ներսիսյանին /ծնված՝ 00.00.1942թ./ անհատական բնակելի տան կառուցման և սպասարկման համար հատկացված և նրա կողմից փաստացի օգտագործվող 2676.9քմ մակերեսով հողատարածքի նկատմամբ ճանաչել Կիմա Ներսիսյանի սեփականության իրավունքը:
2. Գեղարքունիքի մարզ, գ. Դդմաշեն, 7-րդ փողոց 14 հասցեում գտնվող 2676.9քմ հողատարածքում 1937թ. կառուցված 91.75քմ մակերեսով բնակելի տունը /ներքին մակերեսը՝62.56քմ/, 92.08քմ մակերեսով անասնաշենքը /ներքին մակերեսը՝80.61քմ/ ճանաչել Կիմա Ներսիսյանի սեփական գույքը՝ տրամադրելով Սևան համայնք, գ. Դդմաշեն, 7-րդ փողոց, 14 բնակելի տուն հասցե:
3. Սույն որոշումն ուժի մեջ է՝ Կիմա Ներսիսյանին սույն որոշման ընդունման մասին իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՍԱՐԳԻՍ ՄՈՒՐԱԴՅԱՆ

2023 թվականի փետրվարի 10
ք.Սևան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶ
ՍԵՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետություն Գեղարքունիքի մարզ Սևան համայնք
ք. Սևան, Նաիրյան փ. 164, (0261) 2-43-23, 4-00-00, sevan.gegharquniq@mta.gov.am

ՈՐՈՇՈՒՄ

13 փետրվարի 2023 թվականի թիվ 156-Ա

ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի 1-ին կետի 24)-րդ ենթակետով, ՀՀ կառավարության՝ 29.12.2005թ. թիվ 2387-Ն որոշմամբ և հիմք ընդունելով Սևան համայնք, գ. Վարսեր, 1-ին փողոց թիվ 3 տան բնակիչ Ժուլետա Բադալյանի դիմումը՝ Վարսեր համայնքի սեփականաշնորհման տեղական հանձնաժողովի՝ 22.04.1991թ. թիվ 7 նիստի որոշմամբ իրենց հատկացված անշարժ գույքի /կադաստրային ծածկագիր՝ 05-086-0034-0034/ համար նոր հասցե տրամադրելու մասին, **որոշում եմ.**

1. Վարսեր համայնքի սեփականաշնորհման տեղական հանձնաժողովի՝ 22.04.1991թ. թիվ 7 նիստի որոշմամբ Ժուլետա Բադալյանին հատկացված անշարժ գույքի համար տրամադրել Սևան համայնք, գ. Վարսեր, 1-ին փողոց, 3-րդ նրբանցք թիվ 3 բնակելի տուն հասցե:
2. Սույն որոշումը հիմք է պետական գրանցում ստանալու համար:
3. Սույն որոշումն ուժի մեջ է՝ Ժուլետա Բադալյանին սույն որոշման ընդունման մասին իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՍԱՐԳԻՍ ՄՈՒՐԱԴՅԱՆ

2023 թվականի փետրվարի 13
ք.Սևան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶ
ՍԵՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետություն Գեղարքունիքի մարզ Սևան համայնք
ք. Սևան, Նաիրյան փ. 164, (0261) 2-43-23, 4-00-00, sevan.gegharquniq@mta.gov.am

ՈՐՈՇՈՒՄ

13 փետրվարի 2023 թվականի թիվ 157-Ա

ՕԳՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՏԿԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի 1-ին կետի 24)-րդ ենթակետով՝ **որոշում եմ.**

1. Համայնքի 2023թվականի բյուջեով նախատեսված / բաժին 10, խումբ 7, դաս 1, հոդված 4729 / օգնությունների գումարից՝ 316.240 դրամ, ըստ կից հավելվածի, հատկացնել քաղաքացիներին:
2. Սույն որոշումն ուժի մեջ է՝ պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՍԱՐԳԻՍ ՄՈՒՐԱԴՅԱՆ

2023 թվականի փետրվարի 13
ք.Սևան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶ
ՍԵՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետություն Գեղարքունիքի մարզ Սևան համայնք
ք. Սևան, Նաիրյան փ. 164, (0261) 2-43-23, 4-00-00, sevan.gegharquniq@mta.gov.am

ՈՐՈՇՈՒՄ

13 փետրվարի 2023 թվականի թիվ 158-Ա

ԱՎԱՐՏԱԿԱՆ ԱԿՏ (ՇԱՀԱԳՈՐԾՄԱՆ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ) ՁԵՎԱԿԵՐՊԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 42-րդ հոդվածի 1-ին կետի 7-րդ ենթակետի, Հայաստանի Հանրապետության կառավարության՝ 2015 թվականի մարտի 19-ի N 596-Ն որոշման, Սևան համայնքի ավագանու՝ 14.12.2022թ. N108-Ն որոշման 2-րդ կետի և հաշվի առնելով քաղ. Արմեն Եսայանի լիազոր անձ Իրինա Փիլոյանի դիմումը՝ **որոշում եմ.**

1. Ձևակերպել կառուցապատող Արմեն Եսայանի կողմից իրականացված՝ ՀՀ Գեղարքունիքի մարզ, գ. Ծովագյուղ, Սևան-Ճամբարակ խճուղի 8.4կմ թիվ 1 հասցեում հանգստի գոտու շահագործման թույլտվությունը:
2. Սույն որոշումն ուժի մեջ է՝ Արմեն Եսայանի լիազոր անձ Իրինա Փիլոյանին որոշման ընդունման մասին իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՍԱՐԳԻՍ ՄՈՒՐԱԴՅԱՆ

2023 թվականի փետրվարի 13
ք.Սևան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶ
ՍԵՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետություն Գեղարքունիքի մարզ Սևան համայնք
ք. Սևան, Նաիրյան փ. 164, (0261) 2-43-23, 4-00-00, sevan.gegharquniq@mta.gov.am

ՈՐՈՇՈՒՄ

14 փետրվարի 2023 թվականի թիվ 159-Ա

ՀՈՂԱՏԱՐԱԾՔԻ ԱՃՈՒՐԴ-ՎԱՃԱՌՔԻ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի 1-ին կետի 24)-րդ ենթակետով, ՀՀ Հողային օրենսգրքի 70-րդ հոդվածով, Սևան համայնքի ավագանու՝ 10.03.2022թ. N26-Ա, 27-Ն որոշումներով և հիմք ընդունելով 13.02.2023թ. կայացած աճուրդ-վաճառքի արդյունքների վերաբերյալ կազմված արձանագրությունները՝ **որոշում եմ.**

1. Գեղարքունիքի մարզ, Սևան համայնք, գ. Գագարին, Գայի փողոց թիվ 3 / 48 հողամաս հասցեում գտնվող, ՀՀ Հողային օրենսգրքի 60-րդ հոդվածին չհամապատասխանող, հասարակական նշանակության համար նախատեսված 86.4քմ մակերեսով հողատարածքը, ըստ աճուրդ-վաճառքի արդյունքների՝ 1քմ՝ 1282.36 դրամ, օտարել աճուրդում հաղթող ճանաչված, Գեղարքունիքի մարզ, Սևան համայնք, գ. Գագարին, Գայի փողոց 2 / 2 բնակարանի բնակիչ Մարտիկ Յուրիկի Մարգարյանին:
2. Սակարկությունների ժամանակ ձևավորված գինը գնորդի կողմից 10 օրվա ընթացքում համայնքի բյուջե մուծելու դեպքում՝ վերջինիս հետ կնքել հողամասի օտարման պայմանագիր:
3. Զգուշացնել Մարտիկ Յուրիկի Մարգարյանին՝ հատկացված տարածքում շինարարական աշխատանքներն սկսել միայն համապատասխան շինարարական փաստաթղթերի փաթեթը համայնքապետարանի հետ համաձայնեցնելուց և շինարարության թույլտվություն ստանալուց հետո:
4. Սույն որոշմամբ ձեռք բերված հողամասի սեփականության իրավունքը ենթակա է պետական գրանցման:
5. Սույն որոշումն ուժի մեջ է՝ պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՍԱՐԳԻՍ ՄՈՒՐԱԴՅԱՆ

2023 թվականի փետրվարի 14
ք.Սևան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶ
ՍԵՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետություն Գեղարքունիքի մարզ Սևան համայնք
ք. Սևան, Նաիրյան փ. 164, (0261) 2-43-23, 4-00-00, sevan.gegharquniq@mta.gov.am

ՈՐՈՇՈՒՄ

14 փետրվարի 2023 թվականի թիվ 160-Ա

ՀՈՂԱՏԱՐԱԾՔԻ ԱՃՈՒՐԴ-ՎԱՃԱՌՔԻ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի 1-ին կետի 24)-րդ ենթակետով, ՀՀ Հողային օրենսգրքի 70-րդ հոդվածով, Սևան համայնքի ավագանու՝ 10.03.2022թ. N26-Ա, 27-Ն որոշումներով և հիմք ընդունելով 13.02.2023թ. կայացած աճուրդ-վաճառքի արդյունքների վերաբերյալ կազմված արձանագրությունները՝ **որոշում եմ.**

1. Գեղարքունիքի մարզ, Սևան համայնք, ք. Սևան, Ֆրանսիական փողոց 27 հողամաս հասցեում գտնվող, ՀՀ Հողային օրենսգրքի 60-րդ հոդվածին չհամապատասխանող, բնակելի նշանակության համար նախատեսված 160 քմ մակերեսով հողատարածքը, ըստ աճուրդ-վաճառքի արդյունքների՝ 1քմ՝ 4553,05 դրամ, օտարել աճուրդում հաղթող ճանաչված, Գեղարքունիքի մարզ, Սևան համայնք, ք. Սևան Նալբանդյան փողոց 40 շենք, 10 բնակարանի բնակիչ Հայկ Կարենի Բաբայանին:
2. Սակարկությունների ժամանակ ձևավորված գինը գնորդի կողմից 10 օրվա ընթացքում համայնքի բյուջե մուծելու դեպքում՝ վերջինիս հետ կնքել հողամասի օտարման պայմանագիր:
3. Զգուշացնել Հայկ Կարենի Բաբայանին՝ հատկացված տարածքում շինարարական աշխատանքներն սկսել միայն համապատասխան շինարարական փաստաթղթերի փաթեթը համայնքապետարանի հետ համաձայնեցնելուց և շինարարության թույլտվություն ստանալուց հետո:
4. Սույն որոշմամբ ձեռք բերված հողամասի սեփականության իրավունքը ենթակա է պետական գրանցման:
5. Սույն որոշումն ուժի մեջ է՝ պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՍԱՐԳԻՍ ՄՈՒՐԱԴՅԱՆ

2023 թվականի փետրվարի 14
ք.Սևան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶ
ՍԵՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետություն Գեղարքունիքի մարզ Սևան համայնք
ք. Սևան, Նաիրյան փ. 164, (0261) 2-43-23, 4-00-00, sevan.gegharquniq@mta.gov.am

ՈՐՈՇՈՒՄ

14 փետրվարի 2023 թվականի թիվ 161-Ա

ՀՈՂԱՏԱՐԱԾՔԻ ԱՃՈՒՐԴ-ՎԱՃԱՌՔԻ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի 1-ին կետի 24)-րդ ենթակետով, ՀՀ Հողային օրենսգրքի 70-րդ հոդվածով, Սևան համայնքի ավագանու՝ 10.03.2022թ. N26-Ա, 27-Ն որոշումներով և հիմք ընդունելով 13.02.2023թ. կայացած աճուրդ-վաճառքի արդյունքների վերաբերյալ կազմված արձանագրությունները՝ **որոշում եմ.**

1. Գեղարքունիքի մարզ, Սևան համայնք, գ. Լճաշեն, 17-րդ փողոց 6 հողամաս հասցեում գտնվող, ՀՀ Հողային օրենսգրքի 60-րդ հոդվածին չհամապատասխանող, բնակելի նշանակության համար նախատեսված 1197.7քմ մակերեսով հողատարածքը, ըստ աճուրդ-վաճառքի արդյունքների՝ 1քմ՝ 811.8 դրամ, օտարել աճուրդում հաղթող ճանաչված, Գեղարքունիքի մարզ, Սևան համայնք, գ. Լճաշեն, 27-րդ փողոց, 3 տուն հասցեի բնակիչ Վահե Հակոբի Կարապետյանին:
2. Սակարկությունների ժամանակ ձևավորված գինը գնորդի կողմից 10 օրվա ընթացքում համայնքի բյուջե մուծելու դեպքում՝ վերջինիս հետ կնքել հողամասի օտարման պայմանագիր:
3. Զգուշացնել Վահե Հակոբի Կարապետյանին՝ հատկացված տարածքում շինարարական աշխատանքներն սկսել միայն համապատասխան շինարարական փաստաթղթերի փաթեթը համայնքապետարանի հետ համաձայնեցնելուց և շինարարության թույլտվություն ստանալուց հետո:
4. Սույն որոշմամբ ձեռք բերված հողամասի սեփականության իրավունքը ենթակա է պետական գրանցման:
5. Սույն որոշումն ուժի մեջ է՝ պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՍԱՐԳԻՍ ՄՈՒՐԱԴՅԱՆ

2023 թվականի փետրվարի 14
ք.Սևան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶ
ՍԵՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետություն Գեղարքունիքի մարզ Սևան համայնք
ք. Սևան, Նաիրյան փ. 164, (0261) 2-43-23, 4-00-00, sevan.gegharquniq@mta.gov.am

ՈՐՈՇՈՒՄ

14 փետրվարի 2023 թվականի թիվ 162-Ա

ԲՆԱԿԱՐԱՆԱՅԻՆ ՊԱՅՄԱՆՆԵՐԻ ԲԱՐԵԼԱՎՄԱՆ ԿԱՐԻՔ ՈՒՆԵՑՈՂ ԱՌԱՋԻՆ ԽՄԲԻ ԶԻՆՀԱՇՄԱՆԴԱՄԻ ԸՆՏԱՆԻՔԻ ԱՄՓՈՓ ՑՈՒՑԱԿԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի 1-ին կետի 24)-րդ ենթակետով, ՀՀ կառավարության՝ 09.06.2005թ. «Անհատույց պետական ֆինանսական աջակցություն տրամադրելու մասին» N947-Ն որոշման պահանջներով, հիմք ընդունելով ՀՀ կառավարության 2018թ. դեկտեմբերի 6-ի N 1419-Ն որոշմամբ սահմանված հավելվածի պահանջները և ՀՀ Գեղարքունիքի մարզ, Սևան համայնք, գ. Ծովագյուղ, 4 փող., 8 տուն հասցեում հաշվառված, 2020թ. 44-օրյա պատերազմի մասնակից, պայմանագրային զինծառայող, առաջին խմբի զինհաշմանդամ Վարազդատ Սարիբեկի Սանեյանի լիազոր անձ Լիաննա Գևորգի Սանեյանի դիմումը, դիմումին կից ներկայացված փաստաթղթերը, Սևանի համայնքապետարանում գործող բնակարանային հարցերի հանձնաժողովի կողմից տրված եզրակացությունը՝

որոշում եմ.

1. Հաստատել բնակարանային պայմանների բարելավման կարիք ունեցող, ՀՀ Գեղարքունիքի մարզ, Սևան համայնք, գ. Ծովագյուղ, 4 փող., 8 տուն հասցեի բնակիչ, առաջին խմբի զինհաշմանդամ Վարազդատ Սարիբեկի Սանեյանի ընտանիքի՝ բնակարանային հաշվառման ամփոփ ցուցակը՝ համաձայն Ձև N3, և ընդգրկել բնակարանի բարելավման կարիքավոր շահառուների ցուցակում:
2. Սույն որոշումը և Սևանի տեղական ինքնակառավարման մարմնում բնակարանային հաշվառման ընդգրկված զինհաշմանդամ, նախկին զինծառայողի ընտանիքի ամփոփ ցուցակը /Ձև N3/ սահմանված կարգով ներկայացնել ՀՀ Գեղարքունիքի մարզպետարան:
3. Սույն որոշումն ուժի մեջ է՝ պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՍԱՐԳԻՍ ՄՈՒՐԱԴՅԱՆ

2023 թվականի փետրվարի 14
ք.Սևան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶ
ՍԵՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետություն Գեղարքունիքի մարզ Սևան համայնք
ք. Սևան, Նաիրյան փ. 164, (0261) 2-43-23, 4-00-00, sevan.gegharquniq@mta.gov.am

ՈՐՈՇՈՒՄ

14 փետրվարի 2023 թվականի թիվ 163-Ա

ԻՆՔՆԱԿԱՄ ԿԱՌՈՒՑՎԱԾ ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆ ՕՐԻՆԱԿԱՆԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի 1-ին կետի 24)-րդ ենթակետով, ՀՀ Քաղաքացիական օրենսգրքի 188-րդ հոդվածի 4-րդ կետով, ՀՀ կառավարության՝ 29.12.2005թ. N 2387-Ն, 18.05.2006թ. N731-Ն որոշումներով, ՀՀ կառավարության՝ 18.05.2006թ. թիվ 912-Ն որոշման 3-րդ, 33-րդ կետերով, «Քաղաքաշինության մասին» ՀՀ օրենքի 14^3 հոդվածով, հիմք ընդունելով ք. Սևան, Նալբանդյան փողոց թիվ 44 / 25 բնակարանի բնակիչ Անահիտ Շահինյանի դիմումը՝ ք. Սևան, Նալբանդյան փողոցի թիվ 44 շենքի հարևանությամբ՝ ավտոտնակների շարքում, իր կողմից ինքնակամ կառուցված 30.12քմ մակերեսով ավտոտնակն օրինականացնելու մասին, ինչպես նաև հաշվի առնելով, որ շինությունը կառուցված է համայնքային սեփականություն հանդիսացող հողատարածքի վրա, որի նկատմամբ ՀՀ Հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով սահմանված սահմանափակումներ չկան, որ կառույցի պահպանումը չի խախտում այլ անձանց իրավունքները և օրենքով պահպանվող շահերը կամ վտանգ չի սպառնում քաղաքացիների կյանքին ու առողջությանը, կառուցված չէ ինժեներատրանսպորտային օբյեկտների օտարման կամ անվտանգության գոտիներում կամ կառուցված չէ քաղաքաշինական նորմերի ու կանոնների էական խախտումներով և չի առաջացնում հարկադիր սերվիտուտ պահանջելու իրավունք, **որոշում եմ.**

1. Ք. Սևան Նալբանդյան փողոցի թիվ 44 շենքի հարևանությամբ՝ ավտոտնակների շարքում, Անահիտ Նաստարակի Շահինյանի կողմից ինքնակամ կառուցված 30.12քմ մակերեսով ավտոտնակը /ներքին մակերեսը՝ 27.93քմ/, 12.44քմ մակերեսով նկուղը/ ներքին մակերես ը՝9.42քմ/, զբաղեցրած 30.12քմ մակերեսով հողատարածքը ճանաչել համայնքային սեփականություն, հողամասի գործառնական նշանակությունը համարել փոփոխված՝ բնակավայրի ընդհանուրից՝ բնակավայրի բնակելի կառուցապատման:
2. Անահիտ Շահինյանի կողմից ինքնակամ կառուցված 30.12քմ մակերեսով ավտոտնակը ճանաչել օրինական /հաշվառման տեղեկանք՝ 2023TZSC5R/՝ տրամադրելով Սևան համայնք, ք. Սևան, Նաիրյան փողոց թիվ 179 / 19 ավտոտնակ հասցե:
3. Նկատի ունենալով, որ թույլ է տրվել ինքնակամություն, ուստի ինքնակամ կառույցի օրինականացման, պետական գրանցման, այդ թվում՝ համայնքային սեփականության ճանաչման և գրանցման ծախսերն իրականացվում են ինքնակամ կառույցն իրականացնողի միջոցներով:
4. Սույն որոշմամբ ծագող սեփականության իրավունքը ենթակա է պետական գրանցման:
5. Սույն որոշումն ուժի մեջ է՝ Անահիտ Շահինյանին սույն որոշման ընդունման մասին իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՍԱՐԳԻՍ ՄՈՒՐԱԴՅԱՆ

2023 թվականի փետրվարի 14
ք.Սևան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶ
ՍԵՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետություն Գեղարքունիքի մարզ Սևան համայնք
ք. Սևան, Նաիրյան փ. 164, (0261) 2-43-23, 4-00-00, sevan.gegharquniq@mta.gov.am

ՈՐՈՇՈՒՄ

14 փետրվարի 2023 թվականի թիվ 164-Ա

ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի 1-ին կետի 24)-րդ ենթակետով, ՀՀ կառավարության՝ 29.12.2005թ. թիվ 2387-Ն որոշմամբ և հիմք ընդունելով Շուշան, Վահե, Ելենա Պողոսյանների լիազոր անձ ք. Սևան, Սայաթ-Նովա փողոցի թիվ 15 / 12 բնակարանի բնակիչ Անդրանիկ Մելոյանի դիմումը՝ ընդհանուր բաժնային սեփականության իրավունքով Շուշան, Վահե, Ելենա Պողոսյաններին պատկանող, Սևան համայնք, ք.Սևան, Նալբանդյան փողոց թիվ 41 / 27, Սևան համայնք, ք. Սևան, Նալբանդյան փողոց թիվ 41 / 2-1,2 հասցեներում գտնվող անշարժ գույքերը միավորելու և միավորված անշարժ գույքի համար նոր հասցե տրամադրելու մասին, **որոշում եմ.**

1. Սևան համայնք, ք. Սևան, Նալբանդյան փողոց թիվ 41 / 27 և Սևան համայնք, ք. Սևան, Նալբանդյան փողոց թիվ 41 / 2-1,2 հասցեներում գտնվող անշարժ գույքերը միավորել՝ տրամադրելով Սևան համայնք, ք. Սևան, Մ. Նալբանդյան փողոց թիվ 41 / 27 առևտրի սրահ հասցե:
2. Սույն որոշումը հիմք է պետական գրանցում ստանալու համար:
3. Սույն որոշումն ուժի մեջ է՝ Շուշան, Վահե, Ելենա Պողոսյանների լիազոր անձ Անդրանիկ Մելոյանին սույն որոշման ընդունման մասին իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՍԱՐԳԻՍ ՄՈՒՐԱԴՅԱՆ

2023 թվականի փետրվարի 14
ք.Սևան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶ
ՍԵՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետություն Գեղարքունիքի մարզ Սևան համայնք
ք. Սևան, Նաիրյան փ. 164, (0261) 2-43-23, 4-00-00, sevan.gegharquniq@mta.gov.am

ՈՐՈՇՈՒՄ

14 փետրվարի 2023 թվականի թիվ 165-Ա

ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի 1-ին կետի 24)-րդ ենթակետով, ՀՀ կառավարության՝ 29.12.2005թ. թիվ 2387-Ն որոշմամբ և հիմք ընդունելով Գեղարքունիքի մարզ, գ. Վարսեր, 1-ին փողոց թիվ 84 տան բնակիչ Նորիկ Սամսոնյանի դիմումը՝ ընդհանուր համատեղ սեփականության իրավունքով իրեն պատկանող, Սևան համայնք, գ. Վարսեր հասցեում գտնվող անշարժ գույքի / վկայական՝ 08022023-05-0067 / համար նոր հասցե տրամադրելու մասին, **որոշում եմ.**

1. Սևան համայնք, գ. Վարսեր հասցեում գտնվող անշարժ գույքի համար տրամադրել Սևան համայնք, գյուղ Վարսեր, 1-ին փողոց, 84 բնակելի տուն հասցե:
2. Սույն որոշումը հիմք է պետական գրանցում ստանալու համար:
3. Սույն որոշումն ուժի մեջ է՝ Նորիկ Սամսոնյանին սույն որոշման ընդունման մասին իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

